



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

72AP

Ե-38

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱԶԻԶԲԵԿՈՎԻ  
ՇՐՋԱՆԻ  
ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ  
ՀՈՒՇԱՐՋԱՆՆԵՐԸ



ՀԱՅՊԵՏԿՐԱՏ




5  
22.841

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ՄԻՆԻՍԻՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՅ ՀԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆ

ՀՀԱՐ  
17-38

Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱԶԻԶՐԵԿՈՎԻ  
ՃՐՋԱՆԻ  
ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ  
ՀՈՒՇԱՐՋԱՆՆԵՐԸ



ԵՐԵՎԱՆ

Հ Ա Յ Պ Ե Տ Ր Ա Տ





ЕГИАЗАРЯН О.  
ПАМЯТНИКИ КУЛЬТУРЫ  
АЗИЗБЕКОВСКОГО РАЙОНА

(На армянском языке)

Армянское государственное издательство (Айпетрат),  
Ереван — 1955



7633-2003



ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Սյունիքը Հայաստանի նշանավոր նահանգներից մեկն է եղել, բաղկացած 12 գավառներից: Սյունյաց կամ Սիսական նահանգը ընդգրկում է արդի Նոր Բայազետի, Մարտունու, Բասարգեշարի, Ազիզբեկովի, Սիսիանի, Գորիսի, Ղափանի և Մեղրու շրջանները, Սեանի շրջանի մի մասը և մի շարք այլ վայրեր:

Ազիզբեկովի շրջանը կազմում էր պատմական Սյունյաց նահանգի Վայոց ձոր կամ Եղեգյաց ձոր գավառը, որն ամենամեծ գավառներից էր նահանգում և բռնում էր Արփա գետի ավազանը:

Պատմական աղբյուրները, մինչև 7-րդ դարը, շատ աղոտ տեղեկություններ են պարունակում Սյունիքի, հատկապես Վայոց ձոր գավառի մասին: Սիստեմատիկ հնագիտական հետազոտություններ ևս չեն կատարվել՝ գավառի ավելի վաղ շրջանի պատմությունը լրացնելու և ճշտելու համար: Սակայն նրա բնական և կլիմայական պայմանները միանգամայն նպաստավոր են եղել նույնիսկ նախնադարյան մարդու գոյության համար: Մատենագրական առանձին վկայություններից երեւում է, որ Վայոց ձորը հնում ունեցել է փարթամ բուսականություն, ընդարձակ ու խիտ անտառներ: Հնագիտական թուղթիկ պեղումների և պատահական փորումների ժամանակ հայտնաբերված նյութական կուլտուրայի մնացորդները հաս-



տատում են, որ մարդը Հայաստանի այս մասում նույնպես  
սպրել է շատ վաղ ժամանակներից:

Հայտնի է, թե Վալոց ձորը Ուրարտական պետության  
կազմի մեջ եղել է թե ոչ, բայց հայտնի է, որ հայկական  
պետականության ամենավաղ շրջանից հանդիսացել է նրա  
անբաժան գավառներից մեկը: 3—5-րդ դարերում Սյունիքում  
միաժամանակ հիշատակվում են ավելի քան քսան գավառա-  
պետ իշխաններ:

Արշակունիների թագավորության ժամանակ Սյունյաց իշ-  
խաններին հանձնարարված է եղել Հայաստանի արևելյան  
սահմանների պաշտպանությունը, կամ, ինչպես ասում են հայ  
պատմիչները, Սյունիքի նախարարները հանդիսացել են  
«գորագլուխք արևելյան բանակին»:

Չորրորդ դարի 2-րդ կեսին ծագած հայ-պարսկական  
պատերազմների ժամանակ խոշոր դեր է խաղում Սյունիքը:  
Հայտնի է, որ դեռ այդ պատերազմներից առաջ Սյունյաց  
նահապետ Անդոկ իշխանը, օգտվելով Շապուհի բացակայու-  
թյունից, հարձակվում է Պարսից մայրաքաղաք Տիզբոնի  
վրա և ավարի մատնում արքունական գանձերը: Շապուհը  
363 թվին պաշարում է Բաղաբերդը, Անդոկը ձեռքում է թշնա-  
մու շղթան և դուրս գալիս պաշարումից: Պարսիկները գրա-  
վում են ամբողջ և մեծ ավերածություններ ու կոտորածներ  
սարքում Սյունիքի գավառներում: Ամբողջ 25 տարի Սյունիքի  
գավառները, որոնց թվում նաև Վալոց ձորը, ենթարկվում են  
պարսկական զորքերի խժոժություններին: Այս ամենը սա-  
կայն չեն ընկճում ուղմիկ սյունեցիներին, այլ ավելի են  
գրգռում նրանց վրիժառությունը: Պարսից արքունիքը դիմում  
է զիջումների քաղաքականության. Անդոկի որդի քաջ Բաբելը  
ես է ստանում իր հայրենի երկրի՝ Սյունիքի նախարարու-  
թյունը:

Մերոպ Մաշտոցի կողմից հայոց տառերի հորինումը  
նոր դարագլուխ է բացում հայոց պատմության և ընդհանրա-  
պես հայ կուլտուրայի զարգացման ասպարեկում: Սյունիքը  
զերծ չի մնում այդ ընդհանուր կուլտուրական շինարարու-  
թյունից: Անձամբ Սյունիք է գալիս Մերոպ Մաշտոցը, այ-

ցելում է նաև Վալոց ձորը և ամենուրեք ձեռնարկում է նույն  
կուլտուր-շինարարական աշխատանքին:

Ստեփանոս Օրբելյանը վերապատմելով Ավարայրի ճակա-  
տամարտից հետո պարսիկների կատարած գաղանուկություննե-  
րի մանրամասնությունները, ավելացնում է, թե ինչպես հայ  
զինվորների մի մեծ խումբ, Մարտիրե անունով զորապետի  
պլխավորությամբ փորձում է Վալոց ձորի վրայով անցնել Ար-  
ցախ նահանգը: Սակայն Վալոց ձորում նրանք հարկադրված  
են լինում չորս անգամ կատաղի և անհավասար կռվի բռնվել  
հեռապնդող պարսից զորքերի հետ:

Այդ տեղեկությունները որոշակի կերպով ցույց են տալիս,  
որ հայ ժողովուրդը Ավարայրի ճակատամարտի անհաջող  
էլքից հետո էլ չղաղարեցրեց պաշարը պարսից նվաճողների  
դեմ, այլ նա կազմակերպված և լայն շափերով շարունակեց  
պարտիզանական պայքարը իր հայրենի երկրի ազատության  
և անկախության համար:

Հայ ժողովուրդը, այդ թվում նաև Սյունիքի աշխատավո-  
րությունը, դեռ չէր բուժել օտար նվաճողների կողմից նրանց  
հասցրած ծանր վերքերը, երբ սկիզբ է առնում մի նոր, սոս-  
կայի աղետ՝ արաբական արշավանքները:

Արաբները Հայաստանի վրա առաջին անգամ արշավում  
են 640 թվին հարավից՝ չորրորդ Հայքից ու Մուշից, սակայն  
ջարկվում և ետ են նահանջում: Երկրորդ արշավանքը տեղի  
է ունենում 642—645 թթ., որ սկսվել էր Ատրպատականի  
կողմից. Սյունիքի վրայով, բայց Նախիջևանի մոտ նրանց  
հրոսակները մեծ ջարդ կրելով, նորից ետ են նահանջում:  
Այս կռվում մեծ դեր է խաղում Սյունյաց զորքը: Բայց և  
այնպես 7-րդ դարի երկրորդ կեսից Հայաստանը, նրա հետ և  
Սյունիքը, մինչև 9-րդ դարի երկրորդ կեսը ընկնում է արաբ  
խալիֆաների լծի տակ, թեև հայ ժողովուրդը բազմիցս  
ապստամբել է և ազատագրական արյունալի կռիվներ մղել  
արաբ գավթիչների դեմ:

727 թվին Սյունիքի վրա է արշավում արաբական Մովան  
զորավարը: Նա Նախիջևանի վրայով անցնում է Սիսիանի  
շրջանը և ամբանում պատմական Շաղատ ավանում: Այդ



ժամանակ Սյունիքին իշխում էր Վասակ Սյունին, որը Ատրք-պատականից (Ադրբեջանից) օգնություն ստանալով, Բաբանի գլխավորությամբ, հարձակվում են Մրվանի վրա, ջարդում արաբներին և դուրս բերում Սյունիքից:

Սյունյաց նահանգի վարչական կենտրոնը մինչև 8-րդ դարի վերջերը եղել է Կապան քաղաքը, որի անունով այժմ շրջանը կոչվում է Ղափան:

Սյունյաց նոր նահապետ Վասակ 4-րդը (822—848), Փիլիպե իշխանի որդին, նահանգի վարչական կենտրոնը Կապան քաղաքից փոխադրում է Վալոց ձոր՝ Եղեգիս ավանը: Դրա հետևանքով Վալոց ձոր գավառը սկսում է կոչվել նաև Եղեգյաց ձոր կամ ուղղակի Եղեգնաձոր:

Վալոց ձորի վրա արաբների կատարած հետագա հարձակումներից հիշատակելի է 923 թվին տեղի ունեցածը, որի գլխավոր հարվածն ուղղված էր Սյունյաց նահանգի վարչական կենտրոն հանդիսացող Եղեգիս քաղաքավանի վրա:

Մինչև 9-րդ դարը Վալոց ձորում կառուցված ճարտարապետական հուշարձաններից ոչ մեկը լրիվ չի պահպանվել, եթե նկատի չունենանք կոթողների և հավասարաթև խաչքարերի առանձին բեկորները, որոնք թափված են շրջանի սահմաններում: Հավանական է, որ Արատեսի վանքը (Ալսասի գյուղում) նույնպես հիմնված լինի 7-րդ դարում:

Վասակյանների տիրապետության շրջանում (9—10-րդ դարերում) հիմնադրվում է Գնդեվանքը, Հերհերի Սիոնը, Շատիվանքը, Քարկոփի կամ Խոտակերաց վանքը, Ամաղու Նորավանքը, Կնեվանքը, Արգյազի ս. Խաչ վանքը և մի շարք եկեղեցիներ ու մահարձաններ:

Բազրատունիների վասալ Սյունյաց իշխանների տիրապետության ժամանակ Եղեգիս գյուղաքաղաքը շարունակում է վարչական կենտրոն մնալ մինչև 10-րդ դարը: Այդ դարի ավերիչ երկրաշարժը, մանավանդ արաբական առանձին գորավարների կրկնվող արշավանքները Հայաստանի և Սյունիքի վրա, հարկադրեցին երկրի վարչական կենտրոնը կրկին փոխադրել Կապան:

11-րդ դարի երկրորդ կեսից սկսված սելջուկյան արշավանքների հետևանքով Հայաստանի նախարարական-իշխանական մի շարք տներ ոչնչանում, քայքայվում են: Սյունյաց իշխանները, շնորհիվ երկրի աշխարհագրական դիրքի, ոչ միայն կարողանում են պահպանել իրենց ֆիզիկական գոյությունը, այլև ամեն պատեհ առիթ օգտագործելով ձգտում են վերականգնել իրենց անկախությունը: Այդ է պատճառը, որ սելջուկների արշավանքները Սյունիքի վրա կրկնվել են մի շարք անգամներ:

12-րդ դարի վերջերից, Սյունիքի իշխանն էր Համտունը, ապա սրա որդի Հասանը, որը համարվում էր «մեծափառ իշխան Բաղաց»: Հասանի երկու որդիներից մեկը՝ Հովհաննեսը, ձեռնադրվում է եպիսկոպոս, դալիս Վալոց ձոր գավառը և հիմնում Ամաղուի Նորավանքը: Մյուս որդին՝ Համտուն երկրորդը, հաջորդում է հորը, որը հետո հրաժարվելով աշխարհիկ կյանքից, գնում է Ամաղու Նորավանք իր եղբոր՝ Հովհաննեսի մոտ և դառնում կրոնավոր ու մեռնում 1231 թ.: «Ահա գալս օրինակ բարձաւ տերութիւն Սիւնեաց եւ Քաղաց. եւ եղեւ վախճան տոհմին Սիսակայ եւ նախարարութեան Սիւնեաց, քանզի... իւրաքանչիւրքն՝ էր որ անգաւակ մնացին, եւ էր որ կեսօրեայ փոխեցան, էր որ սպանան եւ զերեցան...», — գրում է այդ ժամանակի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը:

13-րդ դարի սկզբներից սկսած Վալոց ձորի քաղաքական անցքերը անմիջապես կապված են նրա հետագա տերերի՝ Օրբելյան տոհմի իշխանների գործունեության հետ: Օրբելյան տոհմի պատմության վերաբերյալ միակ լրիվ և հավաստի աղբյուրը Սյունյաց եպիսկոպոս Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն նահանգին Սիսական» աշխատությունն է: Սյունիքի Օրբելյանները սերում են վրացական խոշոր ֆեոդալների՝ Օրբելիների տոհմից, որոնք իրենց հայրենի Վրաց աշխարհում հասել էին ընդհանուր գորահրամանատարի պաշտոնին:

Այդ Օրբելիներից մեկը, Իվանե Օրբելին, 1177 թվին ապրտամբում է վրաց Գեորգի թագավորի դեմ, բայց պարտվում



է Լոռի-բերդում: Գեորգին կոտորում է Օրբելիների ողջ տոհմը, բացի Իվաննի եղբայր Լիպարիտից և նրա երկու որդիներէց՝ Ելիկումից և Իվաննից, որոնք զնացել էին Պարսկաստան՝ Ելթիկու Աթաբեկից օգնութիւն խնդրելու:

Լիպարիտի մահից հետո, նրա որդին՝ Ելիկումը, մնում է Պարսկաստանում, Ելթիկու Աթաբեկի մոտ, իսկ Իվանն զնույն է Գանձակ և ապաստանում Գանձակի ամիրայի մոտ:

Գեորգիի մահից հետո, նրա դուստր Թամար թագուհու ժամանակ վրաց արքունիքում մեծ դիրք են գրավում Զաքարյան իշխանները՝ Սարգսի որդիներ՝ Զաքարե ու Իվանն եղբայրները: Թամար թագուհին Զաքարյաններին է հանձնում Օրբելիների կալվածքները և Լոռին, տալով Զաքարեին ամիրսպասալարութեան (գլխավոր զորահրամանատար վրաց և հայոց) պաշտոնը, իսկ Իվաննին հանձնարարելով աթաբեկութիւնը՝ արքունի խոշորագույն պաշտոններից մեկը:

Ելիկումը, մնալով Պարսկաստանում, մեծարվում է սելջուկյան սուլթանների կողմից, ստանում մեծաքանակ կալվածներ. միաժամանակ նշանակվում երեք մեծ քաղաքների՝ Ռեյի, Սպահանի և Ղազվինի կառավարիչ:

Սելջուկյան Աթաբեկ Ելթիկուզը ցանկանում է իր աղջիկը կնութեան տալ Ելիկումին և դավանափոխ անել Քրիստոս, բայց նա խուսափում է և առիթներ փնտրում հեռու լինելու սելջուկյան արքունիքից: Նա Աթաբեկ Ելթիկուզից խնդրում է Նախիջևանի կողմնակալութիւնը, որպեսզի ավելի մոտ լինի իր հայրենիքին: Աթաբեկը սիրով ընդառաջում է Ելիկումին և ուղարկում Նախիջևան:

Ելիկումը հաստատվելով Նախիջևանում, հարաբերութիւնների մեջ է մտնում Սյունյաց Ստեփանոս եպիսկոպոսի հետ, ամուսնանում նրա քրոջ աղջկա՝ Խաթունի հետ և նրանից ծնված որդուն կոչում իր հոր անունով՝ Լիպարիտ: Ելիկումը սպանվում է պատերազմներից մեկում, իսկ Խաթունին բռնի կերպով կնութեան է առնում մի սելջուկ իշխան և Լիպարիտին էլ որդեգրում՝ մոտ 10 տարի:

Այդ ժամանակ հայ-վրացական միացյալ բանակը, Զաքարե և Իվանն եղբայրների գլխավորութեամբ սելջուկներից

ազատագրել էր Հայաստանի մեծ մասը, այդ թվում նաև Սյունիքը: Իվանն Աթաբեկը իմանալով, որ Օրբելյանների տոհմից պատանի Լիպարիտը իր մոր հետ գտնվում է Նախիջևան քաղաքում, ազատել է տալիս նրանց և այդ մասին հայտնում Թամար թագուհու: Վերջինս, Իվաննի միջնորդութեամբ, Լիպարիտին նշանակում է Սյունյաց կողմնակալ իշխան, տալով նրան Սյունիքի մի զգալի մասը և բազմաթիվ այլ կալվածներ՝ Հայաստանի տարբեր մասերում: Վայոց ձոր գավառի մի մասն էլ տրվում է Պոռչյան տոհմի Վասակ Խաչենցուն: Լիպարիտը կարճ ժամանակում վերագրավում է Սյունիքի ծալրագավառների մեծ մասը:

Մի քանի տարի հետո Լիպարիտը սպանվում է Որոտան բերդի մոտ՝ պատահական նետից, և նրան թաղում են Նորավանքում՝ իր մոր մոտ: Լիպարիտն ուներ հինգ որդի՝ Ելիկում, որը փոխարինում է հորը, Սմբատ, Իվանն, Փոխրադղա և Տարսաիծ:

1225 թ. Խորեզմի Զալալեդին սուլթանի արշավանքները ծանր հետևանքներ են ունենում Հայաստանում, առանձնապես Վայոց ձորում: Պատմիչները մեծ վշտով ու դառնութեամբ են նկարագրում այդ ավերումները:

Զալալեդինի ավերումներին հաջորդում են մոնղոլական արշավանքները: Մոնղոլների երրորդ զորաբանակը Ասլան Նուխի գլխավորութեամբ 1235 թ. արշավում է Հայաստանի վրա և մտնում Վայոց ձոր: Սյունիքում իշխում էր Լիպարիտի որդի Ելիկումը, որն ամրացել էր Հրասեկա անառիկ ամրոցում: Վերջինս գտնվում է Ամաղուի ձորի սկզբնավորութեան վրա, Գնիշիկ գյուղից հարավ, Հարսնաքար (հետագայում՝ Գյալին-կայա) կոչված լեռան գագաթին: Մոնղոլները տեսնելով Հրասեկա կամ Հրաշկա բերդի ու ամբողջ Սյունիքի անառիկ դիրքը, ցանկանում են գործը վերջացնել խաղաղութեամբ: Ասլանը բանակցութիւնների մեջ է մտնում Ելիկումի հետ, պայման առաջարկելով, որ նրան կտրվի իր երկրի ընդհանուր կառավարման իրավունքը, եթե ընդունի մոնղոլների դերիշխանութիւնը և հարկատու լինի նրանց: Ելիկումը համաձայնում է առաջարկած պայմանին: Ասլանը Ելիկումին է



թողնում Վայոց ձորը և այլ շրջաններ, արևմուտքից սահման  
տաննալով Ազատ (Գառնի) գետը:

Որոշ ժամանակ հետո Ելիկումը նփրկերտ քաղաքի վրա,  
Ասլան Նուենի և Իվանի որդի Ավագի հետ մղած համատեղ  
պատերազմի ժամանակ հիվանդանում է և մեռնում: Նրա  
գիակը բերում թաղում են Ամաղու Նորավանքում, իր հոր  
գերեզմանի մոտ:

Ելիկումի որդու՝ Բուրթելի անշափահաս լինելու պատճա-  
ռով երկրի կառավարման ղեկն ստանձնում է նրա եղբայր  
Սմբատը, «որ էր հանձարով մեծ, խորհրդով ուժեղ... ի դա-  
տարանի դիվանին անպարտելի, զի խոսեր լեզուս հինգ՝ հայ  
և վրացի, ուղուր և փարսի և գմուղալն իսկ»<sup>1</sup>:

Սյունիքը ևս քայքայված վիճակում էր՝ հայ իշխաններին  
և վանքերին պատկանող կալվածների մեծ մասը զավթել էին  
մոնղոլ խաները, նահանգի մի քանի գավառներին տիրացել  
էին օտար նվաճողները:

Ժողովուրդը տնքում էր ծանր հարկերի տակ: Բայց Սմբա-  
տի առաջին հոգսը լինում է այն, որ հայ իշխաններին ու  
վանքերին վերադարձնի նրանցից խլված կալվածները, ապա  
նահանգն ազատի մոնղոլ իշխաններից և ապահովի Օրբելյան-  
ների տիրապետությունը: Այդ նպատակով Սմբատը, պատշաճ  
ընծաներով, 1251 թվին ճանապարհ է ընկնում դեպի հեռավոր  
Կարակորում՝ Մանգու խանի մոտ, որը Չինգիզ խանի թոռն  
էր: Նախապես Սմբատը այցելում է Սյունիքի կառավարիչ  
Բաշու խանին (որը նստում էր այժմյան Գորիս քաղաքի մոտ  
գտնվող Չագեձորի ամրոցում), նրանից Կարակորում գնա-  
լու թույլտվություն և ուղեկիցներ ստանալու համար, որը և  
ստանում է:

Մանգու խանը ընդառաջում է Սմբատի պահանջներին,  
հրամայում՝ վերադարձնել Սյունիքի հայ իշխաններից և  
վանքերից գրաված բոլոր կալվածները, վերացնում է վանքե-  
րից ու հողեռականներից գանձվող հարկերը: Ամբողջ Սյու-  
նիքը, Արարատյան նահանգից անջատած Վեդի գավառով և

<sup>1</sup> Օրբելյան, էջ 405:

Կոտայք գավառի մի մասով նորից հանձնվում է Սմբատին  
ինչուսական (տևրոնական) իրավունքով, այսինքն՝ ենթակա  
միայն մեծ Ղանին: Այդ բոլորը հաստատվում է խանի հրա-  
մանագրով՝ յարեղով:

Վերադառնալով հայրենիք, Սմբատը ձեռնարկում է երկրի  
վարչական և տնտեսական կյանքի կարգավորման աշխա-  
տանքներին: Սմբատի այդ ձեռնարկումների պատճառով Սյու-  
նիքն ապրում է համեմատաբար խաղաղ վիճակ, որի հետե-  
վանքով զգալի թափ է ստանում կուլտուր-շինարարական  
աշխատանքը, առանձնապես Վայոց ձոր գավառում, որտեղ  
գտնվում էր Օրբելյանների վարչական կենտրոնը:

Վրաստանի մոնղոլ կառավարիչ Սեկիչ բեկը, որը թշնա-  
մաբար էր տրամադրված Օրբելյան Սմբատի դեմ, ցանկա-  
նում էր գրավել վաղիրություն պաշտոնը և զավթել նաև  
Սյունիքը:

Սմբատը 1256 թվին նորից ճանապարհ է ընկնում դեպի  
Կարակորում՝ Մանգու խանի մոտ: Վերջինս կրկին հաստա-  
տում է Սմբատին տված գավառները և արտոնությունները,  
որովհետև այդպես ձեռնտու էր մոնղոլ խանին, թե՛ նյութա-  
կան և թե՛ քաղաքական-վարչական տեսակետից:

Այս ամենը զգալի չափով մեծացնում են թե՛ Սմբատի  
համբավն ու հեղինակությունը մոնղոլ խաների ու բեկերի և  
հայ իշխանների ու հողեռականության առջև, և թե՛ հնարա-  
վերություն են ստեղծում բնակչությանն ու ֆեոդալներին  
զբաղվելու երկրի կուլտուրական և շինարարական աշխա-  
տանքներով:

Սմբատի օգնականն էր նրա կրտսեր եղբայր Տարսախճը  
(մյուսները մեռել էին կամ սպանվել), որն իշխում էր Սիսիա-  
նին: Անզավակ Սմբատը որդեգրում է Տարսախճի երեք որ-  
դիներից մեկին՝ Ստեփանոսին և լավ կրթություն տալիս  
նրան: Ստեփանոսը շուտով դառնում է Սյունյաց թեմի եպիս-  
կոպոս և դարի վերջին ավարտում Սյունյաց նահանգի պատ-  
մությունը:

Սմբատը մեռնում է Թավրիզում, Ատրպատականի կառա-  
վարիչ Արղուն խանին կատարած այցելության ժամանակ՝



1273 թվին: Նրա շքեղագարդ դագաղը, մեծ բազմությամբ ու թագավորական շուքով դուրս են հանում քաղաքի մեծ դռնով և բերում Վայոց ձոր, թաղում Ամաղու Նորավանքում: Տարասախձը նրա գերեզմանի վրա շինել է տալիս մի փոքրիկ գեղեցիկ եկեղեցի (ս. Գրիգորի անվամբ):

Ամբասին փոխարինում է Տարասախձը: Հայ պատմիչները գովաստով են խոսում Ամբասի այս արժանավոր եղբոր մասին, որը եղել է կրթված, քաջ և անվախ ռազմիկ: Ինը խոշոր ճակատամարտեր է տվել և բոլորն էլ ավարտել փառավոր հաղթությամբ: Այդ էր պատճառը, որ նա ահարկու էր և մեծ հարգանք ու վստահություն էր վայելում մոնղոլական Աբաղա խանի մոտ, որից ստացել էր ամենաբարձր զինվորական պարգևը՝ ոսկյա բալիշը:

Տարասախձը, հետևելով մեծ եղբոր՝ Ամբասի օրինակին, շատ մոտիկ ու մտերմական հարաբերություններ էր պահպանում Վրաստանի հետ: Նա վրաց Դավիթ թագավորի հետ գնում է Խաչեն և ամուսնանում Խաչենի իշխան Ջալալ Աթաբեկի դուստր Մինա խաթունի հետ: Երևում է Տարասախձը նշանակվում է Աթաբեկ վրաց և հայոց և վրաց թագավորների որդիների դաստիարակ:

Տարասախձը Օրբելյանների վարչական կենտրոնը եղեգիս գյուղաքաղաքից փոխադրում է Արփա (այժմ Արենի) գյուղը, որտեղ կառուցել է տալիս իշխանական ապարանք, եկեղեցի, և Արփայի նշանավոր կամուրջը, որի մնացորդները պահպանվել են մինչև այսօր:

Տարասախձը ձգտում էր վերականգնել և ավելի ուժեղացնել եկեղեցու իրավունքները, որպես ֆեոդալական իշխանության և շահագործման կարևոր հենարան: Այդ նպատակով Նորավանքում հատուկ ժողով է գումարում, որին մասնակցում էին մեծ թվով եպիսկոպոսներ, վարդապետներ ու իշխանավորներ և 1280 թվին իր շատ երիտասարդ որդի Ստեփանոսին ձեռնադրել է տալիս քահանա. հինգ տարի հետո ուղարկում կիլիկիա հայոց Առն թագավորի մոտ, որպեսզի հայոց կաթողիկոսի կողմից ձեռնադրվի եպիսկոպոս: Առն թագավորը անձամբ ոսկյա թագ է դնում նրա գլխին՝ զարդարված մարգա-

րիտներով: Երիտասարդ մետրոպոլիտը, 1287 թ. Կիլիկիայից մեկնում է Վայոց ձոր՝ Ամաղու Նորավանք:

Մինչև Օրբելյանների տիրապետության հաստատումը՝ Այունիքում, Այունյաց հոգևոր թեմի աթոռանիստ վայրը Տաթևն էր: Օրբելյանները տեղ դառնալով Այունիքին, իրենց վարչական կենտրոնը փոխադրելով Վայոց ձոր, հիմնադրում են Ամաղու Նորավանքը, դարձնելով այն իրենց տոհմական գերեզմանատունը և հոգևոր թեմի աթոռավայրը:

Տարասախձը մեռնում է Արփայում խորին ծերություն մեջ՝ 1290 թ., բայց նրան թաղում են Նորավանքում, իր կառուցած եկեղեցում, Ամբասի մոտ: Այունիքի կառավարման ղեկը հանձնվում է Տարասախձի ավագ որդուն՝ Ելիկունին:

Ստեփանոս եպիսկոպոսը Տարասախձով ավարտում է Օրբելյան տոհմի պատմությունը, թեև Տարասախձի մահից հետո նա սպրդում է մոտ 15 տարի:

Օրբելյանների տոհմի շատավիղները Այունիքի գավառներում և Վայոց ձորում իշխում են մինչև 15-րդ դարի կեսերը: Այդ երևում է հիշատակարաններից և Վայոց ձորի հուշարձանների վրա պահպանված արձանագրություններից: Սրանց մեջ Օրբելյան իշխանները անվանվում են «սպարապետ հայոց և վրաց, թագազարմ իշխան, իշխանաց իշխան» և այլ տիտղոսներով: Այս վերջին Օրբելյանները ևս շարունակում են շինարարական աշխատանքները Վայոց ձորում: Այդ շքանքանի վերաբերող կառուցումներից առանձնապես նշանավոր են Սուլեմա-Սելիմի նշանավոր քարավանատունը, Աստվածածնի եռահարկ եկեղեցին՝ Ամաղու Նորավանքում, Ագարակաձոր գյուղի մոտ գտնվող կամուրջը՝ Արփա գետի վրա և շատ ուրիշ կառուցվածքներ:

Օրբելյանների տիրապետության շրջանը համեմատաբար բեղմնավոր մի ժամանակ է Այունիքի, հատկապես Վայոց ձորի շինարարական կյանքում: Նրանց ժամանակ են կառուցվում հայ արվեստի ու ճարտարապետության այնպիսի հուշակապ կոթողներ, ինչպիսին Ամաղու Նորավանքն է, Սելիմի, Աղավնաձորի և այլ քարավանատները, Արատեսի, Յախաց քարի, Թանատեի, Սպիտակավոր Աստվածածնի վանքերը,



Եղեգիսի եկեղեցիները, Արփայի և Ագարակաձորի նշանավոր կամուրջները, մի շարք կամուրջներ Սելիմի և Եղեգյաց ու Արփա գետերի վրա, բազմաթիվ մահարձաններ ու կոթողներ, որոնք ցրված են ամբողջ Վայոց ձորով մեկ: Օրբելյանները մեծ ուշադրություն են դարձրել նաև բնակավայրերի շինարարությանը, նրանք մեծ շահով ընդարձակել ու բարեկարգել են Եղեգիս ավանը, կառուցելով այնտեղ հատուկ ապարանքներ, զարդարել այգիներով ու պարտեզներով՝ դարձրել իրենց վարչական կենտրոնը, որը այնուհետև կոչվել է գյուղաքաղաք, երբեմն էլ՝ մայրաքաղաք:

Օրբելյաններն առանձին ուշադրություն են դարձրել նաև ճանապարհաշինարարությանը: Նրանց իշխանության ժամանակ Վայոց ձորի վրայով էր անցնում տարանցիկ առևտրի Գլին—Պարտավ և Թավրիզ—Պարտավ գլխավոր ճյուղերը: Այդ գլխավոր ուղեգծի վրա Օրբելյանների ժամանակ կառուցվում են շորս քարավանատներ: Բացի վերը հիշված կամուրջներից, բազմաթիվ այլ կամուրջներ են կառուցվել նաև Վայոց ձորի մյուս գետերի ու գետակների վրա, որոնք մեծ մասամբ պահպանվել են մինչև այժմ:

Երկրի պաշտպանության կոթողներն ու ժեղացնելու նպատակով զգալի շահով զարկ է տրվում նրա բնական անառիկ դիրքը արհեստական ամրություններով լրացնելու աշխատանքներին: Պատմությանը հայտնի է, թե գոյություն ունեցող բազմաթիվ բերդերից որոնք են կառուցել Օրբելյանները, սակայն հնագիտական հետազոտությունները որոշակի կերպով ցույց են տալիս, որ Վայոց ձորի ամրոցները մեծ շահով ընդարձակվել ու ամրացվել են նրանց իշխանության ժամանակ: Առանձին ուշադրություն է հատկացվել Ֆշանավոր Սուլեմա բերդի, Սմբատաբերդի, Հրաշկաբերդի ամրացմանը:

Օրբելյանների և Պոռչյանների իշխանության ժամանակ բավական մեծ թափ է ստացել նաև գրական-կրթական գործը. բազմաթիվ ձեռագրերի հիշատակարանները ցույց են տալիս, որ նրանք գրվել կամ արտագրվել են Ամաղու Նորավանքի, Շատիվանքի, Արատեսի, Ցախաց քարի, Կնեվանքի,

Թանատեի, Արկազի ս. Խաչ վանքի, Գլաձորի՝ վանքերի և մի շարք եկեղեցիներին կից գրատներում: Առանձնապես հուշակված է եղել Գլաձորի բարձրագույն դպրոց-համալսարանը:

13-րդ դարի վերջերից, այսինքն, Տարսախճ Օրբելյանի մահից հետո մինչև 17-րդ դարը շատ քիչ պատմական տեղեկություններ են հասել Վայոց ձորի մասին: Հայտնի է միայն, որ 14-րդ դարի կեսերին, երբ իսպառ քայքայվում է մոնղոլական կենտրոնական իշխանությունը, սկսվում է ներքին, զինված ընդհարումների երկարատև մի շրջան: Դրան հաջորդում են Լանկթեմուրի արշավանքները, իսկ հետո՝ թյուրք-թարական մի շարք ցեղերի անընդհատ կրկնվող արշավանքներն ու դրանց միջև տեղի ունեցած պատերազմները:

Երկարատև այդ ընդհարումների ու արշավանքների հետևանքով, որոնք տեղի էին ունենում Հայաստանի տերիտորիայի վրա, և որոնց միշտ ուղեկցում էին թալանը, ավերածությունները, կոտորածները՝ ամբողջ Հայաստանի հետ նաև Վայոց ձորը հասնում է ծայր աստիճան քայքայման, աղքատության ու զգալի ամայացման: Բազմաթիվ շենքեր ու ավաններ, քաղաքներ և վանքեր ավերվում ու լքվում են: Բնակչության մի մասը թողնում է իր հայրենի երկիրը և գաղթում հեռու, օտար երկրներ: 14-րդ դարի կեսերից մինչև 17-րդ դարը ոչ մի նշանավոր հուշարձան չի կառուցվել նաև Վայոց ձորում: Ընդհակառակը՝ մի շարք վանքեր ու եկեղեցիներ, ինչպես, օրինակ, Շատիվանքը, Կնեվանքը, Արատեսի վանքը, Ցախաց քարի վանքի մի մասը, Արկազի ս. Խաչ վանքը, Եղեգիսի Աստվածածին եկեղեցին, Հոստոմի եկեղեցին և այլն՝ ավերվել են 14—16-րդ դարերում:

Պարսկաստանը 16-րդ դարի վերջերին, օգտվելով քոչվոր ցեղերի զգալի թուլացումից, կրկին ուժեղանում է և նվաճում Հայաստանը: Պարսկական տիրապետության սկզբնական շրջանում համեմատաբար կայուն վիճակ է ստեղծվում, որի հետևանքով կյանքը սկսում է աստիճանաբար մտնել որոշ չափով նորմալ հունի մեջ: Այդ ժամանակ է, որ վերակառուցվում են Շատիվանքը, Կնեվանքը, Արկազի ս. Խաչ վանքը, Եղեգիսի մի եկեղեցին, Հոստոմի, Հորբատեղի և այլ եկե-



դեցիններ: Սակայն այդ դրուժյունը երկարատև չի լինում, շուտով սկսվում են թյուրք-պարսկական ավերիչ պատերազմները:

Պարսից Շահաբաս առաջինը 1605 թվի սեպտեմբերին ձեռնարկում է հայերի բռնի և մասսայական տեղափոխմանը Պարսկաստան: Գաղթեցրած գավառների թվում հիշատակվում է նաև Եղեգյաց ձոր գավառը:

Հայաստան արշավող թյուրքական բանակը և մեծ սովը լրացնում են Շահաբասի կատարած ավերածությունները: Վայոց ձորի բնակավայրերի մեծ մասը ևս ամայացան, սահմանափակ թվով գյուղեր էին մնացել, որոնք ունեին չնչին թվով բնակիչներ:

Թյուրք-պարսկական պատերազմները և առանձին խաների ու բեկերի ասպատակությունները Հայաստանի ու Վայոց ձորի վրա շարունակվեցին նաև հետագա ժամանակներում, որի ընթացքում կոտորվում, թալանվում ու անդուլ շահագործման էին ենթարկվում գյուղացիները:

Մատենադրական որոշ տեղեկություններից, հուշարձանների վրա եղած էպիգրաֆիկ նյութից և կատարված հնագիտական հետազոտություններից կարելի է որոշակի ասել, որ Վայոց ձորի աշխատավոր բնակչությունը եղել է միանգամայն իրավազուրկ՝ կիսաստրկական, ճորտական վիճակում: Առանձնապես ծանր է եղել նրա տնտեսական դրությունը. հողը պատկանելիս է եղել իշխող դասակարգին՝ աշխարհիկ իշխաններին, հոգևորականությանը և եկեղեցուն. աշխատավոր ժողովուրդը հողազուրկ, աղքատ ու քնշազուրկ վիճակում է եղել, ենթակա անդուլ շահագործման ու կեղեքման: Աշխատավոր գյուղական բնակչության այդ շահագործումն ու կեղեքումը եռակի սաստկացել է օտար նվաճողների տիրապետության շրջանում: Գյուղացիության ըմբոստացումները օտար և հայրենի շահագործողների դեմ ձնշվել են դաժան միջոցներով, ինչպես, օրինակ, 10-րդ դարի Յուրաբերդցիների տեղական ապստամբությունները՝ Տաթևի վանքի դեմ:

Միայն, երբ ուսական ազատարար բանակը 1827 թվին պարտություն մատնեց պարսկական բանակին և դուրս բերեց

Արաբսի մյուս ասիը, կնքվեց Թուրքմենչայի պայմանագիրը, որով Արևելյան Հայաստանի մի զգալի մասը վերջնականապես միացվեց Ռուսաստանին: Վայոց ձորի աշխատավորությունը ևս ազատագրվեց պարսկական խաների ու բեկերի շահագործումից և իր բախտը կապեց ուս ազատարար մեծ ժողովրդի հետ:



2297-67  
1633-2003



Հ. Եղիազարյան — 2





ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԵՎԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐԵՆԻ (Արփա) ԳՅՈՒՂ

Արենի գյուղը Հայաստանի հնագույն և նշանավոր գյուղերից է: Այս գյուղի Արփա անունը, համանուն գետի անվան հետ գալիս է անհիշելի ժամանակներից: Մինչև 14-րդ դարը Արփան եղել է խոշոր ավան՝ ընկած բանուկ ճանապարհի վրա և հաճախ հանդիսացել է իշխանանիստ վայր: Այդ մասին վկայում են թե՛ բազմաթիվ պատմական հուշարձանները և թե՛ հնագույն կամուրջի մնացորդները, թեև գրավոր հիշատակությունները միայն մեկ հազարամյակի անցյալ ունեն: 13-րդ դարի Օրբելյան Տարսաիձ իշխանը Սյունիքի վարչական կենտրոնը Եղեգիս ավանից փոխադրում է Արփա և այստեղ կառուցում դարբաս՝ իշխանական ապարանք: 19-րդ դարի վերջերին գյուղացիները քանդում են այդ ապարանքի մնացորդները և քարն օգտագործում նոր եկեղեցու կառուցման համար: Հին Արփա գյուղը գտնվում է ներկայիս Արենի գյուղից քիչ դեպի արևելք, ուր այժմ էլ պահպանվել են եկեղեցին, գերեզմանոցը և Տարսաիձի կառուցած ապարանքի հետքերը:

Եկեղեցին կրում է Աստվածածին անունը (նկ. 1). կառուցել է տվել Ամաղու Նորավանքի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսը՝ 1321 թվին, Տարսաիձ իշխանի հրամանով: Սա բառանկյունի հատակագծով գմբեթակիր շենք է, ներսից երկու սյունով, որոնցից ձգվող կամարները հենվում են արևելյան աբսիդի եզրերի կիսասյուների վրա, կրելով գմբեթը: Բեմի երկու կողմից կան խորաններ:

Արևելյան և հարավային կողմերից եկեղեցին ունի երկու մուտք՝ սլաքաձև ճակատակալ քարով՝ տիմպանով: Արևմուտ-

յան դռան տիմպանի վրա քանդակված է Մարիամ աստվածածինը՝ մանուկ Հիսուսը գրկին, շրջապատված խաղողի ողկույզ ներկայացնող և բուսական այլ քանդակներով: Արևելյան պատի լուսամուտը զույգ է՝ խաչաձև բացվածքներով, իսկ մյուս պատերը կենտրոնական մասից ունեն մեկական լուսամուտներ: Արևելյան պատի մեջ, արտաքուստ կան երկու եռանկյունաձև խորշեր, որոնց կամարակապ դազաթները զարդարված են քանդակներով:

Շենքի կրաշաղախ միջուկ ունեցող պատերը շարված են մաքուր տաշված բաց-դեղնավուն քարերով: Նկատելի է վերանորոգման հետքեր: 1840 թ. երկրաշարժից փլվել է միայն շենքի գմբեթը, և թափված են տանիքի սալաքարերի մի մասը, ինչպես նաև՝ պատերից առանձին քարեր:

Գերեզմանոցը տարածվում է եկեղեցու շուրջը. տարբեր ձևերով մշակված գերեզմանաքարերը բաց-դեղնավուն ավազաքարից են և հարուստ են կենցաղային քանդակներով: Գերեզմանոցում կան բազմաթիվ խաչքարեր՝ մեծ մասամբ տեղահան արված ու կոտորած: Եկեղեցու արևելյան կողմում, գերեզմանոցի եզրին, շարքով կանգնեցված են բնական սալերի ու կոթողների ձևով խաչքարեր, որոնք բնորոշ են 15—16-րդ դարերին:

Կամուրջը գտնվում է գյուղից մոտավորապես մեկ կիլոմետր դեպի հյուսիս-արևելք, Արփա գետի աջ ափին. նկատվում է, որ ժամանակի ընթացքում գետը փոխել է իր հունը: Ստեփանոս Օրբելյանը հետևյալ կերպ է պատմում այդ կամուրջի կառուցման մասին.

«Տեր Սարգիս... ևս առավել արար գործ մի երևելի, զի ի գիւղն Արփայ ի վերայ գետոյն կանգնեաց կամուրջ զարմանալի տաշածոյ վիժօք՝ յոյժ բարձր և ընդարձակ և լայն, հիացուցիչ տեսողաց, բազում ծախիւք և անչափ աշխատութեամբ՝ հրամանաւ բարեպաշտին և մեծափառ իշխանին Տարսաիձն»: (Պատմութիւն Նահանգին Սիսական, էջ 429—430): Հնագիտական հետազոտությունները հաստատում են, որ այդ կամուրջը եղել է իրոք ճարտարապետական հիասքանչ մի կառուցվածք՝ լայնաթուխը շորս կամարներով: Կամուրջի հիմ-



քերը շարված են եղել կապտագույն բազալտի մաքուր տաշված մեծ քարերով, իսկ մնացած մասը՝ մուգ-վարդագույն տուֆով: Նրա կառուցումը ղեկավարել է Նորավանքի առաջնորդ Սարգիս եպիսկոպոսը (1265—1287 թթ.): Կամուրջից պահպանվել են միայն խելերի հետքերը:

Շինարարական աշխատանքների ժամանակ կամուրջի մոտ բացվել են ուրիշ շարվածքի հետքեր, նույն կապտագույն բազալտի մաքուր տաշված մեծ քարերով, որոնք իրար հետ միացված են արձիճով ամրացված երկաթյա ձողերով: Ինչպես հայտնի է, շինարարության այդ եղանակը բնորոշ է անտիկ ժամանակաշրջանին, և այդ հանգամանքը թերևս իբրավունք է տալիս ենթադրելու, որ այստեղ գոյություն է ունեցել ավելի հին կամուրջ, գուցե ժամանակակից Գառնիի տաճարին:

Գյուղի սահմաններում կան նաև մի քանի այլ հուշարձաններ, որոնցից հայտնի են.

Ամրոցը գտնվում է գյուղի հարավ-արևելյան կողմում, Ուփի ձորի ձախ ափին: Սյունյաց աշխարհի հնագույն կարևոր բերդերից մեկն է եղել, որից պահպանվել են պարսպի հետքերը՝ շարված անմշակ մեծ քարերով, առանց շաղախի:

Ծծախաչ եկեղեցին գտնվում է գյուղից ղեպի հյուսիս-արևելք, Շնգուլի ձորում, Արփա գետի աջ ափին: Փոքրիկ եկեղեցի է, որի հիմնապատերն են պահպանվել: Եկեղեցու շուրջը նկատելի են բնակարանների հետքեր և մի քանի զեբեզմաններ: Այդ հուշարձանները բնորոշ են միջին դարերին:

Խաչքարը գտնվում է «Վարդապետի հողեր» կոչվող դաշտամասում, հին կամուրջից ղեպի հյուսիս, փոքրիկ բլուրի վրա: Մովորական դարձաքանդակներով այս խաչքարը կանգնեցված է 1303 թվին, այժմ պատվանդանից ընկած է գետնին:

### ԱՄԱՂՈՒ ԳՅՈՒՂ

Ամաղուն ոչ պակաս հին ավան է, թեև պատմական աղբյուրներում հիշատակվում է 10-րդ դարից: Հիմնովին ավերվել է մոնղոլական տիրապետությունից հետո՝ 14—15-րդ

դարերում: 18—19-րդ դարերում կրկին բնակություն է հաստատվում այստեղ: Վանեցի և ալաշկերտցի վերաբնակիչները վերակառուցում են ավերակ եկեղեցին, սակայն 1856—1860 թվականներին սրանք հեռանում են Ամաղուից՝ բնակություն հաստատելով Այար և Ենգիշա գյուղերում: Գյուղի հյուսիսային կողմում երկու ձորերի միացման կետում պահպանվել է նաև միջնադարյան մի մահարձան:

Ամաղու գյուղի սահմաններում ամենանշանավոր հուշարձանների խումբը Ամաղուի Նորավանքն է:

### ԱՄԱՂՈՒ ՆՈՐԱՎԱՆԷ

Մատենադարան աղբյուրներում հիշատակվում է, որ հնագույն ժամանակներում Ամաղուի անձուկ ձորի մի սառնորակ աղբյուրի մոտ սրբատաշ քարով կառուցվել է մի եկեղեցի, որը եղել է հայտնի ուխտատեղի: Այդ ձորը հայտնի է եղել իր խաղողի այգիներով ու մրգատու ծառերով:

Սյունիքի Վահանավանքի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսը 1205 թ. գալիս է Վայոց ձոր և բնակություն հաստատում Նորավանքի խորածոր անապատում: Սելջուկ սուլթանի օժանդակությամբ նա վանքի շրջակայքից հեռացնել է տալիս բնակիչներին և սեփականացնում նրանց հողերը: Վանքի սեփականություն է դարձնում մոտիկ Գանձակ, Տխարբ գյուղերը, Հրասեկա ու Անապատ բերդերը և հիմնում է վանական միաբանություն:

Հովհաննես եպիսկոպոսի ժամանակ է, որ Վայոց ձորի տեղ են դառնում Օրբելյան իշխանները և Նորավանքը դարձնում ամբողջ Սյունիքի հոգևոր թեմի կենտրոն, արագ բարձրացնելով նաև նրա տնտեսական հզորությունը: Նորավանքին որպես սեփականություն տրվում են բազմաթիվ գյուղեր, ազարակներ, այգիներ, շրաղացներ, նույնիսկ վանքեր, բերդեր և այլն: Օրբելյանների տոհմական պանթեոնը ևս դառնում է Նորավանքը՝ այստեղ են թաղվում Օրբելյան իշխանները:



Սմաղու Նորավանքը Օրբելյանների տիրապետութեան ժամանակ ընդարձակվում է նորանոր կառուցվածքներով և Տարսախճի ժամանակ հասնում իր զարգացման զագաթնակետին՝ դառնալով Ֆեոդալական Հայաստանի կուլտուրական ու կրոնական խոշոր կենտրոններից մեկը (նկ. 2): Սմաղուի հուշարձանները, իրենց արվեստով, բարձր ճարտարապետական առանձնահատկություններով, հանդիսանում են հայ արվեստի ամենանշանավոր կոթողներից մեկը: 13—14-րդ դարերին պատկանող նրանց հարուստ վիմական արձանագրությունները ևս արժեքավոր աղբյուր են հանդիսանում հայ պատմության համար: 16-րդ դարին վերաբերող տապանագրությունները ենթադրել են տալիս, որ վանքը մի կերպ շարունակել է իր գոյությունը նաև այս դարում: 1840 թ. երկրաշարժից վնասվում են վանքի շինությունները, որից հետո նա մնում է լքված վիճակում: Նորավանքի կոմպլեքսի մեջ մտնում են հետևյալ հուշարձանները.

Ս. Կարապետ եկեղեցի— սա վանքի ամենահին կառուցվածքն է, այժմ ավերված: Բոլոր տվյալներից երևում է, որ հիմնովին վերակառուցված է եղել 9—10-րդ դարերում:

Ս. Կարապետի անվան երկրորդ եկեղեցին գտնվում է նախորդին կից՝ հյուսիսային կողմում: Կառուցել է տվել Լիպարիտ Օրբելյանը վանքի առաջնորդ Սարգիս եպիսկոպոսի միջոցով, 1216—1223 թթ.: Սա գմբեթավոր սրահի տիպի կառուցվածք է, արտաքուստ ուղիղ քառանկյունի, ներսից խաչաձև հատակադժով՝ ուղղանկյուն խաչվեցրով: Արևելյան խաչվեում կա կիսակլոր արսի՞՞ բարձր բեմով:

Չորս անկյուններում կան երկհարկանի խորաններ. արևմտյան անկյունների ստորին խորանների դռները բացվում են եկեղեցու մեջ՝ դեպի արևմուտք, իսկ վերին հարկի խորաններից դեմ ու դեմ բացվում են արսի՞՞ մեջ, դեպի ուր բարձրանում են հինգ աստիճան ունեցող քարե սանդուղքներով: Արևմտյան անկյունների խորանների դռները բացվում են արևմտյան խաչվեի մեջ՝ իրար դիմաց, իսկ վերի հարկի խորանները բարձրանում են ստորին հարկի խորանների պատերին կից կառուցած յոթ աստիճան ունեցող քարե

կոնսոլ սանդուղքներով: Բոլոր խորաններն արևելյան կողմից ունեն կիսակլոր, փոքր արսի՞՞ներ:

Խաչվեների միացման անկյուններից ձգվող գլանաձև կիսասյուների միանում են կամարներով, իրենց վրա կրելով գմբեթը: Միակ մուտքն արևելյան կողմից է, որը բացվում է ժամատան մեջ և զարդարված է սյունազարդ շրջանակով: Արևելյան պատի մեջ արտաքուստ կան եռանկյունաձև երկու մեծ խորշեր՝ կամարաձև պսակներով (նկ. 3): Շենքը սալահատակված է, տանիքը ևս պատած է սալաքարերով: Պատերը շարված են սրբատաշ ավազաքարով: Այս եկեղեցին կոչվում է նաև Ստեփանոս Նախավիայի անունով: 1840 թվի երկրաշարժից քանդվել է եկեղեցու գմբեթը, և պատերը ձեղքեր են տվել:

Ժամատունը գտնվում է ս. Կարապետ եկեղեցուն կից, նրա արևմտյան կողմում: Կառուցվել է իշխանաց իշխան Սմբատ Օրբելյանի կողմից 1261 թվին՝ իր նախնիների գերեզմանների վրա: Որոշ ուսումնասիրողներ ենթադրում են, որ նա եղել է գավիթ, սովորական գավիթների ձևով կառուցված, և որ Սմբատ Օրբելյանը վերակառուցել է այն ժամատան: Բավականին ընդարձակ շենք է, քառակուսի հատակադժով, խիստ բնորոշ է իր կառուցման ձևով ու եզակի տեղ է գրավում հայկական գավիթների մեջ: Պատերը, ստորին մասում, մոտ երեք մետր բարձրությամբ հարթ են, յուրաքանչյուր պատին կից ձգվում են երկուական որմնասյուներ, մեկական որմնասյուներ էլ ձգվում են անկյուններից: Որմնասյուներն իրարից տարբեր են ձևով, իսկ խարիսխներն ու խոյակներն ունեն զանազան մշակում: Որմնասյուները միանում են որմնակամարներով, պատերի այդ մասում առաջացնելով խորշեր: Արևելյան որմնասյուները միացնող կամարը սլաքաձև է և շրջափակում է եկեղեցու դուռը: Արևմտյան, հարավային և հյուսիսային պատերի մեջ որմնասյուների բարձրությամբ ու նրանց արանքում դրված են մեծ կալունակներ: Այդ կալունակների և որմնասյուների վրայով ձգվում է գոտու լայն շերտ:

Գոտուց բարձր, նույն երեք պատերի մեջ գոյանում են երեքական խոր խորշեր, կենտրոնների խորշերը համեմատա-



բար մեծ են, որոնց մեջ բացվում են լուսամուտները: Յուրաքանչյուր խորշում, նրա ամբողջ բարձրութեամբ, դրված է մեկական քանդակազարդ խաչքար՝ պատվանդանի վրա: Ծածկը իրականացված է զոց թաղի (СОМКНУТЫЙ СВОД) ձևով, կենտրոնում ժամատներին հատուկ երդիկով:

Գլխավոր դռան արևմտյան կողմից է, մի այլ դուռ էլ բացվում է հարավային պատի արևելյան ծայրում: Արևմտյան, հարավային և հյուսիսային պատերի մեջ բացվում են զույգ կամարակապ լուսամուտներ, որոնք բավականին բարձր են. արտաքուստ նեղ, իսկ ներսից ընդարձակ բացվածքով և ուղղանկյուն կողմերով: Սրանց առջևում են կանգնեցված վերը նշված խաչքարերը, որոնք ոմնեն նաև կոնստրուկտիվ նշանակություն. սրանց վրա են դրված կալոնակները՝ պատերը կալուն և մասիվ դարձնելու նպատակով:

Ժամատունը հարուստ է շքեղ և նուրբ մշակված դարդաքանդակներով ու բարձրաքանդակներով: Արևմտյան դռան ճակատակալ քարի վրայի բարձրաքանդակը պատկերում է տիրամորը՝ բազմոցի վրա նստած և մանուկ Հիսուսը գրկին, իսկ կողքերից մեկական մարդ՝ նրանց երկրպագելիս: Բարձրաքանդակն ամփոփված է ծաղկեհյուսու նուրբ զարդաքանդակներով ու աղավնակերպ պատկերներով: Ճակատակալ քարը եզերող կամարը պատած է ստալակտիտ զարդաքանդակներով (նկ. 4):

Արևմտյան դռան վերևի լուսամուտի սլաքածև ճակատակալ քարի քանդակը պատկերում է աստծուն՝ լայն ու երկար հագուստով, գանգուր մազերով: Նրա աջ կողմում Հիսուսի խաչելությունն է, իսկ ձախ կողմում կա թևավոր հրեշտակ: Աստծու ձախ ձեռքում կա մարդու գլուխ, իսկ աջ ձեռքով օրհնում է Հիսուսին: Ճակատակալ քարի եզերող կամարը զարդարված է ստալակտիտ նուրբ քանդակներով (նկ. 4):

Առաստաղի հյուսիս-արևելյան մասում եղած բարձրաքանդակը պատկերում է որսի տեսարան՝ ծառս եղած առյուծը հարձակվել է նրան թրատելու պատրաստված հեծյալի վրա: Գմբեթը ներսից ոմնի ստալակտիտ բարդ կոնստրուկցիա:

Շենքի երեսապատը և ծածկը գլխավորապես կարմիր

տուֆի սրբատաշ քարերով է, տանիքը պատած է սալաքարերով, որոնք մեծ մասամբ թափված են: Նկատվում է վերականուցումների և վերանորոգումների հետքեր: Հատակը պատած է Օրբելյան տոհմի և վանքի հոգևորականների գերեզմաններով, որոնց քարերը մշակված են գեղեցիկ և նուրբ ձևերով: Գրանցից հայտնի են Ելիկումի, Իվանեի, Փախրադուլայի, Ստեփանոս եպիսկոպոսի (1260 թ.), Հովհաննես մետրոպոլիտ Օրբելյանի, Ստեփանոս Սյունյաց մետրոպոլիտի, Գրիգոր Սյունյաց եպիսկոպոսի, տիկին Նաթելի և ուրիշների գերեզմանները: Բացի վերոհիշյալ գերեզմաններից, գավթի ներսում արևելյան պատին կից կան մի քանի մահարձաններ՝ քանդակազարդ խաչքարերով, որոնք նույնպես պատկանում են Օրբելյանների տոհմին: Պատերի վրա փորված են բազմաթիվ խաչեր:

Ս. Գրիգոր եկեղեցին գտնվում է նույնպես ս. Կարապետ եկեղեցուն կից՝ հյուսիսային կողմից: Կառուցել է տվել իշխանաց իշխան Տարսաիճ Օրբելյանը, իր եղբայր Սմբատի գերեզմանի վրա՝ 1275 թվին: Եկեղեցին փոքր է, միանեֆ բաղնիքի ձևով. արևելյան կողմից ոմնի կիսակլոր աբսիդ՝ բեմով (նկ. 5): Գուռն արևմտյան կողմից է՝ սյունազարդ շրջանակով և կիսակլոր ճակատակալ մեծ քարով: Երկու լուսամուտներից մեկը բացվում է արևելյան կողմից՝ շեղ դիրքով դեպի հարավ, իսկ մյուսը՝ արևմտյան կողմից, դռան վերևից:

Հուշարձանը շարված է վարդագույն սրբատաշ ավազաքարերով. տանիքը պատած է սալաքարերով, հատակը պատած է գերեզմաններով, որոնց քարերը նուրբ և գեղեցիկ ձևով մշակված են և մեծ մասն ունի տապանազրույթուն: Գերեզմաններից հայտնի են՝ Սմբատ իշխանաց իշխանինը (1273 թ.), նրա եղբայր Տարսաիճ իշխանինը (1290 թ.), Բուրթել իշխանինը (1300 թ.), Մինա Խաթունինը (1293 թ.) և այլոց:

Աստվածածին եկեղեցին գտնվում է նախորդ հուշարձանների խմբի հարավ-արևելյան կողմում, առանձին: Կառուցել է Սյունյաց աթաբեկ Բուրթել Օրբելյան իշխանը՝ 1339 թվին, որի համար կոչվում է նաև Բուրթելաշեն: Սա հազվագյուտ երկհարկանի եկեղեցիներից է, ստորին հարկը



ծառայել է որպես պանթեոն՝ դամբարանատուն, իսկ վերին հարկը՝ որպես եկեղեցի-աղոթարան (նկ. 6):

Ստորին հարկը կիսով չափ գեոմետրի է, հատակագիծը՝ արտաքուստ ուղիղ քառանկյունի, ներսից խաչաձև, ոչ խոր ընկած խաչվեներով: Գոտն արևմտյան կողմից է, որն ունի հարուստ մշակված երեսակալ: Գոտն բարավորի վրա եղած բարձրաքանդակը պատկերում է Աստվածածինը՝ բազմած բարձի վրա, մանուկ Հիսուսը՝ զրկին, կողքերին Գնբրիել և Միքայել հրեշտակները՝ համապատասխան մակագրությամբ (նկ. 7): Հատակում նկատվում են սովորական ձևով, բավ մշակված հին և խոշոր գերեզմանաքարեր, որոնք բոլորն էլ տեղաշարժված են:

Երկրորդ հարկում տեղավորված եկեղեցու հատակագիծը խաչաձև է. խաչվեների միացման անկյուններից ձգվող կիսա-սյունները միանալով կամարներով իրենց վրա կրել են սյունա-զարդ գմբեթը: Սյուների պահպանված բնիքը զրանաձև են, ոմանց վրա կան զանազան տարազի մարդկանց ամբողջական բարձրաքանդակներ (նկ. 8, 9): Արևելյան կողմից եկեղեցին ունի կիսակլոր քարի, որի երկու կողմերում կան խորաններ: Հարավային և հյուսիսային պատերի արևմտյան ծայրում, խորանների փոխարեն, կան մեկական խորշեր՝ կամարակապ ծածկով:

Գոտն արևմտյան կողմից է, դեպի որը բարձրանում են դամբարանատան արևմտյան պատին կից, դռան երկու կողմերից ձգվող 15 աստիճան ունեցող քարե կոնսոլ սանդուղքներով: Եկեղեցու և դամբարանատան դռներն ունեն հարուստ մշակված երեսակալ, ամբողջովին պատած նուրբ քանդակով: Եկեղեցու դռան բարավորը զարդարված է օրիգինալ զարդա-քանդակներով, որը պատկերում է Հիսուս—Քրիստոսը՝ կողքերին Պողոս և Պետրոս առաքյալները (նկ. 10): Հուշարձանը ընդհանրապես զարդարված է մարդկանց, կենդանիների, թռչունների և բուսական ու երկրաչափական մոտիվներով նուրբ մշակված հարուստ քանդակներով, որոնք առավել շուք ու գեղեցկություն են տալիս նրան (նկ. 11, 12): Ամբողջ հուշարձանը կառուցված է կարմիր սրբատաշ ավազաքարերով:

Ամառուի Նորավանքի կրկնահարկ դամբարան-եկեղեցին միջնադարյան Հայաստանի ճարտարապետության նշանավոր կոթողներից մեկն է և լավագույնը այդ տիպի (Եղվարդ, Գոշավանք, Կապուտան) կառուցվածքների շարքում: 1840 թվի երկրաշարժից քանդվել է գմբեթը, պատերի վերի մասերը և ծածկը: Ճարտարապետական հուշարձանների պահպանության կոմիտեն 1948—1949 թթ. ընթացքում վերականգնել է հուշարձանի պատերի քանդված մասերը, պատրաստել է թիթեղապատ ծածկ և բարեկարգել է շրջապատը:

Պարխայ — վանքի հուշարձանների այս խումբը շրջափակված է բարձր պարիսպներով, որոնք շարված են անմշակ ավազաքարով առանց կրաշաղախի: Միակ պահպանված մոտքը հյուսիսային կողմից է, որը կառուցված է սրբատաշ քարերով՝ կրաշաղախով: Պարսպի կառուցման մասին տեղեկություններ չկան, բայց հավանական է, որ կառուցված լինի պարսկական տիրապետության վերջին շրջանում՝ 18-րդ դարում: Պահպանվել են հյուսիսային և արևմտյան պատերը, ինչպես և հարավային ու արևելյան պատերի ստորին մասերը:

Վանքի միաբանության բնակելի շենքերը գտնվում են պարսպի ներսում, հարավ-արևմտյան պատին կից: Սենյակները թվով երեք հատ են, շատ փոքր և գտնվում են ավերակ վիճակում: Պատերի կանգուն մնացած մասերը շարված են տարբեր տեսակի անմշակ քարերով, առանց կրաշաղախի: Պատերի մեջ օդտադործված են հին շենքի բեկորներ ու քանդակազարդ խաչքարեր: Շինարարության նման ձևը, սենյակների փոքրաթիվ և ծավալով ոչ մեծ լինելը ինքնին վկայում են, որ նրանք ժամանակակից են պարսպին:

Պարսպի ներսում, բացի միաբանության բնակելի շենքերից, պահպանվել են բազմաթիվ մահարձաններ ու խաչքարեր, որոնք հայ արվեստի ամենաարժեքավոր նմուշներից են: Խաչքարերի մեծ մասը տեղահան են արված ու թափված այս ու այն կողմ: Բոլոր մահարձաններն ու խաչքարերը վերաբերում են 13—14-րդ դարերին (նկ. 13, 14):

Մառուր գտնվում է վանքի հուշարձանների զլխավոր խմբի արևելյան կողմում, պարսպից դուրս: Սովորական



ձևով կառուցված մատուռ է, որի հատակագիծն ուղիղ քառանկյունի է, իսկ ծածկը՝ թաղակապ: Արևելյան կողմից ունի կիսակլոր աբսիդ, առանց բեմի: Շարված է անմշակ լեռնաքարերով՝ կրաշաղախով, պատերի մեջ օգտագործված են հին շենքի սրբատաշ բեկորներ, ոմանք արձանագրության մնացորդներով: Ներսում, հարավային և հյուսիսային պատերի մեջ դրված են մեկական խաչքարեր, որոնցից հարավային խաչքարի ամբողջ երեսը պատած է ընդարձակ արձանագրությամբ, իսկ հյուսիսային խաչքարը բնորոշ է իր զարդաքանդակներով: Պատերի մեջ օգտագործված են 1222 և 1310 թվականների խաչքարերի բեկորներ: Դռան ճակատին դրված սրբատաշ քարի վրա գրված է Հ ո վ հ ա ն ն ե ս : Մատուռի արևելյան պատը հենված է բնական մեծ ժայռի վրա, որի տակ նկատվում են ցամաքած աղբյուրի հետքեր:

Մատենագրական վկայությունները և տեղագրական—հնագիտական հետազոտությունները բերում են այն համոզման, որ այդ մատուռը Ստեփանոս Օրբելյանի նկարագրած ս. Փոկասի եկեղեցին պետք է լինի: Որ այդ մատուռն բեմի տակից աղբյուր է բխել, որն այժմ ցամաքել է, այդ մասին վկայում են նաև ակնատեսները, դեռ 19-րդ դարի վերջերին:

Մատուռ (երկրորդ) — մի փոքր մատուռ էլ գտնվում է վանքի պարսպից դուրս, հյուսիս-արևելյան կողմում: Պատերը շարված են մանր լեռնաքարերով, հազիվ նկատելի կրաշաղախով, ծածկը թերևս թաղակապ է եղել: Քանդված են ծածկը և պատերի վերին մասերը, որոնք թափված են մատուռի ներսը և շրջապատը: Հավանական է, որ այդ մատուռը նույնպես վերաբերի պարսպի ու միաբանություն բնակելի շենքերի ժամանակներին:

Հյուրատուն — մեծ մատուռի (Փոկասի եկեղեցու) հարավային պատի մեջ դրված խաչքարի արձանագրության մեջ ասված է, որ Սարգիս եպիսկոպոսը, Տարսաիճի իշխանության ժամանակ, Նորավանքում կառուցել է հյուրատուն և որոշ արդյունքներ նվիրել նրան: Վանքի պարսպից դուրս, հյուսիս-արևելյան կողմում պահպանվել է մի մեծ շենքի ավերակ, որը շատ հավանական է, հենց այդ հյուրատունը լինի: Կրա-

շաղախ պատերը շարված են տեղական անտաշ լեռնաքարով, որոնք այժմ մնում են միայն մեկ մետր բարձրությամբ:

Մի այլ ավերակ շենքի հետքեր էլ մնացել են վանքի հյուսիսային կողմում, պարսպից դուրս: Պահպանվել են պատերի ստորին մասերը 1,5—2 մետր բարձրությամբ, շարված անտաշ քարով՝ կրաշաղախով:

Պատերի մեջ օգտագործված են հին շենքի սրբատաշ քարեր և քանդակազարդ խաչքարերի բեկորներ՝ 13—14-րդ դարերին հատուկ զարդաքանդակներով: Հայտնի չէ, թե այդ շենքը երբ է կառուցված և ինչ նպատակի է ծառայել:

Ձիթհանը գտնվում է վանքից մոտ հարյուր մետր դեպի հյուսիս-արևելք և պատկանել է վանքին: Հիմնովին ավերակ է, պահպանվել է միայն ձիթապտուղը տրորող կլոր մեծ քարը:

Հին գյուղատեղին գտնվում է Ամաղու գյուղից մոտավորապես երեք կիլոմետր դեպի հարավ-արևելք, Գնիշիկ գյուղը տանող ճանապարհի եզրին, Ամաղույի ձորի ձախ ափին: Ստեփանոս Օրբելյանի պատմությունից որոշակի երևում է, որ դա հին Տխարբ գյուղն է, որի հողերի մի մասը կապանեցի Հովհաննես եպիսկոպոսը սեփականեց Նորավանքին: Գյուղատեղում նկատվում են շենքերի հետքեր և փոքրիկ գերեզմանոց:

## ԽԱՉԻԿ ԳՅՈՒԿ

Խաչիկ գյուղը Վայոց ձորի նշանավոր և մեծ գյուղերից է. 11-րդ դարում Վայոց ձորի այդ մասը, Խաչիկ գյուղի անունով կոչվել է Խաչերի և ու:

Ստեփանոս Օրբելյանը Սյունյաց նահանգի հարկատու գյուղերի ցուցակում չի հիշատակում Խաչիկ գյուղը, գուցե այն պատճառով, որ ամայացած է եղել սելջուկ-թաթարական արշավանքների ժամանակ կամ թե այլ անուն է կրել: Հայտնի է, որ Շահաբաս առաջինը 1605 թ. Խաչիկի բնակչությանը ես թշել է Պարսկաստան: Գյուղը վերստին շենացվել է 17-րդ դարի կեսերին: Խաչիկ գյուղի սահմաններում եղած հուշարձաններից հայտնի են.



Քարկոփի կամ Խոտակերաց վանք — Ստեփանոս Օրբելյանը պատմում է, որ Վայոց ձորի ստորոտներում, Հրասեկա բերդի սահմաններում, Արաստամուխ գյուղի մոտ բնակվում էր «խոտակեր» ճգնափորների մեծ բազմություն, որի հիմնական բնակատեղին Արաստամուխի մոտ եղած եկեղեցին էր, ուր պահվում էր Խոտակերաց Խաչ կոչվող ս. նշանը:

Արաբական արշավանքներից հետո Սյունյաց Աշոտ իշխանը վերաշինել է տալիս այս եկեղեցին և նվիրում Արաստամուխ գյուղը, բայց կարճ ժամանակից հետո եկեղեցին ավերվում է երկրաշարժից: Աշոտ իշխանի կինը՝ Շուշանիկը, իր ամուսնու հիշատակը հավերժացնելու նպատակով վերաշինել է տալիս եկեղեցին, որը ավարտվում է 910 թվին: Եկեղեցու օծմանը մասնակցում է նաև Հովհաննես կաթողիկոսը: Այս վերաշինման արձանագրությունը պահպանվել է եկեղեցու հարավային պատի վրա:

Խոտակերաց եկեղեցին գմբեթավոր դահլիճ է, արտաքուստ քառանկյունի, ներսից խաչաձև հատակագծով կիսակլոր խաչթևերով: Յուրաքանչյուր անկյունում ունի մեկական խորան, որոնք բոլորն էլ արևելյան կողմից ունեն կիսակլոր աբսիդներ: Արևելյան կողմի խորանների դռները բացվում են դեպի արևմուտք՝ կողերի խաչթևերի մեջ, իսկ արևմտյան կողմի խորանների դռները՝ արևմտյան խաչթևերի մեջ՝ իրար դիմաց: Միակ մուտքն արևմտյան կողմից է, որը բացվում է գավթի մեջ: Յուրաքանչյուր խաչթևի կենտրոնական մասից բացվում է մեկական կամարակապ, երկար ու նեղ լուսամուտ:

Խաչթևերը միացնող անկյուններից ձգվող զրանաձև կիսապուրաները միանալով կամարներով, իրենց վրա կրել են գմբեթը: Պատերը շարված են ավազաքարի մասամբ տաշված և մեծ մասն անտաշ քարերով: Եկեղեցին այժմ ավերակ վիճակում է՝ քանդված են ծածկը, պատերի վերին մասերը, գմբեթը, գլխավոր աբսիդի կոնխը, իսկ պատերի մեջ առաջացել են ճեղքեր (նկ. 15):

Գավիթ — այժմ ավերված. գտնվում է եկեղեցուն կից, արևմտյան կողմում: Սրահաձև շենք է, կառուցման ժամանակը և կառուցողները հայտնի չեն: Հատակագիծը քառանկյունի

է եղել: Ներսում, հարավային և հյուսիսային պատերին կից եղած երկուական ուղղանկյուն որմնասյուների մնացորդների գոյությունը ենթադրել է տալիս, որ նրանք միացել են կամարներով, գոտիկով թաղակապ ծածկը: Մուտքը հարավային կողմից է: Պատերի կանգուն մնացած մասերը շարված են ավազաքարի անտաշ և ծակոտիկն գորշ գույնի տուֆի տաշված քարերով:

Գավթի արևմտյան կողմում, պատի ամբողջ երկարությամբ, մի շարքով կառուցված են երկու փոքր, մատուռանրման շենքեր: Հարավային կողմի շենքի դուռը բացվում է դեպի հարավ, իսկ հյուսիսայինի դուռը՝ դեպի արևելք՝ գավթի մեջ: Այդ երկու շենքերից էլ պահպանվել են միայն պատերի ստորին մասերը, որոնք շարված են անմշակ ավազաքարով:

Խոտակերաց կամ Քարկոփի վանքը, բացի վերը նկարագրած հուշարձաններից, ունեցել է ուրիշ կառուցվածքներ էլ, որոնց քարուկիր շարված պատերի հետքերը նկատելի են այժմ: Վանքի շուրջը տարածվել է համանուն գյուղը, որի շենքերի հազիվ նկատելի հետքերն են պահպանվել: Գետնի երեսին թափված են կավե ամանների բազմաթիվ կտորներ, որոնց մի մասը բնորոշ է վաղ միջնադարին: 13-րդ դարում Քարկոփի վանքը և գյուղը կազմում էին Ամաղու Նորավանքի սեփականությունը:

Գերեզմանոցը գտնվում է վանքի հարավային և հարավարևելյան կողմում: Գերեզմանաքարերը կրաքարից են, մի մասը բնական սալերի ձևով: Այստեղ կա մի մահարձան, որի պատվանդանը երկու խոշոր քարից է, քանդակազարդ խաչքարով և 1271 թվականը կրող եղծված արձանագրությամբ:

Վանքից հարյուր մետր դեպի հարավ, փոքրիկ ձորակի ձախ ափին պահպանվել են Քարկոփի ջրաղացի հետքերը և մեծ քարերից փորված նավի բեկորները:

Հին գյուղատեղը գտնվում է Խաչիկ գյուղից մոտավորապես երեք կիլոմետր դեպի հյուսիս, ձորակում, որ հիմնովին ավերակ է և վեր է ածված վարելահողերի: Պահպանվել են շենքերի հետքերը՝ փոսերի ձևով: Գյուղատեղի հարավարևելյան եզրին, Ամաղու տանող ճանապարհի ձախ կողմում,



ընկած է արձանագրութիւնն ոմնեցող մի խաչքար, որ կանգնեցված է ոմն խաչիկ կրօնավորի միջոցով 1286 թվին, իր ծնողների հիշատակին: Տեղացիները այդ գյուղատեղին Առնետ են կոչում, սակայն մատենագրական տեղեկութիւնները որոշակի ցույց են տալիս, որ սա Արաստամուխ գյուղն է եղել:

**Գերեզմանոցը** գտնվում է գյուղի մեջ, փոքրիկ բարձրութեան վրա. գերեզմանաքարերը կրաքարից են, հասարակ մշակումով: Քարկոփի եկեղեցու քարերից ևս օգտագործել են որպէս գերեզմանաքարեր, որոնց վրա կան հին արձանագրութիւնների հետքեր: Այդ գերեզմանոցը վերաբերում է գյուղի վերջին՝ վերաշինման ժամանակին՝ 17-րդ դարին:

Գյուղի արևելյան կողմում, դեպի դաշտը տանող ճանապարհի աջ կողմում, լեզվաձև մի փոքրիկ բլուրի վրա, նկատելի են տանիքի կիսախողովակաձև կղմինդրի բազմաթիվ կտորներ:

### ԳՆԻՇԻԿ ԳՅՈՒՂ

Գնիշիկը հիշատակվում է 10-րդ դարից. նշանավոր է եղել իր ձորով, որը համաձայն Ամաղու Նորավանքի ժամատան վրա եղած մի արձանագրութեան, կիպարիտի որդի Սմբատ Օրբելյանը 13-րդ դարի կեսերին նվիրում է Նորավանքին: Գնիշիկա ձորը միաժամանակ կոչվել է նաև Թմաձոր: Այդ ձորի սկզբնավորութեան մասում, լեռնաշղթայի մի գագաթի վրա, գտնվել է Սյունյաց իշխանների նշանավոր ու անառիկ ամրոցներից մեկը՝ Հրասեկա կամ Հրաշկա բերդը: Օրբելյանները, տեր դառնալով Վայոց ձորին, ավելի ամրացրին Հրասեկա բերդը, դարձնելով այն իրենց ամենավստահելի հենակետերից մեկը: Մոնղոլական Ասլան խանը, որը 13-րդ դարի կեսերին հարձակվել է Հրասեկա բերդի վրա, ուր ամրացել էր կիպարիտի որդի Նլիկում Օրբելյանը, տեսնելով բերդի անառիկութիւնը, հրաժարվում է գրոհից և գործը վերջացնում հաշտութեամբ: Այժմ էլ պահպանվել են Սյունյաց այդ երբեմ-

նի նշանավոր ամրոցի՝ Հրասեկա բերդի ավերակները՝ Հարսնաքար (Գյալին—կայա) լեռան գագաթին:

Գնիշիկ գյուղը ևս ավերվել է մի քանի անգամ և վերաշինվել 17-րդ դարում: Չնայած գյուղի խոր հնութեանը, երանում պահպանված երկու գերեզմանոցներից մեկը, որը շատ անշուք է, գտնվում է գյուղի հյուսիս-արևմտյան եզրին՝ բարձունքի վրա: Գերեզմանաքարերը ավազաքարից են, տարբեր ձևով մշակված, մասամբ քայքայված վիճակում: Գերեզմանոցում կան նաև խաչքարեր՝ բնական սալերի ձևով, փորված պարզ խաչերով: Խաչքարերի մի մասը վայր է ընկած գետինն. որոշ խաչքարեր օգտագործված են որպէս գերեզմանաքարեր: Գերեզմանոցը պատկանում է 11—14 և 17—18-րդ դարերին:

Մյուս, ավելի ընդարձակ, գերեզմանոցը գտնվում է գյուղի մեջ, հարավային մասում և, հավանաբար, տարածվել է մինչև եկեղեցին: Սա ամբողջապէս քանդվել է գյուղի շինարարութեան ընթացքում. մնացել են միայն առանձին գերեզմանաքարեր՝ բակերի ցանկապատերում կամ պարտեզների ու բանջարանոցների մեջ: Գերեզմանաքարերը դեղնակարմիր ավազաքարից են, օրորոցաձև և լավ մշակված ու զարդարված կենցաղային և այլ զարդաքանդակներով, ոմանց վրա կան գրութիւններ՝ 17-րդ դարից: Գերեզմանաքարերի մի մասը տեղահան են արված, ոմանք թաղված են գետնի մեջ ու ծածկված հողով. կան նաև քանդակազարդ խաչքարեր: Մի քանի խաչքարեր էլ գտնվում են գյուղի հարավային կողմում՝ բլուրի լանջին:

Գնիշիկ գյուղի սահմաններում պահպանվել են Գանձակ և Գոմք (Գոմեր) հին գյուղատեղերը: Այդ երկու գյուղերն էլ հիշատակվում են Սյունյաց եպիսկոպոսարանին հարկատու գյուղերի ցուցակում: Գանձակը սահմանակից էր Ամաղու Նորավանքին, որի առաջնորդ Հովհաննես Կապանեցին, 12-րդ դարի սկզբներին, խլեց այս գյուղի հողերի մի մասը և սեփականեց վանքին:



Ենթադրվում է, թե պատմական Նորիք գյուղն է սա, որը հիշատակվում է 13-րդ դարում: Գյուղի սահմաններում պահպանված նյութական կուլտուրայի մնացորդները վկայում են, որ այս գյուղը գոյություն է ունեցել դեռ 8—9-րդ դարերում և շեն է եղել մինչև 17-րդ դարի երկրորդ կեսը: 19-րդ դարի 30-ական թվականներին այստեղ հաստատվում են Սալմաստից ներգաղթած հայեր, իսկ դարի կեսերին փոխադրվում են նաև Ամաղուլում բնակված վանեցի և ալաշկերտցի գաղթականները:

Գանձակ գյուղի սահմաններում պահպանվել են մի քանի հին գերեզմանոցներ ու մատուռներ, որոնք պատկանում են տարբեր ժամանակներին:

Մատուռներից մեկը գտնվում է գյուղից մեկ կիլոմետր դեպի արևելք, Միկոյան տանող ճանապարհի ձախ կողմում, սարալանջին: Չնայած մատուռի շենքը պատմա-ճարտարապետական որևէ արժեք չունի, սակայն նկատվում է, որ նա հիմնված է հին շենքի վայրում. պատերի մեջ օգտագործված են 17-րդ դարին վերաբերող փոքր խաչքարեր. կից նկատվում են երկու այլ շենքերի հետքեր և փոքրիկ գերեզմանոց՝ խաչքարերով, որոնք վերաբերում են 10—17-րդ դարերին: Բնորոշ են խաչքարերը, իրենց հնագույն ձևերի քանդակներով, որոնք մեծ մասամբ տեղաշարժված են ու ջարդված:

Մյուս մատուռը գտնվում է գյուղից կես կիլոմետր դեպի հյուսիս-արևելք, Միկոյան տանող ճանապարհի աջ կողմում, երկու ձորակների միացման անկյունում: Այդ մատուռը նույնպես ճարտարապետական արժեք չունի, սակայն դան վերևում դրված մի քարի վրա նշված է 1605 թ., իսկ մի այլ քարի վրա, մանր տառերով, փորագրված է արձանագրություն: Արևմտյան կողմում կան մի քանի գերեզմաններ ու խաչքարեր, որոնք պատկանում են 9—10, 13—17-րդ դարերին և մեծ մասամբ տեղաշարժված են ու ջարդված: Խաչքարերից երկուսը կոթողաձև են, որոնք վերաբերում են կոթողներից խաչքարերի անցնելու միջանկյալ ժամանակաշրջանին՝ 9—10-րդ դարերին:

Երկու գերեզմանոցներից մեկը գտնվում է գյուղից կես կիլոմետր դեպի հյուսիս-արևելք, երկու ձորակների միացման վայրի վերջավորությամբ վրա, Միկոյան տանող ճանապարհի ձախ եզրին, նախորդ մատուռին մոտիկ: Սա մի փոքրիկ գերեզմանոց է, հասարակ տապանաքարերով և խաչքարերով՝ 13-րդ դարին հատուկ պարզ զարդաքանդակներով:

Մյուս գերեզմանոցը գյուղի հյուսիս-արևելյան եզրին է, բարձունքի լանջին: Գերեզմանաքարերը մշակված են կիսով չափ, սովորական տափակ ձևով և մեծ մասամբ թաղված են գետնի մեջ. ունեն 1670, 1674 թվականների տապանագրություններ:

Բացի վերոհիշյալ երկու գերեզմանոցներից, երրորդը գյուղի ներկայիս գերեզմանոցն է, որը գտնվում է գյուղի հարավային կողմում, որ որպես տապանաքար օգտագործել են մի քանի քանդակագործ խաչքարեր, որոնցից մեկի վրա կա տապանագրություն՝ 1320 թվականով:

Գյուղական եկեղեցին վերակառուցված է 19-րդ դարի վերջին քառորդում, որի պատերի մեջ օգտագործված են 16—17-րդ դարի խաչքարեր. դրան վերևում դրված խաչքարն ունի 1533 թվականը:

Գանձակ գյուղի սահմանակցին պետք է հիշատակել նաև «Գալիխաչ» խաչքարը, որը գտնվում է գյուղի արևմտյան կողմում, լեռնաշղթայի վրա, Գնիշիկ տանող ճանապարհի եզրին: Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ, երբ Հովհաննես եպիսկոպոսը Ամաղու նորավանքում վերակազմում է վանական միաբանությունը և վանքին սեփականացնում Ամաղու, Տխարբ, Գանձակ գյուղերի հողերը, Հրասեկա, Անապատ ամրոցները և Ամաղվա ձորն ու Գնիշիկա ձորը, նա այդ սահմանների վրա կանգնեցնում է խաչքարեր: Հավանական է, որ Գալի-խաչ խաչքարը լինի Հովհաննես եպիսկոպոսի կանգնեցրած սահմանաքար-խաչքարերից մեկը, որովհետև նման խաչքարեր հանդիպում են նաև Ամաղուի սահմաններում և Հրասեկա բերդի մոտ, մանավանդ, որ այժմ էլ այդ լեռնաշղթան սահմանաբաժան դիժ է հանդիսանում Գանձակի և Գնիշիկի դաշտերի միջև:



Գյուղամիջի եկեղեցին կառուցված է 18-րդ դարի վերջերին: Այժմ ավերակ վիճակում է և պատմա-ճարտարապետական արժեք չունի, բացի պատերի մեջ դրված 17-րդ դարին վերաբերող խաչքարերից: Գյուղի եզրին, Միկոյան տանող ճանապարհի ձախ կողմում, կան մի քանի գերեզմաններ և թեթև մշակված մի խաչքար՝ 1551 թվականն ունեցող կարճ տապանադրություն:

Գյուղից երկու կիլոմետր դեպի հարավ, սարալանջին տարածվում է Վարդաբլուր ընդարձակ գյուղատեղին, ուր պահպանվել են քարաշար տների, եկեղեցու, ձիթհանի և գերեզմանոցի ավերակները: Եկեղեցին կառուցված է 1740 թվին, եռանկղ բազիլիկ ձևով: Ներսում կան երկու մույթեր, որոնց դիմաց, պատերի վրա կան ուղղանկյուն որմնասյուներ, որոնք վկայում են ծածկի թաղակապ լինելը: Պատերը շարված են թերթաքարով, թույլ կրաշաղախով, նրանց մեջ ազուցված են խաչքարեր, մեկը՝ 1709 թվականով: Գուռը հարավային կողմից է: Ավերակ վիճակում է՝ քանդված է ծածկը և պատերի վերին մասերը:

Գերեզմանոցը տարածվում է եկեղեցու շուրջը. գերեզմանաքարերը բնական սալեր են, մեծ մասամբ տեղաշարժված կամ թաղված գետնի մեջ: Մի գերեզմանաքար տուֆից է, բարձրադիր, լավ մշակված և զարդարված է 17-րդ դարին բնորոշ կենցաղային քանդակներով:

Ձիթհանից պահպանվել են շենքի հետքերը՝ խոր փոսի ձևով և նրանում յուղատու բույսը տրորող կլոր, մեծ քարը:

Վարդաբլուր գյուղատեղի մոտ, սարի զազաթին պահպանվել են ամրոցի պարիսպների մնացորդները: Անկասկած է, որ Վարդաբլուր գյուղատեղին հին Վարդենիք մեծ գյուղն է, որը հիշատակվում է Սյունյաց հոգևոր թեմի ցուցակում, իսկ ամրոցը Նրբույն բերդն է, որ պատկանում էր Արփա գյուղում բնակվող կապանեցի Մեհանյան տոհմին:

Հետագայում գյուղը նվիրվում է Ամաղու Նորավանքին:

Ճյուղ մույնպես կոչվել է Ագարակաձոր և պատկանել է Նորավանքին: 1211 թվին Լիպարիտ Օրբելյանի խնդրանքով, Զաքարե սպասալարն այս գյուղը վերադարձնում է Նորավանքին: Նույն դարի վերջերին Նորավանքը ետ է ստանում գյուղը սելջուկ Աթաբեկ Ելտկուլից: Ագարակաձորը հիշվում է Տաթևի թեմին հարկատու գյուղերի ցուցակում: Չնայած գյուղի այդ հնությունը, որևէ նշանակալից հուշարձան չի պահպանվել, բացի գերեզմանոցներից, մի կամուրջից և մի քանի այլ մնացորդներից:

Գերեզմանոցը գտնվում է գյուղից մոտ մեկ կիլոմետր դեպի հարավ-արևելք, լեռնաշղթայի սեռի վրա: Ժամանակին եղել է բավական ընդարձակ, ունեցել է մեծ թվով քանդակազարդ խաչքարեր, որոնք այժմ ջարդված ու տեղաշարժված են. քանդակները բնորոշ են 12—14-րդ դարերին:

Հին բնակատեղին տարածվում է գյուղից մեկ և կես կիլոմետր դեպի հարավ-արևելք, բերդաձորում: Այժմ վեր է ածված վարելահողի: Գետնի երեսին թափված են մեծ քանակությամբ կավե խեցիներ, որոնց մեջ գերակշռում է վառ-կարմրադույն ներկը, որ հատուկ է 10-րդ դարին: Գյուղատեղին կից բարձրացող լեռան ժայռոտ գագաթին նկատվում են վաղ միջնադարի ամրոցի ավերակների մնացորդներ: Գյուղատեղում թափված մեծ քանակությամբ ոչ սովորական ամանների կտորները և դրան կից ամրոցի գոյությունը վկայում է, որ այս վայրը եղել է իշխանանիստ ավան: Ագարակաձոր գյուղը սելջուկյան Աթաբեկ Ելթկուլի կողմից Նորավանքին նվիրելու միջոցին, նրա մայրը դրան ավելացնում է նաև Անապատանի բերդով: Անկասկած է, որ այդ գյուղատեղին ամրոցին կից հիշյալ Անապատ գյուղը պիտի լինի:

Գերեզմանոցի արևելյան եզրին կա մի հասարակ մատուռ-ալպատանդի, վերակառուցված 20-րդ դարի սկզբներին, որին տեղացիք Անապատ են կոչում: Մատուռի ներսում դրված են խաչքարեր, իսկ պատերի մեջ օգտագործված են հին շենքի սրբատաշ քարեր և գերեզմանաքարեր՝ կենցաղային և



զանազան կենդանիների ու թռչունների բարձրաբանդակներով: Բոլոր այդ բեկորները վերաբերում են 13—15-րդ դարերին:

Մի ուրիշ գերեզմանոց էլ գտնվում է գյուղից մոտ երկու կիլոմետր դեպի արևելք, Արփա գետի հովտում, լեռնաշարի վերջավորությամբ փոքրիկ բարձունքի վրա: Գերեզմանաքարերը տուֆից են, զանազան ձևերով մշակված, ոմանք շատ մեծ: Գերեզմանոցում կան խաչքարեր, որոնց մի մասն օգտագործված են որպես գերեզմանաքարեր. դրանցից միքանիսն ունեն տապանագրություն, որոնցից մեկն ունի 1341 թվականը, իսկ մի կանգոն խաչքարը՝ 1281 թվականը:

Ազարակաձորի սահմաններում եղած հուշարձաններից առավել աչքի է ընկնում կամուրջը, որը գտնվում է գյուղից մոտավորապես մեկ և կես կիլոմետր դեպի արևելք, Արփա գետի վրա: Սա միաթոփչ լայն կամարով մեծ կամուրջ է, շարված մարուր տաշված և կիսատաշ տուֆ քարերով՝ կրաշաղկախով: Մաքուր տաշված քարերով շարված հիմնական մասը վերաբերում է կամուրջի հիմնադրմանը, հավանաբար 13-րդ դարին, իսկ կիսատաշ քարերով շարված մասը վերաբերում է նրա վերանորոգումներին՝ հետագա դարերին (նկ. 16):

### ՄԱԼԻՇԿԱ ԳՅՈՒԳ

Այգիներով հարուստ Մալիշկայում և նրա սահմաններում համարյա չեն մնացել պատմական հուշարձաններ, միայն մոտիկ Մոզ ավանի ավերակներն են, որ տարածվում են Մալիշկայից մոտ երեք կիլոմետր դեպի հարավ-արևելք, Արփա գետի հովտում: Մոզի մասին հիշատակություն կա 5-րդ դարից՝ Վարդանանց պատերազմի կապակցությամբ: Այնուհետև հիշվում է 8-րդ դարի առաջին կեսում, իմաստասեր Ստեփանոս Սյունեցու եղեռնական սպանության կապակցությամբ: Հիշվում է նաև 13-րդ դարի Տաթևի վանքին հարկատու գյուղերի ցուցակում, որպես ընդարձակ բնակավայր: 8—9-րդ դարերի երկրաշարժից մեկի ժամանակ Մոզը ավերվել է և կրկին վերաշինվել: Ենթադրվում է, որ նա մինչև 16-րդ դարը

չեն է եղել: Մոզի շուրջը և ամբողջ ավերակները պատած են քարե կարկանդակներով. հրաբուխ է եղել, թե, կարծես, մի մեծ ժայռ է փլվել այդ տարածության վրա: Այդ կարկանդակների մեջ նկատելի են առանձին քարաշար պատերի մնացորդներ, ավերակ եկեղեցու և գերեզմանոցի հետքեր:

### ՎԵՐՆԱՇԵՆ (Բաշխեղ) ԳՅՈՒԳ

Վերնաշենը հարուստ է պատմական հուշարձաններով. նրա սահմաններում են գտնվում Թանատեի կամ Թանատի, Սպիտակավոր Աստվածածնի և Արկյազի ս. Խաչ վանքերը, ինչպես նաև Բոլորաբերդ ամրոցը: Գյուղի հիմնադրման մասին ստույգ տեղեկություններ չկան, սակայն 12—15-րդ դարերում եղել է մեծ ավան և հանդիսացել է Պոռչյան իշխանների գլխավոր նստավայրը:

Վերնաշենը իր հիմնադրման ժամանակից մինչև 18-րդ դարի կեսերը կոչվել է Սարկողովք կամ Սրկոլունք:

Արկազի ս. Խաչ վանքը գտնվում է Վերնաշենից մոտ 7 կիլոմետր դեպի արևելք, ձորակի ձախ ափին: Հիմնադրման ժամանակը ստույգ հայտնի չէ, պատմական աղբյուրներում հիշատակվում է 8-րդ դարից. եղել է Վալոց ձորի Նշանավոր ուխտատեղիներից մեկը, որը հետագայում ավերվել է և նրա տեղը, հավանաբար, 17—18-րդ դարերում կառուցվել է ուրիշ եկեղեցի՝ ս. Ստեփանոս անունով, իսկ վերջինս հիմնովին վերաշինվել է 1870—1871 թթ.:

Սա մի գմբեթակիր բազիլիկ է. ներսում ունի չորս մուլքներ, որոնք միանալով կամարներով, իրենց վրա են կրում գմբեթը՝ ութակող թմբուկով և սրածայր վեղարով: Մուլքերի դիմաց, պատերի վրա և արսիդի եզրերին կան որմնասյուներ, որոնք մուլքերի հետ միանում են կամարներով: Արևելյան կողմից ունի կիսակլոր աբսիդ՝ բարձր բեմով և երկու խորան: Արևմտյան, հարավային և հյուսիսային, կողմերից ունի մուտքեր: Յուրաքանչյուր պատի կենտրոնական մասից բացվում է մեկական մեծ, կամարակապ լուսամուտ, նման մեկական լուսամուտ էլ բացվում է գմբեթի թմբուկի յուրա-



քանչյուր նիստի վրա: Շարված է ավագաքարի մաքուր տաշ-  
ված փոքր քարերով՝ կրաշաղախով, ներսից ավագած է  
(նկ. 17):

Եկեղեցու շուրջը տարածվում են Արկազն գյուղի ավերակ-  
ները, իսկ հյուսիսային կողմում՝ փոքրիկ գերեզմանոցը: Գե-  
րեզմանոցին մոտիկ, բնական ժայռի վրա կանգնեցված է մի  
խաչքար, որի արձանագրությունից երևում է, որ կանգնեցրել  
է Հակոբ երեցը 1312 թվին՝ իր և իր կնոջ հիշատակին: Եկե-  
ղեցու արևմտյան մուտքի առջևում կան մի քանի գերեզման-  
ներ, որոնցից մեկի վրա կա եղծված տապանագրություն՝  
1304 թվականով: Վերջին տարեթիվերը ցույց են տալիս, որ  
Արկազի ս. Խաչ վանքի հին կառուցվածքները կանգուն են  
եղել մինչև 14-րդ դարի սկզբները: Վանքը պարսպապատ է,  
պարսպից ներս պահպանվել են վանականների և ուխտա-  
վորների բազմաթիվ անշուք սենյակներ՝ ավերակ վիճակում:

Թանաթի վանքի կամ Ղաբավանքի հիմնադրման ժամա-  
նակը որոշ չէ, պատմական աղբյուրներում հիշվում է 8-րդ  
դարից: Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ, 735 թվին մի  
անբարոյական կնոջ կողմից Մոզ ավանում սպանված Սյուն-  
յաց Ստեփանոս իմաստասերին թաղում են նախ Արկազի  
Քրիստափոր զորավարի անվան մատուռում, իսկ երբ 40 օրից  
հետո դադարում են ստորերկրյա ցնցումները, նրա դիակը  
փոխադրում են ոչ հեռու Թանաթի վանքը՝ կառուցելով մա-  
տուռ-դամբարան: Հետագայում՝ 1279 թվին, այդտեղ կառու-  
ցում են գմբեթավոր եկեղեցի, որը մինչև այսօր էլ կանգուն  
է: 8-րդ դարի կառուցումներից ոչ մեկը չի պահպանվել:

Արկազ գյուղից հարավ, փոքրիկ բլուրի դադաթին պահ-  
պանվել են մի հին շենքի հիմնապատեր, որը, հավանաբար,  
եղած լինի Քրիստափոր զորավորի անվան մատուռը:

Թանաթի վանքը բաղկացած է երկու եկեղեցիներից, գե-  
րեզմանատնից և կից այլ շենքերի ավերակների մնացորդնե-  
րից: Գլխավոր եկեղեցին արձանագրությունների մեջ կոչվում  
է ս. Ստեփանոս. կառուցվել է Պոռո իշխանի տիրապետության  
ժամանակ և, հավանաբար, նրա հրամանով՝ 13-րդ դարում,  
կազմելով Պոռոյանների սեփականությունը: Եկեղեցին զբա-

բեթավոր է, արտաքուստ քառանկյունի, ներսից խաչաձև հա-  
տակագծով ուղղանկյուն խաչքերով: Արևելյան կողմից ունի  
կիսակլոր աբսիդ՝ ցածր բեմով: Անկյուններում կան խորան-  
ներ, որոնք արևելյան կողմից ունեն կիսակլոր աբսիդներ:  
Արևելյան կողմի խորանները երկհարկանի են: Վերին հարկի  
խորանների մուտքերը բացվում են աբսիդի մեջ, ուր բարձրա-  
նում են 5 աստիճան ունեցող քարե սանդուղքներով: Արևմտ-  
յան կողմի խորանների դռները բացվում են այդ կողմի խաչ-  
քերի մեջ՝ իրար դիմաց:

Խաչքերի միացման անկյուններից ձգվում են գլանաձև  
կիսասյուններ, որոնք ունեն համանման խարիսխներ և խո-  
չակներ: Կիսասյունները միանում են կամարներով, իրենց վրա  
կրելով գմբեթը: Վերջինիս թմբուկը արտաքուստ 12 նիստ  
ունի, ներսից կլոր, իսկ վեղարը՝ սրածայր, բրգաձև:

Մուտքն արևմտյան կողմից է՝ կիսակլոր ճակատակալ մեծ  
բարով և շրջանակով: Յուրաքանչյուր խաչքեից բացվում է  
մեկական երկար ու նեղ պատուհան, նման մեկական պատու-  
հան էլ բացվում է գմբեթի թմբուկի շոքո նիստերի մեջ. մի  
կլոր մեծ անցք էլ բացվում է հարավ-արևմտյան խորանի  
հարավային պատի մեջ:

Պատերը շարված են մուգ-կապտագույն բազալտի սրբա-  
տաշ քարերով՝ կրաշաղախով, երևի այդ պատճառով էլ բնա-  
կիչները կոչել են նաև Ղաբավանք (սև վանք): Ներսից կիսա-  
սյունների խոչակների բարձրությամբ ձգվում է գոտի: Հարա-  
վային պատի արտաքին երեսին քանդակված է արևի ժա-  
մացույց, իսկ դրա վերևում մի թռչունի բարձրաքանդակ՝ իր  
ձագի հետ միասին: Գմբեթի թմբուկի կողքի վերևի մասերում  
կան վայրի գազանների, ընտանի կենդանիների և թռչունների  
բարձրաքանդակներ: Հարավային պատի վրա, լուսամտուցի  
վերև, քանդակված է Պոռոյան տոհմի խորհրդանիշը՝ թևատա-  
րած արծիվ, գառը ճանկերում բռնած:

Պատերի մեջ, արտաքուստ, կան երկուսական եռանկյունա-  
ձև խորշեր: Գմբեթի վեղարի մեջ դրված են վառ-կարմիր գույ-  
նի կավե մեծ ամաններ: Հուշարձանը կանգուն է, բայց քայ-  
քայված վիճակում: Թանաթի վանքը հարուստ է պատմական



արժեք ունեցող վիճակն արձանագրութիւններով (նկ. 18):

Վանքի երկրորդ եկեղեցին, որը հյուսիսային կողմից կից է նախորդին, արձանագրութիւնների մեջ կոչվում է ս. Նշան կամ Վարազա ս. Նշան: Կառուցման ժամանակը հայտնի չէ, սակայն կառուցման ձևը և նյութի մշակումը որոշակի ցույց են տալիս, որ ժամանակակից է նախորդին: Միանեֆ բազիլիկ տիպի շենք է, ներսից պատերն ունեն երկուսական ուղղանկյուն որմնասյուներ, որոնց միացնող թաղակիր կամարները գոտկում են թաղածածկ առաստաղը:

Շարված է մուգ-կապտագույն բազալտի սրբատաշ մեծ քարերով կրաշաղախով: Դուռը արևմտյան կողմից է՝ կիսակլոր շքեղազարդ ճակատակալ քարով և շրջանակով: Ճակատակալ քարի քանդակները պատկերում են ծաղկահոփող դաշտ, բազմաթիվ կենդանիներով ու գազաններով և մի հեծյալ՝ որս անելիս: Ճակատակալ քարի կամարածե շրջանակը պատած է ստալակտիտ զարդաքանդակներով (նկ. 19): Այս շենքն ավերակ վիճակում է. ամբողջապես քանդված են արևելյան կեսը և կանգուն մնացած պատերի վերին շարքերը: Քանդված մասերը թափված են ներսը, որի հետևանքով շենքի ներսը համարյա անտեսանելի է դարձել:

Վանքի հարավային կողմում նկատվում են սրբատաշ քարովիր պատերի մնացորդներ, իսկ շուրջը տարածվում է գերեզմանատուն, որի քարերի մեծ մասը ծածկված են փլատակներով: Գլխավոր եկեղեցու արևելյան կողմում գտնվող Սարգիս բահանայի գերեզմանի տապանագիրն ունի 1356 թվականը: Գերեզմանոցում պահպանվել են մի քանի խաչքարեր, որոնք կիսով չափ թաղված են գետնի մեջ:

Թանաթի վանքից դեպի հարավ, Արկազ տանող ճանապարհի եզրի փոքրիկ բարձունքի վրա, գտնվում է ոչ մեծ գերեզմանոց, ուր կան մի շարք քանդակազարդ խաչքարեր, որոնք պատկանում են 13—14-րդ դարերին: Այդ գերեզմանոցից դեպի արևելք, հարթավայրում, նույն ճանապարհի եզրին գտնվում է արձանագրութիւն ունեցող մի ուրիշ խաչքար: Այդպիսի խաչքարեր նկատվում են նաև Արկազ տանող ճանապարհի վրա, բլուրների արանքում և Թանաթի վանքից

արևմուտք, ձորի աջ կողմում՝ բլուրն էլ ավերակ վիճակում:

Սպիտակավոր աստվածածին վանքը գտնվում է Վերնաշենից մոտ 7 կիլոմետր դեպի հյուսիս, մոտակա լեռնագագաթի հարավային լանջին, փոքրիկ ձորակի մեջ: Վանքը բաղկացած է մեկ եկեղեցուց և գավթից, պարսպապատ է, պարսպից ներս գտնվում են միաբանության բնակելի շենքերը և գերեզմանոցը: Արձանագրութիւնների մեջ վանքը կոչվում է Սպիտակավոր ս. Աստվածածնի անապատ, ս. Կարապետի անապատ, Անապատ ս. Գրիգորի:

Եկեղեցին գմբեթավոր է (նկ. 20)՝ քառանկյունի հատակազօծով. արևելյան կողմից ունի կիսակլոր աբսիդ՝ ցածր բեմով: Կողերի պատերը ներսից ունեն ելուստներ, որոնցից ձգվում են դանաձև կիսասյուներ՝ խարիսխներով ու խոյակներով: Այդ ելուստների և արևմտյան պատի արանքում գոյացել են խոր ընկած, մեծ խորշեր՝ կամարակապ դազաթով, պատած ստալակտիտ քանդակներով: Գմբեթի թմբուկը դանաձև է, սրածայր վեղարով: Դուռն արևմտյան կողմից է. յուրաքանչյուր պատի կենտրոնական մասից բացվում է մեկական երկար ու նեղ լուսամուտ, նման չորս լուսամուտ էլ բացվում են գմբեթի թմբուկի մեջ:

Հուշարձանի արտաքին երեսապատը մաքուր տաշված դեղնագույն քարից է, իսկ ներսի երեսապատը և կիսասյուները՝ գորշագույն բազալտի սրբատաշ քարից՝ կրաշաղախով: Ներսը սալահատակված է, տանիքը ևս պատած է սալաքարերով: Քանդակների մեջ բնորոշ է դուռն ճակատակալ քարի բարձրաքանդակը, ուր պատկերված է Աստվածածինը մանուկ Հիսուսը գրկին (նկ. 21): Ունի մի շարք արձանագրութիւններ՝ 1321, 1322, 1330, 1339, 1346, 1433, 1448 թվականներով: Կառուցման ժամանակը հայտնի չէ, սակայն, լստ բլուր տվյալների, վերաբերում է 13-րդ դարին:

Գավթիքը գտնվում է եկեղեցուն կից արևմտյան կողմում: Սա կառուցված է եկեղեցուց հետո, հավանաբար 14-րդ դարում: Հատակագիծն ուղիղ քառանկյունի է. յուրաքանչյուր պատի մեջ դրված են երկուսական կալունակներ, որոնց միջև ձգվում են որմնակամարներ: Ունի չորս մուտք՝ երկուսը



հյուսիսային, մեկը հարավային և մեկն էլ արևմտյան կողմերից: Պատերի մեջ կան տարբեր մեծություն մի քանի խորշեր: Շարված է մաքուր տաշված դեղնագույն փոքր քարերով՝ կրաշաղախով: Ավերակ վիճակում է. ամբողջապես քանդված են ծածկը և պատերի վերին մասերը:

Գավթի արևմտյան պատի վրա պատն արտաքուստ քիչ հաստացնելով, Հովհաննես և Թադևոս ամուսինները 1321 թվին կառուցել են փոքրիկ զանգակատուն՝ հաղթական կամարի նմանությամբ (նկ. 22):

Վանքի պարսպապատերը շատ բարձր են ու հաստ, շարված տարբեր մեծություն լեռնաքարերից՝ ցեխով: Պարսպից ներս պահպանվել են վանքի միաբանության բնակելի մի քանի շենքերի պատերի ստորին մասերը: Վերջիններս շատ փոքր են և շարված են գետաքարերով՝ ցեխով: Վանքի շուրջը, պարսպի ներսում, նկատվում են մի քանի գերեզմաններ, որոնք ծածկված են հողով:

Բոլորաբերդ ամբողջ գտնվում է Սպիտակավոր Ասավածածին վանքից դեպի արևելք, մոտ երեք կիլոմետր հեռու, լեռան սրածայր գագաթին: Կոչվում է նաև Պոռշաբերդ, որ պիսի հանգամանքը ենթադրել է տալիս, որ վերակառուցված լինի Պոռշ իշխանի կողմից, երբ Զաքարյանները Վալոց ձորի մի մասը տվեցին Պոռշյաններին: Բոլորաբերդի արևմտյան կողմում, հարթավայրի վրա, փոքրիկ ձորակի ամին նկատելի են հին բնակատեղի հետքեր՝ փոսերի ձևով, հավանական է, որ սրանք Բոլորաբերդ գյուղի ավերակները լինեն:

Վերնաշենի գյուղական եկեղեցու շենքը պատմա-ճարտարապետական արժեք չունի, սակայն նա շինված է հին եկեղեցու տեղում, պատերի մեջ օգտագործված են միջին դարերին վերաբերող շենքի սրբատաշ քարեր և քանդակագործ խաչքարեր: Գյուղի սահմաններում հազիվ պահպանվել են միջին դարերին և ավելի ուշ ժամանակներին վերաբերող գերեզմանոցներ և մահարձանների բեկորներ: Ճանապարհորդները Վերնաշենում արձանագրել են Պոռշյան իշխանների ապարանքի ավերակների մնացորդները, սակայն այժմ դրանց հետքերն անգամ չեն նկատվում:

## ԳՎԱԶՈՐ (Օրբախենդ) ԳՅՈՒԳ

Գյուղի հարավային կողմում պահպանվել են միջնադարի մի ամբողջի հետքեր, ուր նկատելի են բրգավոր պարսպների հիմնապատերի փոքրիկ մնացորդներ և առանձին շենքերի հետքեր՝ փոսերի ձևով: Ամբողջի վայրում կա մի խաչքար, որը կանգնեցված է 1316 թվին: Այս ամբողջին, ավանդաբար, վարդանի բերդ են կոչում: Գյուղի հյուսիսային կողմում նրկատեղի են հին գյուղի գերեզմանոցի մնացորդները 13—14-րդ դարերի խաչքարերով:

## ՄԻԿՈՅԱՆ (Քեշիշենդ) ԳՅՈՒԳ

Միկոյան գյուղը պատմական հոտորակել գյուղն է, որ հիշատակվում է 5-րդ դարում, Վարդանանց պատերազմի կապակցությամբ: Ստեփանոս Օրբելյանը պատմում է, որ Ավարայրի ճակատամարտից հետո, հայկական մի զորախումբ նահանջելով դեպի Արցախ նահանգը, Վալոց ձորով անցնելիս, Եղեգիս և Մոզ (Արփա) դետերի միախառնման վայրում, Եղեգիս գետի ձախ կողմում, մի բլուրի մոտ, որը շրջապատված էր հաստահեղույս ամրոցապատերով, նրանց վրա է հարձակվում պարսկական մի զորամաս: Տեղի ունեցած արշուճալի և անհավասար կռվում հայ զինվորներից շատերն ընկնում են հերոսի մահով, որոնց մարմինները հավաքում և թաղում են նույն վայրում: Ապա Գյուստ կաթողիկոսի (465—474 թթ.) կարգադրությամբ այս վայրում, ամրոցածև բլուրի մոտ, հայ նահատակների գերեզմանի վրա կառուցվում է մի մեծ եկեղեցի: Հետագայում, երկրի ավերման հետ միասին, ավերվում է նաև վերոհիշյալ եկեղեցին: Ավելի ուշ այդտեղ բնակավայր է դառնում՝ կոչվելով հոտորակել:

Վերջին տասնամյակների ուսումնասիրությունների ընթացքում այն համոզումն է մշակվել, որ Միկոյան գյուղը միջնադարյան Փոնձաթաղ նշանավոր այգեետ ավանն է եղել, որ հիշատակվում է 15-րդ դարի վերջին իր մենաստանով, որի պատճառով էլ հավանաբար կոչվել է Քեշիշենդ (տերտերի



գյուղ): Սակայն տեղագրական հետազոտությունները ենթադրել են տալիս, որ Խոտորալեղը ներկայիս Միկոյան գյուղը պետք է լինի, որը գտնվում է հենց Եղեգիս և Արփա գետերի ջրընկեց վայրում, իսկ գյուղի եզրին պահպանվել է ամրոցապատերով շրջափակված բլուրը՝ շարված հաստահեղույս քարերով և դրա մոտ վերակառուցված եկեղեցին: Գուցե Գյուլա կաթողիկոսի կարգադրությամբ կառուցված եկեղեցին շինված է եղել այդ նույն եկեղեցու տեղում, ինչպես այդ մասին անցյալ դարի տեղագիրներն են հաղորդում, այսինքն, որ այս եկեղեցին կառուցված է հին եկեղեցու հիմնապատերի վրա:

Գյուղին մոտիկ ավերակ ամրոցն այժմ կոչվում է Քյոշք, որը Սյունյաց ամենահնագույն բերդերից է և հավանաբար կառուցված լինի մեր թվականությունից առաջ: Ամրոցապատ բլուրի գագաթին նկատվում են միջին դարերին պատկանող մի քանի գերեզմաններ:

### ՇԱՏԻՆ ԳՅՈՒՂ

Շատինը հարուստ է հիշատակման արժանի վայրերով և արվեստի հուշարձաններով: Բնորոշ է, որ պատմական հնագույն աղբյուրներում չի հիշվում Շատին գյուղի անունը, որը գուցե և այդ ժամանակ դեռ գոյություն չուներ: Վարդանանց պատերազմից հետո, պարսիկների կողմից հետապնդվող հայ զինվորների երկրորդ մարտը տեղի է ունենում Շատինից հարավ, Բերդաբար ամրոցի մոտ, Անգղ ձորում, իսկ երրորդ մարտը՝ Շատինից հյուսիս-արևելք, այժմյան Ալայազ և Նրդափին գետերի միախառնման վայրում, ուր հայ զինվորներից զոհվում են երեք հարյուր հոգի:

Շատինի սահմաններում եղած հուշարձաններից հայտնի են.

Շատիվանք գտնվում է գյուղից մոտ չորս կիլոմետր զեպի արևելք, համանուն ձորակի աջ ափին. բաղկացած է մեկ եկեղեցուց և վանական միաբանության բնակելի ու այլ շենքերից (նկ. 23): Եկեղեցու հիմնադրման ժամանակը նշվում

է 10-րդ դարը և ունեցել է երկու նշանավոր շրջան՝ 10—13-րդ և 16—18-րդ դարեր:

Եկեղեցին կոչվում է ս. Սիոն, որը 1671—1674 թթ. վերակառուցել է շուղայեցի գրասեր վաճառական Մահտեսի Հակոբը: Շենքը մի եռանկյն բազիլիկ է. ներսում ունի չորս մույթեր, որոնց դիմաց, պատերի վրա, կան որմնասյուներ: Արևելյան արսիդի երկու կողմում կան սովորական խորաններ: Արևմտյան, հարավային և հյուսիսային կողմերից ունի մուտքեր: Պատերի և արսիդի մեջ բացվում են 8 լուսամուտ, իսկ արևմտյան կողմից ունի սրահ՝ կամարակապ բացվածքներով: Պատերի արտաքին կողմը սրբատաշ քարից է, իսկ ներսից՝ փոքր անտաշ քարերով՝ կրաշաղախով: Պատերի մեջ օգտագործված են հին շենքի սրբատաշ քարեր, գերեզմանաքարեր և խաչքարեր: Ներսից սվաղը մեծ մասամբ թափված է. սվահպանվել են արսիդի սվաղի որոշ մասերը, որոնց վրա նկատելի են որմնանկարների հետքեր՝ դիմանկարներ ու ծաղկանկարներ: Քառակուսի բարձր պարիսպը շարված է լեռնաքարով, թույլ կրաշաղախով: Հարավային կողմից ունի երեք բրդածև աշտարակ: Սրահածև դարբասն արևմտյան կողմից է. շարված է սրբատաշ քարերով (նկ. 24): Դարբասի առաջ պահպանվել է այժմ ցամաքած ջրմուղի ծորակը:

Մոտ 35 բնակելի և այլ բարաշեն շենքերը կառուցված են պարսպի ներսում, նրա ամբողջ երկարությամբ: Բոլոր շենքերն էլ երկհարկանի են, վերին հարկի սենյակները ծառայել են որպես բնակարան և հյուրանոց, իսկ ստորին հարկի շենքերը՝ որպես սեղանատուն, խոհանոց, ամբարներ և այլն: Սենյակներից մի քանիսը շինված են մաքուր տաշված քարով՝ կրաշաղախով, իսկ մնացածները՝ անտաշ քարով: Առաջինները վերաբերում են 13—14, իսկ երկրորդները՝ 17—18-րդ դարերին: Վանքի բակում գտնվում են մեծ ջրամբարներ և հացահատիկի հորեր:

Երկու մասից բաղկացած ձիթհանը գտնվում է պարսպից դուրս, արևմտյան կողմում, ավերակ վիճակում: Պատի արձանագրությունից երևում է, որ ձիթհանը ևս վերանորոգվել է:



Ջրաղացի ավերակ շենքը գտնվում է հարավ-արևելյան կողմում, ձորակի ափին: Պահպանվել է քարերից փորված հազվագյուտ նավը, որի տրամագիծը՝ վերին մասում մեկ և կես մետր է, ստորին մասում՝ կես մետր: Սա դրված է համարյա ուղղաձիգ վիճակում, հավանաբար ջրի սակավության պատճառով՝ անկումն ուժեղացնելու նպատակով:

Վանքի շուրջը եղել է գերեզմանոց, որ մեծ մասամբ քանդել են ներկա եկեղեցու կառուցման պատճառով, մի մասն էլ ծածկվել է փլատակներով: Արևելյան պատի տակ պահպանվել են Դավիթ վարդապետի և աստապատցի Սարգսի գերեզմանները՝ համապատասխան մակագրություններով: Մի փոքրիկ գերեզմանոց էլ գտնվում է վանքի հյուսիս-արևելյան կողմում, պարսպից դուրս, ավերված վիճակում:

Շատիվանքի մեծածավալ շենքերի քանակը ցույց է տալիս նրա միաբանության մեծությունը և տնտեսական հզորությունը: Սա եղել է Սյունիքի կրոնական խոշոր կենտրոններից մեկը, հատկապես 17-րդ դարում, երբ ունեցել է 70 հոգու հասնող միաբանություն, դպրոց, գրատուն: Լինելով դեպի Սելիմ—Սեանի ափերը տանող բանուկ ճանապարհի վրա, կապված է եղել Նոր Զուղայի, Նախիջևանի և Գոլթանի վաճառականության հետ: Այստեղ գրվել են ձեռագրեր: Չիթհանը, ջրաղացը, բնակելի շենքերը վերաբերում են հենց 17—18-րդ դարերին:

Անգղի կամ Նահատակի մատուր գտնվում է Շատինից մեկ և կես կիլոմետր հարավ, Եղեգիս (Ալայազ) գետակի ձախ կողմում, փոքրիկ ձորակի աջ ափին: Այդ ձորակը ևս կոչվել է Անգղ ձոր: Այս մատուրը, վերը հիշված երկրորդ մարտում ընկած զինվորների դամբարանն է, որը կառուցվել է 5-րդ դարում և բազմիցս ենթարկվել վերամոտրոգումների՝ միանգամայն փոխելով իր սկզբնական ձևը: 5-րդ դարից պահպանվել են միայն որոշ բեկորներ: Վերջին վերանորոգումը կատարվել է 1871 թվին: Վերանորոգողներից մեկի՝ Կիրակոս կրոնավորի գերեզմանը գտնվում է մատուռի ներսում՝ համապատասխան տապանագրությամբ: Մատուրը փոքր է, ուղղանկյուն հատակագծով, ծածկը թաղակապ է: Պատերը շարված են դեղնա-

կարմրագույն և գորշագույն տուֆի տաշված քարերով՝ կրաշաղախով:

Մատուռին կից, բլրալանջին տարածվում է նոր գերեզմանոցը՝ զանազան ձևերով մշակված, կենցաղային ու երկրաչափական քանդակներ ունեցող տապանաքարերով: Գերեզմանոցում կա 1291 թվականի քանդակագիրը մի խաչքար:

Մի ուրիշ մատուռ էլ գտնվում է նահատակի մատուռից քառորդ կիլոմետր դեպի արևելք, նույն ձորի ձախ ափին: Այդ մատուռը նույնպես փոքր է, համարյա նախորդի մեծությամբ, բայց շատ ուշ շրջանի գործ է: Սրանից մնում են միայն հիմնապատերը, որոնք շարված են անմշակ լեռնաքարերով: Արևելյան կողմից ունի կիսակլոր աբսիդ:

Մատուռի շուրջը տարածվում է փոքրիկ գերեզմանոց: Բնական սալերից բացի, կան նաև սովորական տափակ ձևով մշակված գերեզմանաքարեր: Գերեզմանների մի մասի արևելյան ծայրերին տնկած են սալաքարեր՝ փորված պարզ խաչերով, որոնք ուշ միջնադարի հետքերն են կրում:

Շատուրի կամուրջը գտնվում է գյուղից մոտ երեք կիլոմետր հարավ, Եղեգիս գետակի վրա: Կառուցել է Շատիվանքի առաջնորդ Սարգիս վարդապետը 1666 թվին: Սա բավականին լայնաթևիկ կամարով կամուրջ է եղել, շարված կապտագույն բազալտ քարերով՝ այժմ մնում է գետի աջ ափում գտնվող մասը:

Շատինի մոտերքում գտնվում են նաև երեք այլ կամուրջներ, որոնցից մեկը կառուցված է Արտաբուն (Երդափին) վտակի վրա, գյուղից դեպի հյուսիս-արևելք: Սա նույնպես միաթևիկ փոքր կամուրջ է, շարված բազալտի քարերով և պատկանում է 17-րդ դարին: Մյուս կամուրջը գտնվում է Եղեգիս (Ալայազ) գետակի վրա, գյուղից քիչ վերև, «Կաթնով աղբյուրի» մոտ: Պահպանվել է միայն գետակի աջ կողմի խելը, որը շարված է սրբատաշ մեծ քարերով՝ կրաշաղախով. տեղացիները կոչում են Հասան—Չափլան: Մի ուրիշ կամուրջ էլ գտնվում է Սուլեմա (Սելիմ) գետակի վրա, գյուղին մոտիկ, Եղեգիս գետակի միացման տեղում: Այս կամուրջը կառուցված է 14-րդ դարի սկզբներին, Սուլեմա (Սելիմի) քարավանատան կառուցման



ժամանակ, հավանաբար նույն Չեսարի կողմից, որի համար էլ երևի այժմ հայտնի է Չուբուկ—Քորսիի անունով: Սակայն այժմյան կանգուն կամուրջը հիմնովին վերաշինվել է 17-րդ դարում: Վերջերս, Միկոյան—Մարտունի խճուղու շինարարության ժամանակ վերստին վերակառուցվել, մեծացվել է այդ կամուրջը:

Կամուրջի հյուսիս-արևելյան կողմում, բլուրի լանջին կան 14-րդ դարին պատկանող երկու խաչքարեր, որոնցից մեկի վրա հիշվում է կամուրջի կառուցման մասին: Այս խաչքարերն այժմ ցած են ընկած:

Եկեղեցին գտնվում է գյուղից մեկ և կես կիլոմետր դեպի հյուսիս-արևելք, Արտաբուն վտակի ձախ ափին, Եղեգիս տանող ճանապարհի ձախ կողմում: Սա այն եկեղեցու տեղում է, որ Արտաբունի (Երզնկային) և Ոստինքի (Հոստուն) բնակիչները կառուցեցին 300 հերոս նահատակների գերեզմանների վրա: Միանեֆ բաղրիկ ձևի փոքրիկ եկեղեցի է, շարված կուպիտ կերպով մշակված որձաքարերով՝ կրաշաղախով: Արևելյան կողմից ունի աբսիդ, մուտքն արևմտյան կողմից է: Այժմ ավերակ վիճակում է. մնում են պատերը՝ մեկ և կես մետր բարձրությամբ:

Աղվանք եկեղեցին գտնվում է Շատինից մոտ հինգ կիլոմետր հարավ-արևմուտք, բարձրադիր վայրում: Կառուցման ժամանակը որոշ չէ, պատերը շարված են մաքուր տաշված սպիտակ քարից, որի համար գուցե տեղացիք կոչում են Աղ (սպիտակ) վանք: Ավերակ վիճակում է. պահպանվել է արեւելյան մասը, որի երեսապատ քարերը մեծ մասամբ պոկված են: Նկատվում է, որ փոքր է եղել, արևելյան կողմից տնի երկու խորան՝ փոքրիկ աբսիդներով: Մուտքն արևմտյան կողմից է: Եկեղեցու շուրջը նկատելի են մի քանի գերեզմաններ, մեկը 1311 թվականի:

### ԵՂԵԳԻՍ (Երզնկային) ԳՅՈՒՂ

Եղեգիսը պատմական Արտաբուն կամ Արտաբունք գյուղն է, որ հիշվում է շատ վաղուց: 5-րդ դարի Վարդանանց զինվորների վերջին ընդհարումը տեղի է ունենում Արտաբունին

մոտիկ, նեղ ձորակում: Կռիվը տեղում է մինչև ուշ երեկո, և հայկական նահանջող զորամասը գիշերը ետ է քաշվում, պարօրինները մտնում են գյուղ:

Հաջորդ օրը գյուղացիք հավաքում են սպանված հայ զինվորների դիակները, թաղում այդ նույն վայրում և կառուցում մի մատուռ: Հնագիտական հետազոտությունները ենթադրել են տալիս, որ ճակատամարտը տեղի պետք է ունեցած լինի գյուղից մոտ մեկ կիլոմետր հարավ, ճանապարհի եզրին, այգիների մեջ գտնվող փոքրիկ մատուռի վայրում: Չնայած մատուռը կառուցված է 20-րդ դարի սկզբներին, բայց մեջք հավաքված հին քարե բեկորները, մանավանդ կից կանգնած կոթողը, որն անվիճելիորեն պատկանում է առնվազն 7-րդ դարին, վկայում են, որ հենց այդ նույն տեղում է եղել պատմության մեջ հիշվող մատուռը՝ հայ զինվորների գերեզմանը:

Եղեգիսի սահմաններում են գտնվում Յախաց քար կամ Ղոշավանք մենաստանը, Չոխ-վանք եկեղեցին, Սմբատաբերդ ամրոցը և այլ մանր հուշարձաններ:

Չոխ-վանք գտնվում է գյուղից մեկ կիլոմետր դեպի հյուսիս, ձորամիջի փոքրիկ սարահարթի վրա: Սա այժմ հիմնովին ավերակ մի եկեղեցի է, որի բեկորները շարել են իրար վրա և դարձրել մատուռ-ուխտատեղի, իսկ մոտակա մեծ ջրվեժի պատճառով էլ կոչել Չոխ-վանք (Ջրնկեցի վանք): Սրբատաշ քարերի մեջ բնորոշ են դուան կիսակլոր ճակատակալ քարը, շրջանակի սյունազարդերը և 13—14-րդ դարերին հատուկ ստալակտիտ զարդաքանդակներով այլ բեկորներ:

Սմբատաբերդ — այս ամրոցը գտնվում է Եղեգիս գյուղի արևելյան կողմում, ընդհանուր լեռնաշղթայից դեպի Եղեգնաձոր կամ Ալայազի ձորը թեքվող առանձնակի վրա: Առանձնակի երկարությունը մոտ մեկ կիլոմետր է. արևելյան և հարավային կողմերից եզերվում է Եղեգիսի ձորով, արևմտյան կողմից՝ Արտաբունի ձորով, իսկ հյուսիսային կողմից մի պարանոցով հարակցվում է ընդհանուր լեռնաշղթային: Առանձնակն ունի լեռնազագաթի ձև. արևելյան, արևմտյան և հարավային կողմերից պաշտպանված է ձորի բնական անառիկ, բարձրաբերձ քարափներով, որոնք կրկնակի ամրացված



են արհեստական բարձր ու լայն, բրգավոր պարիսպներով: Մատչելի է միայն հյուսիսային կողմից, որը նույնպես ամրացված է պարիսպներով:

Պարիսպները շարված են սեպածև մշակված բազալտի մեծ քարերով՝ կրաշաղախով, սեպի սուր ծայրը դարձրած դեպի պատը, որի հաստությունը 2—3 մետր է: Պարիսպների ներսում, նրանց ամբողջ երկարությունը, ձգվում են բազմաթիվ բնակելի շենքեր, որոնք շարված են բազալտի քարաբեկորներով՝ ցեխով, բոլորն էլ ավերակ վիճակում: Ամբոցի գլխավոր մուտքը հյուսիսային կողմից է, մեկական մուտքեր էլ կան արևելյան և արևմտյան կողմերի հյուսիսային ծայրերից: Հյուսիսային և արևելյան մուտքերը սրահավոր են, շարված են բազալտի սրբատաշ քարերով՝ կրաշաղախով, սրահի տանիքին կան պահակատներ ու դիտանոցներ՝ ավերակ վիճակում:

Ամբոցը մի ընդհանուր պատով բաժանված է հարավային և հյուսիսային մասերի. երկու մասերումն էլ կան միջնաբերդեր, ջրի ավազաններ և բնակելի շենքեր: Հարավային մասում բնակելի շենքերը միայն միջնաբերդում են: Ամբոցի ջուրը բերվել է Յախաց բարի մոտի աղբյուրներից, որի ջրմուղի հետքերը որոշակի կերպով նկատվում են լեռնաշղթայի պարանոցի մասում՝ ճանապարհի եզրին:

Ամբատաբերդը Վայոց ձորի և ընդհանրապես Սյունիքի հին անառիկ և խոշոր ամբոցներից է. հավանական է, որ նա գոյություն ունեցած լինի նույնիսկ 5-րդ դարից էլ առաջ:

Վասակյանները Եղեգիսը դարձնելով իրենց վարչաքաղաքական կենտրոնը՝ հավանաբար ռազմական հենակետ են դարձրել հենց այս ամբոցը: Իսկ Օրբելյանների տիրապետության ժամանակ Ամբատաբերդն ավելի է ամրացվում: Ստույգ հայտնի չէ այս ամբոցի իսկական անունը. ժողովուրդը սովանդաբար Ամբատաբերդ է կոչում, թերևս այն պատճառով, որ նրան մոտիկ Եղեգիս գյուղաքաղաքում թաղված է Օրբելյան թագապետի ասպետներից մեկը՝ Ամբատ թագավորը, որը գուցե և վերակառուցել է բերդը, բայց ավելի հավանական է, որ նա կոչվելիս լինի 10-րդ դարում ապրած Սյունյաց Ամբատ Իշխանի անունով:

Յախաց բար վանքը գտնվում է Եղեգիս գյուղից մոտ վեց կիլոմետր դեպի հյուսիս-արևելք, բարձրավանդակի վրա: Բաղկացած է երկու խմբից, որի պատճառով տեղացիների կողմից կոչվում է Ղոշա (գույգ) վանք: Խմբերը միմյանցից հեռու են 200 մետրաչափ և դասավորված են արևելքից արևմուտք: Թեև հիշատակություն կա վանքի մասին 5-րդ դարից, սակայն այդ ժամանակին վերաբերող հուշարձաններ չեն պահպանվել:

Յախաց բարի արևմտյան խմբի գլխավոր եկեղեցին (նկ. 25) կոչվում է Աստվածածին, որը կառուցվել է հին շենքի տեղում, Ամբատ Բագրատունու օրոք՝ 10-րդ դարում: Սա մի կենտրոնազմբեթ կառուցվածք է, արտաբուստ քառանկյունի, ներսից խաչածև հատակազօով՝ կիսակլոր խաչթևերով: Յուրաքանչյուր անկյունում ունի մեկական խորան՝ փոքրիկ արսիղներով:

Գլխավոր մուտքը արևմտյան խաչթևից է, որը բացվում է նույն կողմում գտնվող մեծ սրահից, իսկ երկրորդ մուտքը հարավային կողմից է, ուր նույնպես կա ավելի փոքր սրահ: Եկեղեցին կիսավեր վիճակում է:

Արևմտյան սրահը բավական երկար է՝ եկեղեցու ընդհանուր լայնությունը, կողերի պատերից ձգվում են շորսական որմնասյուներ, որոնք միանալով կամարներով, պատերի վրա առաջացնում են խոր և մեծ խորշեր: Չնայած ծածկը քանդված է, սակայն նկատվում է, որ թաղակապ է եղել, ուր միացել են որմնասյուները թաղակիր կամարներով: Այս սրահն այժմ ամբողջովին ավերակ է:

Եկեղեցու հարավային պատի երկարությունը ձգված մյուս սրահը նեղ է նախորդից: Սրահի հյուսիսային պատին կից ձգվում են հինգ որմնասյուներ, որոնք միանալով, որմնակամարներով պատի վրա առաջացնում են շորս մեծ խորշեր: Սրահի արևելյան ծայրում գտնվում է քառակուսի մի փոքր սենյակ. արևմտյան կողմից պատի փոխարեն, կամարակապ բացվածք է՝ սրահի ընդհանուր լայնությունը, իսկ հարավային կողմից գտնվում են կամարակապ երեք բացվածքներ: Սրահը շարված է բազալտի սրբատաշ քարով, ծածկը թաղա-



կապ է. հավանաբար կառուցված լինի 11—12-րդ դարերում:  
Երկրորդ եկեղեցին կոչվում է ս. Հովհաննես, գտնվում է  
խմբի հարավային ծայրում: Կառուցման ժամանակը ստույգ  
հայտնի չէ, արևելյան պատի վրա, արտաքուստ փորագրված է  
ՆԵՆԸ (448+551=999) թվականը: Սա երկարովի շենք է, միա-  
նեֆ բազիլիկ տիպի: Կողերի պատերին կից, ներսից ձգվում են  
մեկական ուղղանկյուն որմնասյուներ, որոնք միանում են թա-  
ղակիր կամարներով: Արևելյան կողմից ունի կիսակլոր աբսիդ,  
մուտքն արևմտյան կողմից է: Հարավային կողմից կան երկու  
խորաններ, մեկը հարավ-արևելյան, մյուսը՝ հարավ-արևմուտ-  
յան անկյունում: Արևելյան կողմի խորանի դուռը բացվում է  
եկեղեցու աբսիդի մեջ, իսկ արևմտյան կողմի խորանինը՝ ան-  
միջապես դեպի եկեղեցին: Երկու խորանների միջև, նրանց  
ամբողջ լայնուփյամբ գոյացած է մեծ խորշ՝ թաղակապ ծած-  
կով: Շարված է տարբեր տեսակի անմշակ քարով՝ կրաշաղա-  
խով: Քանդված են ծածկը և պատերի վերին մասերը, որոնք  
թափված են եկեղեցու ներսը և շուրջը:

Մասուր գտնվում է ս. Հովհաննես եկեղեցու հարավա-  
յին կողմում, ամբողջովին ավերված վիճակում, ուստի ան-  
հնարին է որևէ բան ասել առանց մաքրման և ուսումնասի-  
րության:

Յախաց քարի հուշարձանների այդ խումբը շրջափակված  
է հասարակ քարերից, բայց կրաշաղախով շարված պարսպով,  
որի միայն արևելյան մասն է կանգուն: Դարբասն արևելյան  
կողմից է, ներսից ընդարձակ, թաղակապ ծածկ ունեցող սրա-  
հով: Ամբողջ մուտքը շարված է գորշ բազալտի սրբատաշ  
քարով, պատերի վրա փորված են բազմաթիվ խաչքարեր և  
արձանագրություններ: Դարբասի ճակատի արձանագրությու-  
նը հավաստում է, որ 1222 թվին վերանորոգվել է Աստվածա-  
ծին եկեղեցու տանիքը և վանքի մյուս շենքերը:

Յախաց քարի այդ խմբին են պատկանում նաև վանական  
միաբանությունից բնակելի շենքերը և ձիթհանը, որոնք գտնվում  
են հուշարձանի արևմտյան մասում, հիմնովին ավերակ վիճա-  
կում. ավերակների մեջ նկատվում են առանձին գերեզման-  
ներ ու խաչքարեր:

Յախաց քարի արևելյան խումբը բաղկացած է երկու եկե-  
ղեցիներից, մի քանի մահարձաններից ու գերեզմանոցից:

Գլխավոր եկեղեցին կոչվում է ս. Կարապետ, որը կառուց-  
վել է 1041 թվին: Գմբեթավոր այս շենաղ հուշարձանը, որ լա-  
վագույններից է Հայաստանում, արտաքուստ քառանկյուն է.  
ներսից խաչաձև հատակագծով: Յուրաքանչյուր անկյունում  
կա փոքրիկ աբսիդ ունեցող մի-մի խորան: Գմբեթի թմբուկը  
գլանաձև է, բուխ վեղարով, միակ մուտքը հարավային կող-  
մից է: Արևելյան և արևմտյան պատերի մեջ բացվում են  
երեքական լուսամուտ, հարավային պատի մեջ՝ երկու լուսա-  
մուտ և մի կլոր անցք: Լուսամուտները երկար են ու նեղ,  
ունեն շրջանակներ, ոմանք՝ նաև պսակներ: Արևելյան, հարա-  
վային և հյուսիսային պատերի մեջ արտաքուստ կան երկուս-  
կան եռանկյունաձև խորշեր:

Հուշարձանը շքեղորեն զարդարված է բուսական, երկրա-  
չափական և մանածո ձևերի նուրբ մշակված զարդաքանդակ-  
ներով, առանձնապես ուշագրավ են լուսամուտների և գմբեթի  
շուրջը եղած ինչպես և քիվերի զարդաքանդակները: Խիստ  
բնորոշ է հյուսիսային պատի վրա եղած բարձրաքանդակը,  
որը պատկերում է առյուծը՝ թաթերի մեջ բռնած մի եղ  
(նկ. 26, 27):

Վանքի այս խմբի երկրորդ եկեղեցին կոչվում է ս. Նշան,  
որը կառուցված է նախորդ եկեղեցու հետ, միայն փոքր է  
նրանից: Մուտքն արևմտյան կողմից է և բացվում է եկեղե-  
ցու անբաժան մասը կազմող փոքրիկ սրահի մեջ:

Սրահի արևմտյան պատին կից կառուցված է հատուկ  
պատվանդան, որի եզրերին կանգնեցված են մեկական խոշոր  
խաչքարեր: Այս խաչքարերի արանքում ստեղծված է բարձր  
ու լայն մի խորշ, զույգ կամարաձև զազաթով: Սրանից վերև  
եղած կառուցվածքները քանդվել են. պահպանվել է միայն  
հյուսիսային եզրին դրած գնդաձև մեծ պատվանդանը, որը  
ենթադրել է տալիս, թե դա մահարձան է՝ կոթողաձև վերջա-  
փորություն: Խաչքարերն ունեն ավելի քան երեք մետր բարձ-  
րություն և համաչափ լայնություն, պատած զանազան ձևերի  
ամենամուրբ ու շքեղ զարդաքանդակներով (նկ. 28):



Եկեղեցու տանիքի վրա, խաչքարերի հեռուում, կա փոքրիկ, սովորական ձևի մի մատուռ: Երկու եկեղեցիներն էլ կառուցված են բազալտի սրբատաշ քարով:

Գերեզմանոցը տարածվել է եկեղեցիների շուրջը, որը մեծ մասամբ ավերված է. հատ ու կենտ գերեզմանաքարեր թաղված են գետնի մեջ, իսկ մեծ մասը ծածկված է հողով, խաչքարերն ընկած գետին: Գլխավոր եկեղեցու հարավային կողմում կան մի քանի մահարձաններ՝ գեղաքանդակ խաչքարերով:

### ՀՈՐԲԱՏԵՂ ԳՅՈՒՂ

Այս գյուղի հիմնադրման ժամանակը հայտնի չէ, հուշարձանների բեկորները վերաբերում են 10—12-րդ դարերին: Գյուղամիջի եկեղեցին վերակառուցվել է 17-րդ դարում: Պատերի մեջ օգտագործված են հին եկեղեցուն պատկանող սրբատաշ քարեր, գերեզմանաքարեր և խաչքարեր, որոնք բնորոշ են 12—14-րդ դարերին:

Վերակառուցված եկեղեցին եռանկյն բազիլիկ ձևով է, ներսում ունի երկու մույթ, որոնցից ձգվող կամարների ծայրերը հենվում են կողերի պատերի մեջ գրված կալոնակների վրա, իսկ մյուսները՝ ծայրերի պատերից ձգվող որմնասյուների վրա: Արևելյան կողմից ունի կիսակլոր աբսիդ, որի կողքերին կան խորաններ: Ծեփն ավերակ է, պահպանվել է հյուսիսային խորանը և հյուսիսային պատը:

Գյուղի մեջ երևում է նաև հին գերեզմանոցի մի մասը:

Բախչաջուղ գյուղատեղին գտնվում է գյուղի հյուսիսարևմտյան կողմում, ձորակում: Պահպանվել են տների հետքերը՝ փոսերի ձևով: Գյուղատեղի արևմտյան եզրին, գետակի ձախ ափին, կան երկու մեծ ու գեղաքանդակ խաչքարեր, որոնց հիմքերը թաղված են գետնի մեջ: Մի խաչքարը 1291 թվականի է:

### ԱԼԱՅԱԶ ԳՅՈՒՂ

Ալայազը պատմական Եղեգիս կամ Եղեգինքն է, որը Հաստատնի հնագույն և նշանավոր ավաններից է և հիշատակվում է 5-րդ դարից: 9-րդ դարում Եղեգիսը դառնում է Սյունյաց նահանգի վարչական կենտրոն: Օրբելյանները տեղ դառնալով վայոց ձորին, Եղեգիսը դարձնում են իրենց իշխանության կենտրոնը: Այդ ժամանակ Եղեգիսն ավելի է ընդարձակվում և բարգավաճում: Ժամանակակից պատմիչներն անվանում են գյուղաքաղաք, քաղաք և նույնիսկ մայրաքաղաք: Եղեգիսի սահմաններում պահպանված բազմաթիվ եկեղեցիները, մահարձան-կոթողները, գերեզմանոցները, իշխանական տպարանքների, դամբարանների և ջրմուղի մնացորդները վկայում են նրա երբեմնի բարգավաճ վիճակի մասին: Բնակավայրի հյուսիսային կողմի սարավանջին, ընդարձակ տարածության վրա, այժմ էլ նկատելի է խաղողի և պտղատու ծառերի այգիների ու ջրոտղման սիստեմի հետքերը:

Եղեգիսը իր երկարատև պատմության ընթացքում ունեցել է երկու նշանավոր շրջան: Առաջինը եղել է Սյունիքի տեղական թագավորության ժամանակ՝ 10—11-րդ դարերում, երբ ավանը տարածվել է Եղեգիս գետակի աջ ափին, մինչև Հոստուն գյուղը, ունենալով ավելի քան չորս կիլոմետր երկարություն: Այս ժամանակի ավերակներում գեռ նկատելի են փողոցների, պարսպապատերի ու շենքերի մնացորդները: Անհավանական չէ, որ ավերումը տեղի է ունեցել միանգամից՝ դուցե ստորերկրյա ուժեղ ցնցումներից: 11-րդ դարից Սյունիքի վարչական կենտրոնը Կապան քաղաքն էր: Հավանական է, որ հենց այդ ժամանակներում էլ տեղի ունեցած լինի Եղեգիսի առաջին ավերումը:

Եղեգիսի երկրորդ շրջանը սկսվում է Օրբելյանների իշխանության հաստատումով՝ 13-րդ դարից և տևում է մինչև երկրորդ ավերման ու ամայացման ժամանակ, հավանաբար 15-րդ դարի վերջերը: Այս շրջանում Եղեգիսը տարածվում է նախկին վայրից ավելի արևելք, գետակի աջ կողմում, ձորի ամբողջ գոգավորության վրա:



Նղեգիսը մշտապես շմնաց Օրբելյանների աթոռանիստը-  
վիպարիտի որդի Տարսախիճը բնակատեղի ընտրեց Արփա  
գյուղը, կառուցելով իր համար դարբաս-ապարանք, որին մո-  
տիկ գտնվող Ամաղու Նորավանքը իրենց տոհմական գերեզ-  
մանատունն էր: Սակայն դրանից հետո էլ Օրբելյան իշխան-  
ների մի մասը շարունակում էր մնալ Նղեգիսում և այնտեղ  
էլ ունեին գերեզմանոց: Նղեգիսի այս ժամանակի պահպան-  
ված հուշարձաններն ամբողջությամբ պատկանում են Օրբել-  
յանների տիրապետության ժամանակին:

15-րդ դարի վերջերից մինչև 17-րդ դարը հիշատակու-  
թյուններ չկան Նղեգիսի մասին, պակասում են նաև այդ ժա-  
մանակին վերաբերող հուշարձանները: Սրանից պետք է հն-  
թաղրել, որ այդ ժամանակամիջոցում Նղեգիսն ավերված ու  
անմարդաբնակ է եղել:

**Ս. Ստեփանոս կամ Զորաց եկեղեցին** (նկ. 29, 30) գտնվում  
է գյուղի արևելյան կողմում, բարձրադիր վայրում: Կառուցել  
է Սյունյաց Տարսախիճ իշխանի որդի Ստեփանոս Օրբելյան  
պատմիչը՝ 13-րդ դարում: Իր կառուցման ձևով սա հայ ճար-  
տարապետության պատմության եզակի հուշարձաններից  
մեկն է: Տարածված է այն կարծիքը, թե դա զինվորական  
եկեղեցի է, ըստ որի գոյություն է ունեցել միայն արևելի  
մասը, իսկ հասարակությունը, այսինքն՝ զորքը աղոթել է  
բացօթյա: Սակայն հետազոտությունները ցույց են տալիս, որ  
բացի արևելի մասից, գոյություն է ունեցել հատուկ շենք՝  
հասարակության համար, որն արևմտյան կողմից ունեցել  
է ամբողջական փակ պատ՝ հատուկ դռնով, իսկ կողերից  
եղել է սրահաձև՝ կամարակապ բացվածքներով, հավանաբար  
երեք թևերով:

Արևելի մասի տանիքը երկթեք է, արևմտյան պատը ունի  
երեք կամարակապ բացվածքներ՝ դռների նմանությամբ, իսկ  
արևելի կողերից կան երկու խորաններ, որոնց դռները  
բացվում են դեպի արևմուտք:

Սկեղեցու սրահաձև մասից այժմ պահպանվել են միայն  
վերաշինված հիմնապատերը, որ ենթադրել է տալիս, թե եկե-  
ղեցին նորոգված է 17—18-րդ դարերում:

Նկեղեցին շրջափակող պարսպի գլխավոր մուտքն արե-  
վելյան կողմից է՝ մեծ դարբասի ձևով:

Պարսպի ներսում տարածվում է գերեզմանատունը: Տա-  
պանաքարերն ունեն կենցաղային բնույթի զարդաքանդակներ  
և գրություններ՝ 1325, 1338, 1344, 1347 թվականներով:  
Պարսպի ներսում պահպանվել են նաև մի քանի բնակարան-  
ների ավերակներ:

**Ս. Նշան կամ Ս. Կարապետ եկեղեցին** (նկ. 31, 32) գտնու-  
վում է գյուղի արևելյան եզրին, պարտեզների մեջ: 13-րդ  
դարին բնորոշ գմբեթավոր փոքրիկ շենք է, քառանկյունի  
հատակագծով, կողերի պատերն արևմտյան ծայրերից ունեն  
ելուստներ, որոնց կից ձգվում են գլանաձև բներ ունեցող  
կիսասյուներ՝ խարիսխներով ու խոյակներով: Նման կիսա-  
սյուներ են ձգվում նաև արևելյան կիսակող արևելի եզրերից:  
Կիսասյուները միանալով կամարներով, իրենց վրա կրում են  
գմբեթը, որն ունի կլոր թմբուկ և սրածայր վեղար: Մուտքն  
արևմտյան կողմից է՝ կիսակող ճակատակալ քարով ու շրջա-  
նակով: Յուրաքանչյուր ճակատի կենտրոնական մասից բաց-  
վում է մի-մի շատ փոքր, երկար ու նեղ լուսամուտ. նման  
չորս լուսամուտներ էլ բացվում են գմբեթի թմբուկի մեջ:  
Հարավային պատի վրա կա արևի ժամացույց, իսկ նրա վե-  
րևում քանդակված է երկու առյուծի գլուխ:

Արևմտյան պատի վրա նկատվում են քարովիր շարվածքի  
հետքեր, որը ենթադրել է տալիս սրահի կամ զանգակատան  
գոյությունը այդտեղ:

**Ս. Նշան եկեղեցու** շուրջը տարածվում է ընդարձակ գերեզ-  
մանոց, որը հյուսիսային կողմից հասնում է մինչև լեռնաշար-  
քի ստորոտները: Գերեզմանոցի բռնած տարածության մեծ  
մասն այժմ վարելահողեր են և այգիներ, որոնց մեջ մնացել  
են առանձին գերեզմանաքարեր ու խաչքարեր: Մի քանիսն  
ունեն տապանագրություններ 1301, 1318, 1325, 1342, 1345,  
1349 տարեթվերով:

Գերեզմանոցում, եկեղեցու հարավային կողմում նկատելի  
են մի մեծ դամբարանի հիմնապատերը: Դամբարանի ներսում  
կա մի գերեզման՝ ուղղանկյուն, հարթ գերեզմանաքարով,



երեսը սպիտակ մարմարիոնի շերտով պատած: Արձանագրութեան մնացորդներից իմացվում է, որ դամբարանը պատկանում է ոմն Ներսես նահատակին:

Այս գերեզմանոցում եղած մահարձաններից առանձնապես աչքի են ընկնում եկեղեցուց դեպի հյուսիս, ճանապարհի եզրին գտնվող խաչքարերը: Մի ընդհանուր պատվանդանի վրա իրար կից կան շրջողրեն զարդարված չորս մեծ խաչքարեր, որոնք կանգնեցված են ոմն Մխիթարի, Ապլիկի և Մարգարեի կողմից՝ 13-րդ դարի կեսերին (նկ. 33):

Աստվածածին եկեղեցին գտնվում է գյուղի մեջ և կառուցված է 1708 թվին: Եռանկյն բազիլիկ տիպի մեծ շենք է: Արևելյան կողմից բարձր բեմի երկու կողմերում կան մեկական մեծ խորաններ: Արևմտյան և հարավային կողմերից ունի մուտքեր, վերջինը շարված-փակված է: Պատերի մեջ օգտագործված են խաչքարեր ու հին եկեղեցուն պատկանող քարեր և տապանաքարերի քանդակազարդ բեկորներ, որոնց վրա մնում են գրության հետքեր՝ 13—14-րդ դարերի տարեթվերով:

Եկեղեցու շրջակայքում՝ գյուղի փողոցներում և բակերում նկատվում են առանձին գերեզմանաքարեր, խաչքարեր: Եկեղեցու հարավ-արևմտյան կողմում, երկու փողոցների խաչաձևման անկյունում, ընկած է դռան մեծ ճակատակալ քար, թաղված գետնի մեջ: Այդ բոլորը ցույց են տալիս, որ եկեղեցու վայրում եղել է միջին դարերին պատկանող մի այլ եկեղեցի, որի շուրջը տարածվել է ընդարձակ գերեզմանատուն: Մատենագրութեան մեջ չորս եկեղեցիներ են հիշվում Եղեգիսում:

Կարուղիկե եկեղեցին գտնվում է գյուղի հարավային մասում, մի տան պարտեզում: Հավանական է, կառուցված լինի 10-րդ դարում: Եկեղեցին փոքր է, քառանկյունի հատակագծով, թաղակապ ծածկով: Արևմտյան և հարավային կողմերից ունի մուտքեր: Շարված է սրբատաշ մուգ-կապտագույն բազալտով, բայց ենթարկվել է վերամորոգումների և այժմ ծածկված է փայտով:

Եկեղեցուն կից կա ավերված գերեզմանոց: Պահպանվել են երկու գերեզմաններ՝ եկեղեցու հարավային կողմում և

բազմաթիվ գերեզմանաքարեր ու խաչքարեր՝ շրջակա տների, բակերի և նրանց ցանկապատերի մեջ: Այդ եկեղեցու հարավ-արևմտյան կողմում նկատվում է ձիթհանի հիմնապատերը, որոնց միջև ընկած է ձիթապտուղը տրորող մեծ քարը:

Օրբելյան իշխանների տուն-դարբասը. հայտնի է, որ Սմբատ Օրբելյանը Եղեգիս գյուղաքաղաքում կառուցել է դարբաս (ապարանք): Այժմ գյուղի մեջ, դեպի Ղառուջ տանող ճանապարհի աջ եզրին, մի տան պատի տակ ընկած է մուտքի ճակատակալ քար, որի վրա գրված է. «Այս դուռը բացվեց դեպի արևելք իշխանաց իշխան մեծ Սմբատի և յուր եղբայրների հրամանով, ովքեր մանեք այս դռնից, հիշեցեք ի Քրիստոս»: Այստեղից քիչ հյուսիս, ճանապարհի ձախ կողմում, պահպանվել է հին շենքի քարաշար պատերի կրաշաղախ գանգվածը՝ մեծ մասամբ ծածկված հողով: 20-րդ դարի սկզբներին դեռ կանգուն են եղել այդ շենքի բազալտե սրբատաշ պատերը: Հավանական է, որ հենց այդ շենքը եղած լինի Սմբատ Օրբելյանի կառուցած տուն-դարբասը:

Սմբատ իշխանի և Օրբելյան տոհմի այլ անդամների դամբարանները գտնվում են գյուղի արևմտյան եզրին, Միկոյան տանող ճանապարհի թեքման կետում, ծխախոտի չորանոցի մոտ: Սրանց մեծ մասը քանդված է այժմ: Տեղում մնում են հինգ հատ գերեզմաններ, երկու հատ իրար կողքի կանգնեցրած քանդակազարդ խաչքարեր և դամբարանի շենքի դռան կիսակլոր ճակատակալ քարը՝ բուսական միահյուսված նուրբ գարդաքանդակներով ու թռչունների բարձրաքանդակներով, դռան շրջանակի կողերի քարերը և այլ բեկորներ:

Այս օրորոցաձև գերեզմանաքարերը բազալտից են և լավ մշակված: Սմբատի գերեզմանաքարի վերին կիսակլոր մասը պատած է երկրաշափահան ձևի նուրբ քանդակներով, իսկ դռանից ներքև կա համապատասխան տապանագրություն՝ 1280 թվականով: Մյուս գերեզմանը, որ ունի 1303 թ., պատկանում է Հագարադեղին և Հասան Պուղին:

Գերեզմանոցը գտնվում է գյուղի հարավ-արևմտյան եզրին, նկատվում է, որ բռնած է եղել բավականին ընդարձակ տարածություն, ունենալով բազմաթիվ խաչքար-մահարձան-



ներ: Այժմ ավերված է, միայն տեղ-տեղ նկատվում են գերեզմանաքարերի ու խաչքարերի կույտեր: Իրենց տեղում պահպանվել են միայն մի քանի տապանաքարեր ու ճոխ քանդակներով խաչքարեր, որոնք վերաբերում են 13—17-րդ դարերին: 16—17-րդ դարերի տապանաքարերից մի քանիսն ունեն կենցաղային զարդաքանդակներ և գրություններ:

17—18-րդ դարերին վերաբերող մի այլ գերեզմանոց էլ գտնվում է գյուղի արևմտյան կողմում, Միկոյան տանող ճանապարհի վրա:

**Մահաբան-խաչաբեր** — սրանցից առաջինը գտնվում է գյուղից կես կիլոմետր դեպի արևմուտք, Միկոյան տանող ճանապարհի ձախ կողմում: Արևմտյան երեսը խորշած է, ուր դրված է երեք մետր բարձրությամբ, գեղաքանդակ մի խաչքար, որից վերև ձախատի մի քարի վրա բարձրաքանդակ՝ Քրիստոսը բազմած գահին, աջ կողմում Աստվածածինը, ձախ կողմում՝ Հովհաննես Մկրտիչը՝ համապատասխան մակագրություններով: Վերին մասն ավարտվում է վեղարավոր աանիքով: Ամբողջ մահաբանը կառուցված է բազալտի սրբատաշ քարից: Արձանագրության համաձայն մահաբանը կառուցել են Գրիգորը և Մխիթարը՝ իրենց և ծնողների հիշատակին, 1340 թվին (նկ. 34):

Երկրորդ մահաբանը գտնվում է նախորդից քառորդ կիլոմետր դեպի արևմուտք, ճանապարհի աջ կողմում, խաղողի այգու ցանկապատի մեջ: Ունի բարձր պատվանդան և մեծ ու շքեղ զարդաքանդակված խաչքար: Սարալանջի հողը ծածկել է ամբողջ պատվանդանը և խաչքարի կեսը: Այս հուշարձանը կանգնեցրել է Գրիգորը 1247 թ.:

Երրորդ մահաբանը գտնվում է գյուղից մոտ մեկ կիլոմետր դեպի արևմուտք, Միկոյան տանող ճանապարհի աջ կողմում, խաղողի այգու մեջ: Երեք հատ իրար կողքի, մեծ պատվանդանների վրա կանգնեցված մեծ խաչքարեր են, զարդարված զանազան ձևերի ամենանուրբ ու շքեղ քանդակներով: Յուրաքանչյուր խաչքարի առջևում կա մի-մի գերեզման՝ մեծ տապանաքարերով: Արձանագրության պահպանված մասերից

իմացվում է, որ մահաբանը կառուցել է Նոցարեղի թոռ, Մխիթարի որդի Ավետիսը 1283 թվին:

Գյուղի արևելյան կողմում գտնվում են երկու այլ մահաբան-խաչքարեր: Սրանցից առաջինը գյուղից հեռու է կես կիլոմետր, Դառուղ տանող ճանապարհի ձախ կողմում, ձորալանջին. բաղկացած է երկու պատվանդանավոր խաչքարերից, նուրբ զարդաքանդակներով և պատկանում է 1273 թ.: Երկրորդը մի ժայռե պատվանդան ունեցող գեղաքանդակ խաչքար է, 3 մետր բարձրությամբ, որը կանգնեցրել է ոմն Գրիգոր՝ 1279 թվին:

Նդեգիս գյուղաքաղաքի հուշարձաններից հիշատակության արժանի է նաև ջրմուղը: Պատահական փոքրամների ժամանակ բազմաթիվ վայրերից դուրս եկած տարբեր տրամաչափի կավե խողովակները ցույց են տալիս, որ քաղաքն ունեցել է ջրմուղի բավական լայն ցանց:

Գյուղի դաշտամասերում պահպանվել են բազմաթիվ այլ խաչքարեր ու գերեզմաններ՝ մի փոքր խաչքար գյուղի հյուսիսային կողմում, ձորի եզրին, մի ուրիշը՝ Դոշավանք տանող ճանապարհի վրա, մի քանի գերեզմաններ Գյուղում-Քուլաղի վանքը տանող ճանապարհին, մի խաչքար և մի մատուռ՝ Խաչի-սար լեռան գագաթին և այլն:

Գյուղում-Քուլաղի վանքը գտնվում է Ալայագից մոտ շորս կիլոմետր դեպի հյուսիս-արևելք, ընդարձակ ձորի մեջ գտնվող բլուրի հարթ գագաթին:

Բաղկացած է մի եկեղեցուց, գերեզմանատնից և կից մի քանի ավերակ շենքերից: Եկեղեցին արձանագրությունների մեջ կոչվում է Աստվածածին: Ծածկը թաղակապ է, քառանկյունի հատակագծով: Ծարված է մաքուր տաշված գորշագույն քարերով՝ կրաշաղախով. դուռն արևմտյան կողմից է: Քանդված է ծածկը և պատերի վերին մասերը, որոնք թափված են ներսն ու շուրջը: Քարերի վրա նկատվում են բազմաթիվ արձանագրություններ:

Գերեզմանոցը տարածվում է եկեղեցու շուրջը, որը մեծ մասամբ ծածկված է եկեղեցու փլատակներով ու հողով: Գերեզմանոցում եղել են խաչքարեր, որոնք բոլորն էլ վայր են



անկած: Մի խաչքար ոմնի արձանագրություն 1251 թվականով: Եկեղեցու մոտ պահպանվել են մի քանի փոքրիկ շենքերի քարաշար պատերի ստորին մասերը:

Ալաջազի արդի սահմաններում է գտնվում նաև Հոստուն գյուղատեղին, որը մինչև վերջին ժամանակները առանձին բնակավայր էր: Պատմական Ոստինք գյուղն է, որ մատենագրական աղբյուրներում հիշատակվում է շատ վաղուց, Ոստինք վանքի հետ: Գտնվում է Եղեգիսից մոտ շորս կիլոմետր դեպի արևմուտք, համանուն վտակի աջ ափին, Եղեգիս քաղաքի ավերակներին շատ մոտիկ և հավանաբար հանդիսացած լինի նրա արվարձանը:

Գյուղատեղում պահպանվել է եկեղեցին և երկու փոքրիկ գերեզմանոցներ: Եկեղեցին վերակառուցված է 17—18-րդ դարերում, եռանեֆ բազիլիկ ձևով. ներսում ոմնի շորս մույթեր, արևելյան կողմից՝ կիսակլոր աբսիդ, որի երկու կողմերում կան խորաններ. դուռը հարավային կողմից է: Շարված է անտաշ որձաքարերով՝ կրաշաղախով, շենքի մեջ օգտագործված են հին եկեղեցու սրբատաշ քարեր, գերեզմանաքարեր և գեղաքանդակ խաչքարեր, որոնցից մեկը 1251 թվականի է: Եկեղեցին կիսավեր վիճակում է:

Փոքրիկ գերեզմանոցներից մեկը գտնվում է գյուղատեղի հյուսիսային եզրին, մյուսը՝ եկեղեցուց 300 մետր դեպի հյուսիս-արևելք՝ խաղողի այգիների մեջ, որի գերեզմանաքարերը բնական սալեր են՝ գետնի մեջ թաղված:

### ՂԱՎՈՒՇՈՒՂ ԳՅՈՒՂ

#### ԿՆԵՎԱՆՔ

Կնեվանքը, որ տեղացիք կոչում են Գյունեյ վանք, գտնվում է Ղավուշուղ գյուղից երկու կիլոմետր դեպի արևմուտք, Եղեգիս գետակի աջ ձորալանջին, փոքրիկ հարթության վրա: Պատմական աղբյուրներում հիշատակվում է 10-րդ դարից, բայց հիմնովին վերակառուցվել է 17-րդ դարում:

Վանքի միակ եկեղեցին արձանագրությունների մեջ կոչվում է ս. Գրիգոր (նկ. 35). եռանեֆ փոքրիկ բազիլիկ է, ներսում ոմնի երկու մույթեր, ծածկը թաղակապ է: Բեմի երկու կողմից կան ուղղանկյուն հատակագծով խորաններ: Աբսիդի պատերի մեջ կան հինգ մեծ խորշեր: Միակ մուտքը արևմտյան կողմից է:

Պատերը շարված են բազալտի տաշված և անտաշ քարերով. պատերի և մույթերի մեջ օգտագործված են հին եկեղեցու սրբատաշ քարեր, գերեզմանաքարեր ու խաչքարեր, որոնց մի մասի վրա կան արձանագրություններ՝ 1223, 1253, 1276, 1339, 1524 և այլ տարեթվերով: Հիշվում է Օրբելյան Տարսախճ իշխանի կողմից այգի նվիրելու և նրա ժամանակ կատարված վերանորոգման մասին: Կիսավեր վիճակում է:

Վանքը շրջապատված է բարձր պարիսպներով՝ շարված անտաշ որձաքարերով՝ կրաշաղախով. մուտքն արևմտյան կողմից է: Պարսպից ներս նկատելի են վանական միաբանության շենքերի հետքեր՝ փլանդակներով ծածկված:

Եկեղեցու հարավային կողմում, պարսպից ներս նկատվում են մի քանի գերեզմաններ, որոնց տապանաքարերը բավական մեծ են և լավ մշակված, բոլորն էլ տեղահան արված: Գերեզմանաքարերի մոտ ընկած են մի քանի քանդակազարդ խաչքարեր, մեկի վրա 1223 թվականը:

Մի փոքրիկ գերեզմանոց էլ գտնվում է Կնեվանքից դեպի Ղավուշուղ գյուղը տանող ճանապարհի վրա, վանքից կես կիլոմետր արևելք. կիսավեր վիճակում է և պատկանում է 13—14-րդ դարերին:

Այդ գերեզմանոցից արևելք, ձորի ընդլայնական գոգավորության մեջ պահպանվել են հին Կնեվանք գյուղի ավերակների հետքերը՝ դար ու փոսերի ձևով:

### ԿԱՒԱՍՍԱՐ ԳՅՈՒՂ

Գյուղում եղել է հին եկեղեցու ավերակ և կից գերեզմանոց, որոնք ամբողջապես քանդվել են և սրանց քարերով տեղում այլ շենքեր են կառուցվել: Գյուղի տների պատերի,



բակերում և նրանց ցանկապատերի մեջ նկատելի են հին շենքի սրբատաշ քարեր, գերեզմանաքարեր, քանդակազարդ խաչքարեր:

### ՂԶԼԳՅՈՒԼ (Այսասի) ԳՅՈՒՂ

Արատեսի վանք — Արատեսի նշանավոր վանքը գտնվում է Արատես (այժմ Ղզլգյուլ, նախկին Այսասի) գյուղում (նկ. 36, 37):

Գյուղի և վանքի մասին պատմական տեղեկությունները հասնում են 9-րդ դարին, սակայն նրանք գոյություն են ունեցել դեռ 7-րդ դարում: Տարսախճ իշխանը Արատես գյուղը և վանքը նվիրում է Ամաղա նորավանքին, որպես ամառանոց, նրա բարձրաստիճան հոգևորականության համար:

Արատեսի վանքի զլխավոր եկեղեցին գմբեթավոր է, քառանկյունի հատակագծով. արևելյան կողմից ունի կիսակլոր աբսիդ, որի երկու կողմերում գտնվող խորաններն արևելյան ծայրում ունեն կիսակլոր, փոքրիկ աբսիդներ: Աբսիդի եզրերից և կողերի պատերի արևմտյան ծայրերի ելուստներին կից ձգվող գլանաձև կիսասյունները միանում են կամարներով՝ իրենց վրա կրելով երբեմնի գմբեթը: Կիսասյունների խոյակների բարձրությունը, պատերի վրայով ձրգվում է շերտավոր գոտի: Արևելյան պատի մեջ արտաքուստ կան երկու եռանկյունաձև խորշեր, որոնց զապաթները կամարաձև են, պատած զարդաքանդակներով: Միակ մուտքն արևմտյան կողմից է, որը բացվում է գավթի մեջ: Հուշարձանի կառուցման ժամանակը ստույգ հայտնի չէ, բայց վերանորոգվել է 1270 թվին: Այժմ նա ավերակ վիճակում է, ամբողջապես քանդված է ծածկը՝ գմբեթի հետ միասին, պատերի վերի մասերը և հարավային պատի կենտրոնական մասը:

Գավիթը (նկ. 38) գտնվում է եկեղեցուն կից՝ արևմտյան կողմում: Կառուցել է գիտնական արեղա Հայրապետը 1270 թվին: Իր կառուցման մի շարք առանձնահատկություններով այս գավիթը առանձնակի տեղ է գրավում հայ ճարտարապետության պատմության, հատկապես գավիթների շինա-

րարություն մեջ: Այդ տեսակետից Արատեսի գավիթը, որը երկրորդ օրինակն է այդ տիպի կառուցվածքների մեջ (առաջին օրինակը Աղջոց ս. Ստեփանոսի վանքի գավիթն է), բավական հետաքրքիր է ու արժեքավոր:

Հատակագիծն ուղղանկյուն է, արևելյան և արևմտյան պատերից ձգվող երկուական կիսասյունները միանում են զուգահեռ կամարներով, կաղմելով թաղակապ ծածկը՝ կենտրոնում հատուկ անցքով՝ երդիկով: Հարավային ու հյուսիսային պատերից ձգվող մեկական կիսասյունների կիսակամարների ծայրերը հարում են ծածկի կենտրոնի քառակուսի բացվածքի (գմբեթային մասի) համապատասխան կողերի կենտրոններին, որի անկյուններում դրված են տափակ, մեծ սալաքարեր՝ պատած զանազան ձևի զարդաքանդակներով ու վառ-կարմիր գույնով ներկած: Գմբեթի հիմքի մասը ներսից զարդարված է եռանկյունաձև, փսի վեղարի մասը՝ ստալակտիտ քարը, վերին աստիճանի նուրբ ձևով մշակված քանդակներով:

Գավիթը, ինչպես և եկեղեցին, շարված են կապտագույն բազալտի սրբատաշ մեծ քարերով՝ կրաշաղախով: Գավիթը նույնպես ավերակ է՝ պահպանվել են արևելյան, արևմտյան և հյուսիսային կիսասյուններն իրենց կամարներով և ծածկի մի փոքրիկ մասը:

Երկրորդ եկեղեցին կոչվում է Աստվածածին և գտնվում է խմբի հյուսիսային կողմում: Հիմնադրման ժամանակը որոշ չէ, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ եկեղեցին հիմնվել է մինչև 7-րդ դարը և զգալի վերակառուցման է ենթարկվել միջին դարերում: Միանեֆ բազիլիկ է, թաղակապ ծածկով. կողերի պատերը ներսից ունեն երկուական ուղղանկյուն որմնասյուններ, որոնց միացնող թաղակիր կամարները գոտկում են առաստաղը: Արևելյան կողմից ունի կիսակլոր աբսիդ, որի երկու կողմերի խորանների դռները բացվում են աբսիդի մեջ՝ իրար դիմաց: Մի ուրիշ խորան էլ կա եկեղեցու հյուսիսային կողմում, կից, որի դուռը բացվում է եկեղեցու մեջ, արևմտյան որմնասյան կողքից: Բոլոր խորաններն էլ արևելյան կողմից ունեն կիսակլոր, փոքրիկ աբսիդներ: Գլխավոր մուտքն արևմտյան կողմից է, մի ուրիշ դուռ էլ



բացվում է հարավային կողմից, որը տանում է դեպի երկրորդ գավիթը: Գրահից, արևմտյան պատի վրա փորված խաչերից մեկն ունի 1216 թվականը: Հուշարձանն ավերակ վիճակում է, փլված են պատերի վերին շարքերը և ամբողջ ծածկը:

**Մատուռ-դամբարաններ** — սրանք երկու հատ են և գտնվում են վանքի երկու եկեղեցիների արանքում: Կառուցված են միաժամանակ, հավանաբար 13-րդ դարում: Արևելյան կողմից պատը ընդհանուր է հյուսիսային կողմի եկեղեցու պատի հետ, իսկ հյուսիսային պատը հենած է այդ նույն եկեղեցու հարավային խորանի պատի հիմնաշարի դռտու վրա, հետևապես ավելի ուշ կառուցված, քան եկեղեցին:

Երկու մատուռներն էլ արևելյան կողմից ունեն կիսակլոր արհիղներ և իրարից բաժանվում են միջնորմով ու հաղորդակցվում այդ միջնորմից բացված դռնով: Ընդհանուր մոտքը հարավային մատուռի արևմտյան պատից է: Շարված են կապտագույն բազալտի սրբատաշ քարերով՝ կրաշաղախով:

Վանքի երկրորդ գավիթը կամ ժամատունը գտնվում է եկեղեցիների և մատուռ-դամբարանների արանքում, ուստի առանձին պատերի փոխարեն եկեղեցիների համապատասխան պատերին կից ձգված են որմնասյուներ, իսկ արևելյան կողմից օգտագործված է մատուռ-դամբարանների և հյուսիսային եկեղեցու հարավային խորանի ընդհանուր պատը՝ որոշ շափով շարելով ու բարձրացնելով այն: Միայն արևմտյան կողմից ունի հիմնական պատ՝ եկեղեցիների արևմտյան պատերի ընդհանուր ուղղությամբ: Ժամատան ծածկը թաղակապ է, հատակագիծը քառակուսի, միակ մոտքը արևմտյան կողմից է՝ պատի հարավային ծալից, որը բացվում է գավթի մեջ: Շարված է կապտագույն բազալտի սրբատաշ քարերով՝ կրաշաղախով, հավանաբար կառուցված լինի 14-րդ դարում:

Վանքը շրջափակված է եղել պարսպով, որի արևելյան պատի փոքրիկ մասի հետքերն են պահպանվել: Գլխավոր եկեղեցու հարավային կողմում նկատվում են սրբատաշ քարով շարված պատերի հետքեր, ուր թափված են նաև հին շենքի քանդակազարդ մի շարք բեկորներ:

Հուշարձանների շուրջը տարածված է եղել գերեզմանոց, որն ամբողջապես քանդված է. հուշարձանների պատերին կից դարսված են տարբեր ձևերով մշակված բազմաթիվ գերեզմանաքարեր, խաչքարեր, մեծ մասամբ զարդաքանդակներով և գրություններով, մի տապանագիր 1464 թվականի է:

Գյուղի մեջ, տների և բակերի պատերում, բակերում, ամենուրեք նկատվում են հին շենքերի բեկորներ, գերեզմանաքարեր և խաչքարեր: Գյուղի արևմտյան եզրին ձորակի քարափի ժայռերի վրա փորված են բազմաթիվ խաչեր՝ կարճ հիշատակագրություններով, որոնցից մի քանիսն ունեն տարեթիվ՝ 1263, 1264, 1266, 1268:

### ՂԱՐԱՂԱՅԱ ԳՅՈՒՂ

Գյուղում եղել է հին եկեղեցի և գերեզմանոց, որոնք 19-րդ դարի վերջերին հիմնովին քանդել և տեղում բնակարաններ են կառուցել: Գյուղի մեջ, այս ու այն կողմը ընկած են առանձին գերեզմանաքարեր. տների պատերի ու բակերի ցանկապատերի մեջ դրված են հին բեկորներ ու գերեզմանաքարեր:

### ՂՈԹՈՒՐՎԱՆ ԳՅՈՒՂ

Հավանաբար պատմական Գոտուս վանը լինի, որը հիշատակվում է 10-րդ դարից: Գյուղում պահպանվել են իրար կից երկու եկեղեցիներ: Հարավային կողմինը համեմատաբար մեծ է և շարված է կիսատաշ մեծ որձաքարերով՝ կրաշաղախով, պահպանվել են միայն պատերը՝ երկու և կես մետր բարձրությամբ: Մյուս եկեղեցին շատ փոքր է, մատուռի նմանությամբ, շարված է կապտագույն բազալտի մաքուր տաշված մեծ քարերով՝ կրաշաղախով: Դռուն արևմտյան կողմից է՝ կիսակլոր ճակատակալ քարով. այժմ կիսավեր վիճակում է: Սրանց կառուցման ժամանակը հայտնի չէ, հավանական է առաջինը կառուցված լինի 10—11, իսկ երկրորդը՝ 13—14-րդ դարերում:







Գյուղի հարավային կողմում տարածվում է հին գյուղա-  
տեղ, որն ամբողջապես վեր է ածված վարելահողերի և խա-  
ղողի այգիների: Այգիների մեջ, մի բարձրադիր վայրում,  
ընկած են երկու հատ կոթողաձև մեծ խաչաքարեր՝ յուրահատուկ  
զարդաքանդակներով, որոնք բնորոշ են մինչ 10-րդ դարին:  
Այդ խաչքարերից դեպի հյուսիս, վարելահողերի մեջ ընկած  
է մի փոքր խաչքար, որը կանգնեցրել է ոմն Ոսկան  
1251 թվին, յուր ծնողների՝ Վարդի և Հովսեփի հիշատակին:  
Գյուղի հարավ-արևմտյան կողմի բարձր սարի գագաթին  
կանգնեցված է սահմանանիշ խաչքար:

ԼԵՌՆԱՆՅՔ (Աղբեճ) ԳՅՈՒՂ

ՍՈՒԼԵՄՍ. (Սելիմի) ՔԱՐԱՎԱՆԱՏՈՒՆ

Սուլեմա քարավանատունը Հայաստանի քաղաքացիական  
ճարտարապետության ամենանշանավոր հուշարձաններից է և  
արժեքավոր է նաև Հայաստանի վրայով անցնող միջազգային  
առևտրի գլխավոր ճանապարհների, ուղղովյունը որոշելու  
տեսակետից: Քարավանատունը գտնվում է Լեռնանցք (Աղ-  
բեճ) գյուղից դեպի հյուսիս, լեռնանցքի հարավային կողմն,  
Մարտունի տանող ճանապարհի աջ եզրին՝ ոտքի ճանապարհով  
6 և խճուղիով 12 կիլոմետր հեռավորության վրա (նկ. 39):

Հուշարձանի արձանագրությունների համաձայն քարա-  
վանատունը կառուցել է Օրբելյան Չեսար իշխանը՝ 1332 թվին:

Վերջին տարիներում կատարված հնագիտական ուսումնա-  
սիրությունները ցույց են տալիս, որ նա ունեցել է կառուց-  
ման երկու շրջան: Առաջին շրջանում, ամենայն հավանակա-  
նությամբ 13-րդ դարում, կառուցվել է քարավանատան հիմ-  
նական մասը կամ գլխավոր սրահը, իսկ երկրորդ շրջանում,  
1332 թ., կառուցվել են մյուս երկու փոքր սրահները (նկ. 40):

Գլխավոր սրահի հատակագիծը երկարածիք ուղղանկյունի  
է, եռանավ ձևով, որոնց ծածկը թաղակապ է: Նավերը բա-

ժանվում են միջնորմներով, որոնցից յուրաքանչյուրն ունի  
ութակա կամարակապ բացվածքներ՝ անջատված ուղղանկյուն  
մույթերով (նկ. 41): Մույթերով ձգվող կամարները գոտկում  
են նավերի առաստաղները: Արտաքին նավերի առաստաղը  
գոտկող կամարների արտաքին ծայրերը հենվում են կողերի  
պատերի մեջ դրված կալունակների վրա: Քարավանատան  
այդ մասը ձգվում է արևելքից արևմուտք: Կողերի նավերի ա-  
րևմտյան ծայրում կա մեկական սենյակ. հյուսիսային  
սենյակի դուռը բացվում է գլխավոր նավի մեջ, իսկ հարավա-  
յին սենյակինը՝ հարավային նավի մեջ՝ դեպի արևելք: Կենտ-  
րոնի նավի արևմտյան ծայրը բարձրադիր է՝ բեմի նմանու-  
թյամբ: Միջնորմների կամարակապ բացվածքների երկու կող-  
քերից նրանց ամբողջ երկարությամբ և մույթերի բարձրու-  
թյամբ շարված են մեծ սալաքարերով՝ անասունների կերի  
մսուրքի կամ ջրի ավազանների նմանությամբ:

Կենտրոնի թևի տանիքի մեջ բացվում է զմբեթաձև երեք  
անցք, ներսի կողմից պատած ստալակոտիտ քանդակներով:  
Միակ դուռն արևելյան ծայրից է, կենտրոնի թևից, որը բաց-  
վում է երկրորդ սրահի մեջ: Տանիքը պատած է քաղալտի  
սրբատաշ մեծ սալաքարերով:

Քարավանատան երկրորդ մասը քաղկացած է երկու իրար  
կից, փոքր սրահներից, որոնք ձգվում են հյուսիսից հարավ:  
Երկուսի ծածկն էլ թաղակապ է: Արևելյան կողմի սրահը հիմ-  
նովին ավերակ է՝ մնում է հյուսիսային ծայրի մի փոքրիկ  
մասը: Կանգոն մնացած մասը կից է գլխավոր սրահի արև-  
վելյան պատին՝ նրա ամբողջ երկարությամբ: Սրա հատակա-  
գիծը նույնպես երկարածիք ուղիղ քառանկյունի է և համեմա-  
տաբար շատ փոքր: Արևմտյան կողմից ամբողջական պատի  
փոխարեն, մեծ սրահի պատին կից ձգվում են հնգակող բներ  
ոճեցող երեք կիսասյուններ, որոնք միանալով որմնակամար-  
ներով, պատի վրա առաջացնում են չորս կամարակապ մեծ  
խորշեր: Կիսասյուններից ձգվող կամարները հենվում են  
արևելյան պատի մեջ դրված կալունակների վրա՝ գոտկելով  
սրահի առաստաղը: Ներսի կողմից, պատերի մեջ կան  
սլաքաձև խորշեր՝ զարդարված ստալակոտիտ քանդակներով:



Սրահի դուռը հարավային կողմից է, ճակատակալ կիսա-  
չլոր մեծ քարով և սլաքածե մեծ խորշով, որը պատած է  
ատալակախո զարդաքանդակներով (նկ. 42): Ճակատակալ  
քարի վրա փորված է արաբատառ արձանագրություն քար-  
վանսարայի կառուցման վերաբերյալ: Դռան երկու կողմերում  
եղած բարձրաքանդակներից արևելյան կողմինը ցույց է, իսկ  
արևմտյան կողմինը՝ առյուծ, մարդու դեմքով, թագակիր, որի  
վրա հարձակվում է մի օձ: Քարավանատան ամբողջ երեսա-  
պատը մուգ-կապտագույն բազալտի սրբատաշ մեծ քարերից  
է, ամուր կրաշաղախով:

Լեռնանցք (Ախքենդ) գյուղի սահմաններում եղած երկրորդ  
քարավանատունը գտնվում է գյուղից մոտ երեք կիլոմետր  
դեպի հյուսիս, ձորալանջին, Մարտունի տանող ճանապարհի  
աջ կողմում, վտակի ձախ ափին: Բնդարձակ մեծ սրահ է,  
ուղղանկյուն հատակագծով, ցածրիկ պատերով և համեմատա-  
բար լայնաթուղ միակամար ծածկով: Զգվում է արևելքից  
արևմուտք. արևելյան ծայրում կա թմբածե տարածություն՝  
բեմի նամանություն: Կողերի պատերից ձգվում են վեցական  
ուղղանկյուն որմնասյուներ, որոնց միացնող թաղակիր կա-  
մարները գտնվում են կամարածե առաստաղը: Դռան արև-  
մտյան կողմից է, մեծ և շատ լայն կողապատերով: Երեսա-  
պատումը կապտագույն բազալտի սրբատաշ մեծ քարերից է,  
կրաշաղախով մածուցված: Արևմտյան կողմում, մուտքի  
սուղևում ունեցել է թաղածածկ սրահ: Այժմ փլված են արե-  
վելյան ամբողջ պատը, կողերի պատերի արևմտյան մասերը՝  
ծածկի հետ միասին: Քանդված մասերը լրացրել են մանր  
քարերով ու ցեխով շարված պատերով, տանիքը ծածկել  
փայտով: Արևելյան, հարավային և հյուսիսային պատերն  
արտաքին կողմից ամբողջապես ծածկվել են հողով: Կառուց-  
ման ժամանակը ստույգ հայտնի չէ, անկասկած է, որ  
կառուցված պետք է լինի ավելի շուտ, քան Սեխիմի քարավա-  
նատունը՝ հավանաբար 12—13-րդ դարերում:

Այդ քարավանատանից 100 մետր դեպի հարավ գտնվում է  
մի գերեզմանատուն, որ գերեզմանաքարերը բնական սալա-  
բարեր են, կողերից քիչ հարթած, կան բազմաթիվ խաչքա-

րեր՝ մեծ սալերի ձևով և պարզ քանդակներով: Խաչքարերի  
մի մասը վայր է ընկած գետնին, մի մասն էլ կիսով չափ  
թաղված է հողի մեջ, իսկ գերեզմանաքարերը ծածկված  
են հողով:

Լեռնանցք (Աղքենդ) գյուղի սահմաններում եղած հույ-  
արձաններից նշանավոր է նաև Սոլեմա բերդը, որի մասին  
մատենագրություն մեջ նշվում է, թե գոյություն է ունեցել  
4—5-րդ դարերից: Դասվում է Սյունյաց երկրի նշանավոր  
բերդերի շարքը: Այդ բերդից այժմ աննշան հետքեր են պահ-  
պանվել: Ճանապարհորդները այս գյուղում արձանագրել են  
նաև հին եկեղեցու մնացորդներ, որից այժմ հետք չի մնացել:  
Գյուղի սահմաններում կա ավերակ հին գյուղատեղի: Մատե-  
նագրական տեղեկությունները հավաստում են, որ Աղքենդ  
գյուղը 4-րդ դարում հիշատակվող Դեզպանարդը պետք է լինի:

#### ՔԱՐԱԳՂՈՒՆ ԳՅՈՒԴ

Տեղագրական մանրագնին հետազոտությունները և մա-  
տենագրական վիճակությունների ուսումնասիրությունը հաս-  
տատում են, որ արդի Քարագլուխ գյուղը հին Խարաշկոնքը  
պետք է լինի, որը հիշատակվում է դեռ 4-րդ դարում:

Մամասա վանքը գտնվում է Քարագլուխ գյուղից մոտ  
երկու կիլոմետր դեպի հարավ-արևելք, լեռնաշղթայի ստորո-  
տում: Խումբը բաղկացած է երկու փոքրիկ եկեղեցիներից,  
մեկ մատուռից, մի ընդհանուր սրահից ու գերեզմանոցից:  
Հյուսիսային կողմի եկեղեցին հատակագծում քառանկյունի է,  
դուռը հարավային կողմից, որ բացվում է սրահի մեջ: Քանդ-  
ված է ծածկը և պատերի վերին մասերը:

Կառուցման ժամանակը ստույգ հայտնի չէ, սակայն  
պետք է ենթադրել, ինչպես այդ երևում է պատմական աղ-  
բյուրների վիճակություններից, որ սա պետք է կառուցված լինի  
10-րդ դարում:

Մամասա վանքի երկրորդ եկեղեցին գտնվում է խմբի  
հարավային կողմում և կոչվում է ս. Պողոս, որը կառուցվել  
է սելջուկյան արշավանքներից հետո: Արձանագրության մեջ



ապվում է, որ թշնամին ավերեց երկիրը, սպանեց վանքի առաջնորդ տեր Պողոսին, ամաչացավ նաև Մամատա ուխտը և երկիրը խաղաղվելուց հետո շինվեց այդ եկեղեցին:

Այս շենքը շատ փոքր է, քառանկյունի հատակագծով և թաղակապ ծածկով: Մուտքն արևմտյան կողմից է՝ կիսակլոր քանդակազարդ ճակատակալ քարով: Շարված է սրբատաշ բազալտից. այժմ կիսավեր վիճակում է:

Մատուռը գտնվում է երկու եկեղեցիների արանքում, ըստ որի նրանց պատերը ծառայել են որպես մատուռի կողերի պատեր. հիմնովին ավերակ վիճակում է:

Գերեզմանոցը տարածվում է վանքին կից, ուր կան նաև խաչքարեր: Տապանաքարերի համար օգտագործված են հին շենքի սրբատաշ և արձանագրություններ ունեցող քարեր և քանդակազարդ խաչքարեր: Գերեզմանոցը վերաբերում է 10—14-րդ դարերին:

Հին բնակատեղին տարածվում է գյուղից մոտ երեք կիլոմետր դեպի հյուսիս, երկու ձորակների արանքում բնկած սարահարթի վրա. հիմնովին ավերակ է, նկատվում են աննըշան հետքեր՝ փոսերի ձևով: Բնակատեղում պահպանվել է եկեղեցու ավերակ շենքը, որին տեղացիք Թուխ-Մանուկ են կոչում: Արձանագրությունների մեջ կոչվում է Կաթողիկե և իր կառուցման ձևով բնորոշ է 12—13-րդ դարերին: Շատ փոքր է, մատուռի ձևով, շարված է կապտագույն բազալտի սրբատաշ քարերով կրաշաղախով:

Այդ եկեղեցուն կից, հյուսիսային կողմում, վերջերս կառուցված է մի այլ, հասարակ եկեղեցի, որի պատերի մեջ օգտագործված են հին շենքի սրբատաշ քարեր և քանդակազարդ խաչքարեր: Եկեղեցիների առջևում կառուցված է սրահ, որի պատերի մեջ դարձյալ օգտագործված են հին բեկորներ:

Գերեզմանոցը տարածվում է եկեղեցիների շուրջը, ինչպես և նորակառույց եկեղեցու և սրահի ներսը: Գերեզմանաքարերը բազալտից են, շատ մեծ և մաքուր մշակված: Կան մի քանի քանդակազարդ մեծ խաչքարեր և երկու քառակող կոթողներ. որոնցից մեկի վրա կան կակաչանման և խաղողի ողկույզաձև զարդաքանդակներ, որոնք բնորոշ են 7-րդ դարին:

Քարազրույն գյուղի հանդում կան քանդակազարդ բազմաթիվ խաչքարեր: Դրանցից երեքը գտնվում են գյուղից դեպի հարավ-արևմուտք, ձորի ձախ կողմում, «Սալի» կոչվող խաղողի այգիներում: Երկու խաչքարերն իրար կից են, խոշոր պատվանդաններով, բարձր ու շքեղորեն զարդարված, որոնց մշակման ձևերը բնորոշ են 12—13-րդ դարերին: Երրորդ խաչքարը գտնվում է դրանցից հարավ. պահպանվել է միայն մեծ պատվանդանը:

Մի ուրիշ խաչարձան էլ գտնվում է Միկոյան տանող ճանապարհի ձախ կողմում, այգիների եզրին, Սուլեմա և Քաղվախի ձորերի միացման վայրում: Խաչքարը շատ մեծ է, հարուստ ձևով զարդաքանդակված. կանգնեցված է բնական մեծ ժայռի վրա: Այս խաչքարը կանգնեցրել է ոմն Սարգսի դուստր Թայիկը 1290 թվին իր ծնողների՝ Սարգսի և Խորիշահի հիշատակին: Խաչքարերի մի այլ խումբ գտնվում է գյուղի հարավ-արևմտյան կողմում, ձորի հանդիպակաց եզրին, բարձունքի վրա:

## ԱՂԱՎՆԱԶՈՐ ԳՅՈՒՂ

(Աղնածոր—Այնագուր)

Քարավանատունը գտնվում է գյուղից մոտ վեց կիլոմետր դեպի հարավ-արևմուտք. ամբողջապես քանդել և քարերն օգտագործել են նոր շինարարության վրա, պահպանվել են միայն պատերի առանձին մասերի և կրաշաղախ միջուկի զանգվածներ: 1953 թ. կատարած հետազոտական պեղումներից պարզվել է, որ դա երկարաձիգ, ուղղանկյուն, եռանավ ձևի մեծ շենք է, Սելիմի քարավանատանի ձևով, շարված սրբատաշ քարերով:

Նորագույն հետազոտությունները ցույց են տալիս միջագույն տարանցիկ առևտրի գլխավոր ճանապարհների Դվին—Պարտավ ուղեմասի վայրց ձորով անցնող հատվածի ուղղությունը: Ծանապարհի այդ մասը անցնելով Արփա գետը, Արփա գյուղի մոտ կառուցված միջնադարի հռչակավոր կամուր-



չով, մի փոքր առաջ է անցնում ձորի միջով, ապա բարձրա-  
նալով ձորի ձախ ափի սարահարթը և մոտ 4—5 կիլոմետր  
անցնելուց հետո հասնում է հիշյալ քարավանատանը:

Այնուհետև շարունակելով ուղիդ գծով դեպի հյուսիս-  
արևելք, Գետափ գյուղի մոտ դուրս է գալիս Եղեգիսի ձորը,  
այստեղից թեքվում է ձորն ի վեր դեպի հյուսիս: Շատին գյու-  
ղի մոտ մտնում է Սուլեմա ձորը, որի սկզբնավորութան մոտ,  
Աղքենդ գյուղից ոչ հեռու հասնում է Սուլեմա նշանավոր  
երկու քարավանատների:

Աղավնաձորի սահմաններում գտնվող հուշարձաններից  
նշանավոր են նաև Վանքի-Գուղ կամ Ներքին Ուլգյուր գյու-  
ղատեղում գտնվող ավերված եկեղեցին և մահարձանները:  
Սրանք գտնվում են գյուղից մոտ չորս կիլոմետր հյուսիս,  
համանուն դաշտամասում:

Եկեղեցին արձանագրությունների մեջ կոչվում է Աստվա-  
ծածին, թերևս կառուցված լինի 9—10-րդ դարերում: Միանեֆ  
բազիլիկ շենք է, շարված սրբատաշ վարդագույն տուֆով:  
Արևելյան կողմից ունի աբսիդ՝ փոքր բեմով, մուտքն ա-  
րևմտյան կողմից է, կանգուն են միայն պատերը:

Գերեզմանոցը տարածված է եղել եկեղեցու շուրջը, որի  
գերեզմանաքարերը մեծ են, տափակ, կանոնավոր մշակված,  
ոմանք ունեն տապանագրություններ և մեծ մասամբ ծածկված  
են հողով: Գերեզմանոցում կան մահարձաններ՝ խաչքարե-  
րով, մի քանիսը վայր են ընկած: Եկեղեցու հարավային  
կողմում, արևմտյան պատի ուղղությամբ, մի շարքով կանդ-  
նած են երեք խաչքարեր, որոնցից երկուսը կոթողաձև են,  
չատ բարձր, մեկը 1009 թ., պատկանում է ոմն Սարգիս  
երեցի:

Ներքին Ուլգյուր գյուղատեղից Վերին Ուլգյուր գյուղատե-  
ղին տանող ճանապարհի եզրին, լեռնաշղթայից անջատված  
սեպաձև բարձունքի վրա կան երկու խաչքարեր՝ վայր ընկած  
իրենց պատվանդանի մոտ:

Աղավնաձոր գյուղի հանդում, այգիների մեջ, տների բա-  
կերում, գերեզմանատներում պահպանվել են հին շենքերից  
սրբատաշ քարեր և քանդակազարդ խաչքարեր:

Ռինդը հավանաբար հին Ըռեղի գյուղն է, որ հիշվում է  
13-րդ դարում: Այստեղ աչքի ընկնող հուշարձաններ չեն նը-  
կատվում, բացի 15—16-րդ դարերին պատկանող խաչքարե-  
րից, որոնք բերված են հարևան Մաղկեվանք կոչվող վայրից:  
Խաչքարեր կան նաև գյուղից դեպի Արփա տանող ճանապարհի  
աջ կողմում, ձորակի եզրին: Գրանցից մեկը գյուղից հեռու է  
երեք կիլոմետր, իսկ զույգ խաչքարերը՝ չորս կիլոմետր. բո-  
լորն էլ պատվանդաններով են, քանդակազարդ, և պատկա-  
նում են 13—14-րդ դարերին: Գյուղից դուրս գտնվող հուշար-  
ձաններից հայտնի են.—

Ճգնավորի մատուռ — վիմափոր մատուռ է, գյուղից մոտ  
երկու կիլոմետր դեպի հյուսիս-արևելք, լեռան դագաթի քա-  
բափի մեջ: Այս փոքրիկ մատուռը արևելյան կողմից ունի կի-  
սակոր աբսիդ. մուտքն արևմտյան կողմից է, որի առջևում  
եղել է փոքրիկ, նույնպես վիմափոր սրահ, սակայն ծայրի  
այդ մասը պղկվել ու ցած է գլորվել, իր հետ տանելով նաև  
սրահը:

Բաղաշուր գյուղատեղին գտնվում է Ճգնավորի մատուռի  
ըջափայտում, ընդարձակ տարածության վրա: Գյուղատեղից  
պահպանվել են աննշան հետքեր. գետնի երեսին թափված են  
հին կավե ամանների քաղմաթիվ կտորներ, որոնց մեջ գե-  
րակշռում են վառ-կարմիր գույնով ներկած, փայլուն խեցի-  
ները:

Վերին Ուլգյուր գյուղատեղին տարածվում է ձորակի աջ  
ափին, Ռինդից մոտ վեց կիլոմետր դեպի հյուսիս-արևելք:  
Ամբողջապես ավերակ է. գետնի երեսին նկատվում են նույն  
կարմիր կավե ամանների քաղմաթիվ խեցիներ:

Այս գյուղատեղում պահպանվել է 17—18-րդ դարերում  
վերակառուցված եկեղեցու կիսավեր շենքը, որի մեջ օգտա-  
գործված են հին եկեղեցու սրբատաշ, քանդակազարդ քարեր,  
ոմանք արձանագրություններով: Այդ բեկորների մշակման  
ձևերը բնորոշ են 13—14-րդ դարերին, որը ցույց է տալիս, թե  
հին եկեղեցին կանգուն է եղել մինչև 14-րդ դարը: Արձանա-



գրություններն մեջ եկեղեցին կոչվում է ս. Ստեփանոս: Բեմի առջևում դրված հին եկեղեցու մնացած մեծ քարի վրայի ընդարձակ արձանագրությունն ասում է, որ Հասան ու Խոցագեղ եղբայրները 1292 թվին Խուտորքարի դաշտամասում գտնվող իրենց սեփական հողը նվիրում են ս. Ստեփանոս եկեղեցուն:

Եկեղեցու արևմտյան և հարավային կողմերում կան քանից ավելի խաչքարեր՝ տարբեր մոտիվներով զարդաքանդակված. մի քանիսը պատվանդաններից վայր են ընկած: Մշակման ձևերով ու արձանագրությունների տարեթվերով սրանք պատկանում են 13—14 և 17-րդ դարերին:

Գյուղատեղում եղած երկու գերեզմանոցից մեկը գտնվում է եկեղեցուց 50 մետր դեպի հարավ, իսկ մյուսը՝ մոտ 200 մետր դեպի հարավ-արևմուտք: Առաջինը փոքր է, գերեզմանաքարերը զանազան ձևով մշակված: Կան և բազմաթիվ խաչքարեր՝ տարբեր մոտիվներով զարդաքանդակված. ոմանք ոմենն տապանագրություններ, մեկի վրա 1319 թվականը: Գերեզմանոցը պատկանում է 10—14-րդ դարերին:

Երկրորդ գերեզմանոցը, որ 15—18-րդ դարերին է վերաբերում, ավելի մեծ է և ոմնի ուշ շրջանի բազմաթիվ խաչքարեր՝ սրբող քանդակներով: Գերեզմանոցի մի մասը քանդած և վեր է ածված վարելահողերի, քարերից մի քանիսը թաղված են գետնի մեջ կամ տեղաշարժված:

Ազիզբեկովի շրջանի մնացած բնակավայրերում՝ Չիվա, Ելփին, Երթիչ, Ալմալու, Արդարաս և այլն հիշատակության արժանի հուշարձաններ չկան, թեև այդ գյուղերը գոյություն են ունեցել շատ դարեր առաջ: Հայտնի է, որ Չիվան հնում էլ կոչվել էր Չվա, որն Օրբելյանները նվիրեցին Ամաղու Նորավանքին, Ելփինը հին Աղոպենն է, Ալմալուն՝ հին Խնձորուտը, իսկ Երթիչը հնում էլ կոչվում էր նույն անունով: Այդ բոլոր գյուղերն էլ հիշատակվում են Սյունյաց գյուղերի ցուցակում 13-րդ դարում:

## ՄԱՐՏԻՐՈՍ ԳՅՈՒՂ.

Այս գյուղը հնում էլ կոչվել է Մարտիրոս և ինչպես վկայում է, գյուղի մեջ, աղբյուր-հուշարձանի մոտ կանգնած խաչքարի արձանագրությունը, գյուղը հիմնել, ավելի ճիշտ գյուղը վերաշինել է Դեղիա որդի Մխիթարը, իշխանաց իշխան Պուշի և նրա որդի Հասանի հրամանով 1283 թվին: Իսրայել Օրու պապերը ենթադրվում են այս գյուղի բնակիչներ: Գյուղի մեջ և նրա սահմաններում գտնվող հուշարձաններից հայտնի են.—

Վանքը գտնվում է գյուղից երեք կիլոմետր դեպի հարավ-արևելք, ձորի աջ կողմում. բաղկացած է երկու եկեղեցուց և մի գավթից, որոնք ամբողջապես փորված են ձորի քարափի մեջ:

Դիսավոր եկեղեցին արձանագրությունների համաձայն կոչվում է Աստվածածին և փորել է տվել Մաթևոս վարդապետը՝ 1286 թվին: Եկեղեցու հատակագիծը ներսից քառակուսի է՝ 6×6 մետր չափով, վերևից թաղակապ է, կենտրոնում գմբեթային մասով կարճ թմբուկով և բով վեղարով: Գմբեթի ծայրից բացվում է կլոր, փոքր լուսանցք. գմբեթի հիմքը քառակուսի է, առագաստներով: Պատերը ներսից հարթ են, արևելյան պատի մեջ փորված է արտիղ, բեմով՝ մեծ, կամարակապ խորշի ձևով: Մուտքը արևմտյան կողմից է, որը բացվում է գավթի մեջ: Արևմտյան կողմից ոմնի մի փոքր լուսամուտ:

Երկրորդ եկեղեցին գտնվում է նախորդին կից, հարավային կողմից և նրա հետ հաղորդակցվում է հատուկ դռնով: Սա ևս կենտրոնագմբեթ սիստեմի կառուցվածք է՝ խաչաձև հատակագծով, ուղղանկյուն խաչքանդակով: Խաչքանդակի միացման անկյունները զլանաձև կիսասյունների ձևով են, պարզ խոյակներով: Արևելյան խաչքանդակում շինված է ցածրիկ բեմ. բեմի երկու կողմերում հարավային և հյուսիսային խաչքանդակների արևելյան պատերի մեջ փորված են մեկական խորաններ՝ կամարակապ խորշերի ձևով: Նման մեկական խորաններ էլ փորված են արևմտյան խաչքանդակի հարավային և հյուսիսային պատերի մեջ՝ իրար դիմաց: Սրա գմբեթային մասը նույնպես



հիմքում քառակուսի է, առաջաստներով, կարճ թմբուկով և բուլբ վեղարով, կենտրոնում փոքր, կլոր լուսանցքով նախորդի նմանութեամբ, բայց քիչ ավելի փոքր: Միակ փոքրիկ լուսամուտը արևելյան կողմից է՝ քարափի լանջից: Ինչպես երևում է հարավ-արևելյան խորանի վերևում փորված արձանագրության յոթնից, այս եկեղեցին նույնպես կառուցված է 1286 թվին:

Գավիթը գտնվում է զլխավոր եկեղեցուն կից՝ արևմտյան կողմից: Այս շատ ցածրիկ և փոքրիկ շենքը ունի 2x2 մետր չափ: Պատերը հարթ են, տանիքը քառակող, թաղակապ, կենտրոնում ունի կլոր լուսանցք-երդիկ՝ գավիթների հատուկ ձևով: Դուռն արևմտյան կողմից է:

Մատուռը գտնվում է եկեղեցիների հարավային կողմում, քարափի անմիջապես եզրին: Ժայռերը քանդվելու հետևանքով քանդվել է մատուռի կես մասը: Պահպանված մասի տանիքը թաղակապ է, ստորին մասը ծածկվել է հողով ու փլատակներով:

Հուշարձանների առջևում կան մի քանի գերեզմաններ, որոնց քարերը թաղված են գետնի մեջ և մասամբ ծածկված հողով: Կան և 13—14-րդ դդ. բնորոշ խաչքարեր ու պատվանդաններ:

Վանքից վերև, ձորալանջում կա մի մեծ քարայր, որը հայտնի է ճգնավորի այր անունով, հավանական է, որ դա երբեմն ծառայել է վանքի միաբանության անդամների համար որպես բնակարան:

Վանքից մեկ կիլոմետր արևմուտք, դեպի գյուղը տանող ճանապարհի եզրին պահպանվել է մի փոքրիկ գերեզմանոց, որի սովորական քառակողմ տապանաքարերը շատ մեծ են և լավ մշակված: Նրանց հարթ կողերը վերջանում են ձգված սուր եռանկյունով, իսկ ներքևում աստիճանավոր են: Տապանաքարերը մեծ մասամբ տեղաշարժված են և գերեզմանները փորված: Կա նաև մի մեծ խաչարձան՝ պայտածև խաչքարով ու պատվանդանով, ունի խոր փորված պարզ խաչ: Կանգնեցրել է վանքը կառուցող Մաթևոս վարդապետը՝ իրեն՝ Պետրոսի և իր ծնողների հիշատակին՝ 1275 թվին:

Գյուղի մեջ կան նաև երեք մեծ գերեզմանոցներ, դրանցից

մեկը գտնվում է գյուղի հարավ-արևելյան եզրին, բարձունքի վրա: Սրա տապանաքարերն ունեն զանազան ձևի մշակում, իսկ մի քանիսը ուղղակի բնական սալաքարեր են: Տասիակ կողեր ունեցող գերեզմանաքարերի վրա կան կենցաղային և այլ ձևերի հետաքրքիր զարդաքանդակներ և մինչև 15—16-րդ դարերի հասնող տապանագրություններ:

13—17-րդ դարերին պատկանող այս գերեզմանոցում կան նաև տարբեր մեծություններ քանդակազարդված բազմաթիվ խաչքարեր: Գերեզմանոցը զգալի չափով ավերված է, որոշ գերեզմանաքարեր ու խաչքարեր տեղահան են արված, իսկ մեծ մասը թաղված է գետնի մեջ:

Երկրորդ գերեզմանոցը գտնվում է գյուղի արևմտյան եզրին: Այստեղ նույնպես գերեզմանաքարերը տարբեր տեսակի հանքաքարերից են, զանազան ձևերով մշակված, կան և անմշակ, բնական սալաքարերի ձևով գերեզմանաքարեր ու բազմաթիվ խաչքարեր: Այս գերեզմանոցը գոյություն ունի 15-րդ դարից, և մինչև այժմ էլ շարունակվում են թաղումները:

Երրորդ գերեզմանոցը եղել է գյուղի մեջ, եկեղեցու շուրջը, որը համարյա ամբողջապես քանդել են եկեղեցին վերակառուցելու և այլ շինարարությունների ժամանակ: Պահպանվել են մի քանի տափակ գերեզմանաքարեր, որոնք թաղված են գետնի մեջ ու ծածկված հողով, ինչպես և մի մեծ խաչքար: Այս ունի հետևյալ արձանագրությունը, որ բերում ենք թարգմանաբար — Կո Գեղիկի որդի Մխիթարս իշխանաց իշխան Պոռշի և նրա որդի Հասանի հրամանով, 1283 թ., շինեցի Մարտիրոս գյուղը և կանգնեցրի այս խաչքարը՝ սուրբ վկայարանի (եկեղեցու) դռան առջև, ի բարեխոսությունն ինձ և իմ ամուսին Մամիրին և իմ որդի Ղարիբ Շահին և իմ դուստր Ռուզուբանին, ովքեր որ ընթերցեք, հիշեցեք մեզ: Շինվեց Շնորհավորի ձեռքով: Խաչքարը շատ մեծ է՝ բարձր ու լայն, երեսի կողմում մի շարք խաչեր քանդակված: Ստորին մասում հարթ է, վրան նաև սվաստիկայի նշան քանդակված:

Արդի եկեղեցին կառուցված է հին եկեղեցու տեղում, հավանաբար 17—18-րդ դարերին: Պատերի և մույթերի մեջ օգտագործված են բեկորներ՝ հին եկեղեցուց, գերեզմանաքարեր



ու խաչքարեր: Այդ բեկորների մեջ առանձնապես հետաքրքիր ու արժեքավոր են հին եկեղեցու վրա եղած արևի ժամացույցը, որը դրված է նոր կառուցված եկեղեցու հարավային պատի մեջ:

Եկեղեցու շենքը բավականին մեծ է, կառուցված է եռանավ բազիլիկ ձևով, ներսում ունի շորս մուլթեր, ծածկը թաղակառու է, արևելյան կողմից ունի կիսակլոր աբսիդ՝ բարձր բեմով, որի երկու կողմերում կան խորաններ: Ճարտարապետական տեսակետից սա աչժմ առանձին արժեք չի ներկայացնում, սակայն նրանում օգտագործված հին բեկորները շենքին տալիս են որոշակի հնագիտական արժեք: Այդ բեկորներից միաժամանակ իմացվում է, որ հին եկեղեցու շենքը կառուցված է եղել ավագաբարի սրբատաշ քարերով և ունեցել է բավականին նուրբ մշակված զարդաքանդակներ, որոնք բնորոշ են 13—14-րդ դարերին:

Մարտիրոսից Աղիզբեկով տանող ճանապարհի կեսին, երկու ձորակների միացման վայրում, ևս կա մի կիսավեր, փոքրիկ գերեզմանոց՝ միջին դարերի բնորոշ զարդաքանդակներ ու կենցաղային քանդակներ ունեցող տապանաքարերով ու խաչքարերով:

Վերին լին գյուղատեղին գտնվում է Մարտիրոսից մոտ երկու և կես կիլոմետր դեպի արևելք, լեռնաշղթայի դարձյալ սարահարթի վրա, որը հետագայում տարածվելով իջել է նաև լեռնաշղթայի ստորոտները: Տեղագրական տեսակետից հնարավոր է ենթադրել, որ սա գուցե պատմական Հողոցի գյուղն է եղել, որը հիշատակվում է 5-րդ դարից: Այդ գյուղից էր Հովսեփի երեցը, որը դարձավ հայոց կաթողիկոս, մասնակցեց 5-րդ դարի Վարդանանց պատերազմին և հուշակվեց Ավարայրի ճակատամարտում: Այս գյուղից էր նաև 10-րդ դարի Մեսրոպ պատմիչը:

Գյուղատեղում պահպանվել են տների և քարաշար պատերի հետքեր՝ փոսերի ու քարակույտերի ձևով, ինչպես և մեծ ձիթհանի պատերի մնացորդները, որոնք շարված են անտաշ որձաքարով. շենքի ներսում ընկած է ձիթապտուղը տրորող կլոր, մեծ քարը:

Գերեզմանոցը տարածվում է գյուղատեղի հարավային ելքին. սովորական քառակող տապանաքարերը թաղված են դեռնի մեջ և մասամբ ծածկված հողով: Գերեզմանոցում կան բազմաթիվ ու բազմապիսի խաչքարեր, ոմանք շատ մեծ. բնորոշ են պայտաձև խաչքարերը, որոնցից մի քանիսն ունեն ձեռագիր ձևով, մանր տառերով գրված տապանագրություններ՝ հողմահարված վիճակում: Գերեզմանոցի մոտ եղած առանձին ժայռերի վրա փորված են բազմաթիվ պարզ խաչեր:

Այս գյուղատեղի մոտ, փոքրիկ բարձունքի վրա գտնվում է սուրբ Հովհաննես կոչվող մատուռը: Նրա պատերի մեջ դրված են միջին դարերին պատկանող մի մեծ խաչքար և խաչքարի մի քանի բեկորներ, որոնք բերված են ուրիշ տեղից:

Նման երկու մատուռ-ուխատեղի էլ կան վերոհիշյալ գյուղատեղից քիչ դեպի հարավ-արևելք, լեռնաշղթայի ստորոտում, Չոմովլիճ կոչվող բարձունքի վրա: Մատուռներից մեկը կոչվում է Գայանե, մյուսը՝ Հռիփսիմե: Հիշված բոլոր մատուռներն էլ բոլորովին նոր են, ճարտարապետական ոչ մի արժեք չունեն:

Հռիփսիմե մատուռի ներսում դրված են երեք հատ խաչքարեր, որոնցից երկուսը աբսիդի եզրին և մեկը աբսիդի մեջ: Առաջին երկուսն իրենց հիմնական տեղերումն են, պատվանդանների վրա, շատ մեծ են, վերևից կամարաձև խիստ բնորոշ ու հետաքրքիր զարդաքանդակներով: Երկուսի առջևում էլ կան գերեզմաններ՝ խոշոր տապանաքարերով:

Հռիփսիմե և Գայանե մատուռների մոտ, այդ նույն բարձունքի վրա, գտնվում է մի այլ խաչքար, որը շատ բարձր է և համեմատաբար նեղ ու հարթ կողերով: Երեսի կողի վրա խոր փորված է պարզ խաչ. ստորին մասում, խաչքարի ամբողջ լայնությունումը շրջանակ է: Արձանագրություն համաձայն սա կանգնեցրել է Երեմիա աբեղան իր ծնողների հիշատակին՝ 1499 թվին: Մի քանի գերեզմաններ էլ կան այդ բարձունքի հյուսիսային ծայրին:

Մի ուրիշ գյուղատեղ էլ գտնվում է Մարտիրոսից մոտ երկու և կես կիլոմետր դեպի հյուսիս, Աշուղի-Չայրներ կոչվող դաշտամասում: Գյուղատեղին ամբողջապես վեր է ածված



վարելահողերի և խոտհարքի. տեղում պահպանվել են առան-  
ձին տների քարաշար պատերի հետքերը՝ քարակույտերի  
ձևով:

ԱԶԼԳԻՆԿՆՈՎ, (Փաշալու) ԳՅՈՒՂ.

Ենթադրվում է, որ հին Փշոնք գյուղը լինի, որը աղավաղ-  
վել, կոչվել էր Փաշալու: Փշոնքը հիշատակվում է 13-րդ դա-  
րում և հարկատու էր Տաթևի հոգևոր թեմին: Գյուղում պահ-  
պանվել է մի մեծ խաչքար, որը կանգնեցված է տան Ասլանի  
և այլոց գերեզմանի վրա՝ 1287 թվին:

Ամրոցը գտնվում է գյուղի արևելյան կողմում, մեկ և  
կես կիլոմետր հեռու, բլուրի վրա. բլուրի գագաթի շուրջը  
ձգվում են պարսպապատեր, որոնք շարված են անմշակ, մեծ  
որձաքարերով, առանց շաղախի: Հարավային կողմից սնի  
կրկնապարիսպ՝ ուղղանկյուն ելուստներով՝ հենապատերի ձե-  
վով: Ամրոցի ներսում նկատելի են քարաշար պատերի հետ-  
քեր: Գլխավոր մուտքը պարսպի արևելյան մասի հարավային  
ծայրից է. նկատելի են հին ճանապարհի հետքեր՝ ամրոցի  
հյուսիսային կողմում:

Երկրորդ ամրոցը նախորդի արևելյան կողմում է և հազիվ  
հիսուն մետր հեռու. շատ փոքր է, հավանաբար ծառայել է  
հիմնական ամրոցի մուտքի պաշտպանության պահակավայր:  
Պարիսպները շարված են անմշակ որձաքարի համեմատաբար  
փոքր քարերով, առանց շաղախի: Ամրոցի ամբողջ լայնությամբ  
փորված է խոր փոս, հավանաբար, որպես լրացուցիչ ար-  
գելափակիչ միջոց: Գեանի երեսին նկատելի են քարե հղկած  
աղորիքի կտորներ, օբսիդիանի գործիքներ, սև, կարմիր ու  
գորշ գույնի ներկած կավե ամանների փայլուն կտորներ: Եր-  
կու ամրոցներից էլ պահպանվել են պարիսպները՝ երբեմն  
մինչև մեկ և կես մետր բարձրությամբ:

Գերեզմանոցը գտնվում է Աղիգրեկով գյուղի արևելյան  
կողմում, այգիների մեջ, ձորակերպին: Պատկանում է 17—  
19-րդ դարերին, ուր որպես գերեզմանաքար օգտագործված են  
բազմաթիվ և բազմապիսի խաչքարեր, որոնց մշակման ձևերը  
բնորոշ են 9—14-րդ դարերին:

Ամաղու Նորավանքի մի արձանագրության մեջ ասված է,  
որ Սմբատ Օրբելյանը Ազատ գյուղն իր սահմաններով, շրջակա  
լեռներով ու դաշտերով, մինչև Քուտկախաղաց բարձր, դիտան-  
ման սարը, Հողոցիմ, Շավաձոր և Ակոռի գյուղերը նվիրում է  
Նորավանքին: Արձանագրության մեջ նշված այդ տեղեկու-  
թյունները, ինչպես և հնագիտական հետազոտությունները  
ենթադրել են տալիս, որ Ազադեկը հին Ազատ գյուղը պետք է  
լինի: Գյուղում պահպանված նյութական կուլտուրայի մնա-  
ցորդներն էլ վերաբերում են ճիշտ այդ ժամանակաշրջանին:

Գյուղամիջի սուրբ Ստեփանոս եկեղեցու մուտքի ճակա-  
տակալ քարի արձանագրությունից երևում է, որ եկեղեցին  
կառուցված է Ազադեկի գյուղական հասարակության կողմից  
Հակոբ կաթողիկոսի (Հակոբ 4-րդի) ժամանակ՝ 17-րդ դարի  
երկրորդ կեսին և վերահասուցված է Սալմաստից գաղթած  
հայերի կողմից 19-րդ դարի 30-ական թվականներին՝ լրաց-  
նելով քանդված ծածկը և պատերի վերին մասերը: Սա բավ-  
կանին ընդարձակ շենք է, եռանավ բազիլիկ ձևով կառուց-  
ված. ներսում ունի երկու զույգ մույթեր, ծածկը թաղակալ է,  
արևելյան կողմից սնի կիսակլոր մեծ աբսիդ՝ բարձր բեմով,  
որի երկու կողմերում կան խորաններ: Շարված է դանազան  
հանքաքարի անմշակ փոքր քարերով, կրաշաղախով: Պատերի  
և մույթերի մեջ օգտագործված են հին տապանաքարեր և  
խաչքարեր՝ արձանագրության մնացորդներով. մեկի վրա կար-  
գացվում է 1465 թվականը: Խաչքարերի զարդաքանդակները  
բնորոշ են 13—14-րդ դարերին: Եկեղեցու շենքը, բացի օգտա-  
գործված հին բեկորները՝ ճարտարապետական առանձին ար-  
ժեք չունի:

Հին գերեզմանոցը տարածվում է գյուղի արևմտյան եզ-  
րին. գերեզմանաքարերը գլխավորապես բնական սալաքարե-  
րից են, մեծ մասամբ թաղված գեանի մեջ, մասամբ ծածկ-  
ված հողով: Գերեզմանոցի արևելյան եզրին, առկալի ափին  
եղել են երեք խաչքարեր, որոնցից մեկը կանգուն է, իսկ  
մյուս երկուսի պատվանդաններն են մնում: Կանգուն մնացած



խաչքարը բաժակահին մեծ է, դրված բնական ժայռաբեկորի վրա: Առջևի մասում իրար կողքի քանդակված են երկու խաչեր՝ բնորոշ 13—14-րդ դարերին: Արձանագրությունն այժմ հողմնահարված վիճակում է ու անընթեռնելի:

**Ս. Հակոբ ուխտառեղին** գտնվում է գյուղից մոտ երկու կիլոմետր դեպի հարավ-արևմուտք, ձորակի սկզբնավորման մոտ: Եկեղեցու նմանությունը, բոլորովին վերջին ժամանակներս, հասարակ ձևով կառուցված մի շենք է, որի ներսում կա մի գերեզման՝ բարձրադիր տափակ կողերով գերեզմանաբարով: Համաձայն տապանագրության պատկանում է ոմն Հակոբի և վերաբերում է 1607 թվին: Հավանական է, որ այդ գերեզմանի պատճառով նրա վրա կառուցված մատուռ-ուխտառեղին կոչվում է ս. Հակոբ:

Այս մատուռից մի քանի քաջ դեպի հարավ-արևելք, սարալանջին, կա մի փոքր, քանդակազարդ խաչքար, իսկ խաչքարի առջևում երեք գերեզմաններ՝ հարթ մշակված գերեզմանաբարերով: Խաչքարը կանգնեցրել են Գրիգորը և իր կինը իրենց որդու՝ Հունան քահանայի գերեզմանի վրա՝ 1222 թ.:

### ՓՈՌ ԳՅՈՒՂ.

Փոռը հնում կոչվել է Բոր և հիշատակվում է 13-րդ դարում: Այդ ժամանակ Տաթևին տրվող հարկի չափից երևում է, որ Բորը եղել է Վայոց ձորի ամենախոշոր գյուղերից մեկը, սակայն տեղում հնություն արժանահիշատակ ոչինչ չի պահպանվել, թեև կես դար առաջ կանգուն են եղել 13—14-րդ դդ. խաչքարեր:

### ԳՅԱՐՈՒՏ ԳՅՈՒՂ.

Կապույա գյուղատեղին պատմական նույնանուն խոշոր ավան հանդիսացող գյուղն է եղել, որը հիշատակվում է 13-րդ դարում: Հնում եղել է այժմյան Գյաբուտ գյուղից մոտ մեկ կիլոմետր դեպի արևելք, բոլոր կողմերից բարձր սարերով և գերվող ձորի մեջ, գեղատեսիլ վայրում: Պահպանվել են հին առեղի հետքերը՝ փոսերի և քարակույտերի ձևով, եկեղեցին,

գերեզմանոցը՝ գեղաքանդակ խաչքարերով ու կոթողներով և այլ մնացորդներ: Գյուղը գոյություն է ունեցել դեռ 10-րդ դարից առաջ:

**Եկեղեցու շենքը** փոքր է, միանեֆ բազիլիկ ձևով, բնորոշ 10-րդ դարին. ծածկը եղել է թաղակապ, արևելյան կողմից նկատվում են կիսակլոր աբսիդի հետքերը: Այժմ ավերակ վիճակում է՝ մնում են պատերի ստորին մասերը, ներսը լրջված է փլատակներով:

**Գերեզմանոցը** տարածված է եկեղեցու շուրջը, որը հիմնովին ավերակ է. բազմաթիվ խոշոր տապանաքարեր, մեծ խաչքարեր ու նրանց պատվանդանները թափված են տեղում: Բոլորն էլ լավ մշակված ու քանդակազարդ: Եկեղեցու հարավային կողմում ընկած է քառակող մի մեծ կոթող՝ պատվանդանի հետ միասին. ծայրին եղել է փոքր խաչքար՝ Տաթևի վանքի «շարժվող սյան» նմանությամբ:

Կոթողի հարավային կողմում, իրար կողքի կանգնեցված են երկու գեղաքանդակ մեծ խաչքարեր, որոնցից հյուսիսայինը կանգնեցրել են Ղուկասը և Եղիամ իրենց հայր Ամիրի հիշատակին՝ 1261 թվին, իսկ հարավայինը՝ Սարգիսն ու Գրիգորը իրենց և իրենց զավակների համար՝ 1271 թվին: Դրանց առջևում, գետինն ընկած մի մեծ խաչքարի արձանագրությունը հավաստում է, որ խաչքարը կանգնեցրել են Դեղն ու իր եղբայրները 1490 թվին: Նկատելի են նաև աստիճանավոր մեծ տապանաքարեր: Եկեղեցու հյուսիսային կողմի քարափեղամբողջ երեսի վրա քանդակված են բազմաթիվ խաչեր, որոնք վերաբերում են միջին դարերին: Եկեղեցուց մոտ 50 մետր դեպի արևմուտք, հողապատնեղ շինելու համար օգտագործել են բազմաթիվ մեծ գերեզմանաքարեր և քանդակազարդ խաչքարեր:

### ԳՈՄՈՒՐ ԳՅՈՒՂ.

Հավանաբար սա հին Գոմք կամ Գոմեր գյուղն է, որը հիշատակվում է 13-րդ դարից: Գյուղում պահպանված հին հուշարձաններն էլ վերաբերում են այդ ժամանակներին: Սրան-



ցից առանձնապես հետաքրքիր ու արժեքավոր է մատուու-մա-հարձանը, որը, ինչպես ցույց են տալիս նրա արձանագրու-թյունները, կառուցել են խոյրանի որդիներ Մխիթարը և Արե-վիկը 1303 թվին: Դա հատակագծում քառանկյունի, հյուսիսից հարավ ձգվող երկարավուն և բարձր հուշարձան է, սուր ան-կյուն տանիքով: Առջևի մասը խոր, կամարակապ մի խորշ է, ուր դրված է գեղաքանդակ մի մեծ խաչքար: Մահարձանի հիմքի մասում, խորշից ներքև քանդակված են երկու առյուծ-ներ՝ շրջապատված ծաղկեհյուս դարձաքանդակներով և փոք-րիկ սափոր:

Մահարձանի արևելյան կողմում, նրան կից, այդ նույն մարդկանց կողմից կառուցված է փոքրիկ մատուու-դամբա-րան: Վերջինիս հատակագիծը քառանկյունի է, ծածկը թաղա-կապ, արևելյան կողմից ունի կիսակլոր, փոքրիկ աբսիդ. դու-ռը հյուսիսային կողմից է, որի կիսակլոր ճակատակալ բարը զարդարված է խաչաձև ու ծաղկեհյուս քանդակներով, իսկ բարավորը՝ ստալակախո քանդակներով: Թե՛ մահարձանը և թե՛ դամբարան-մատուուը շարված են սրբատաշ մեծ քարերով՝ կրաշաղախով: Տանիքները պատած են սալաքարով. մատուուի արևելյան պատի վրա քանդակված է Պոռչյան իշխանների տոհմանիշը՝ թևատարած արծիվը՝ գառը կամ խոյը՝ ճանկե-րում բռնած (նկ. 43, 44): Մահարձանի շուրջը տարածված է եղել քնդարձակ գերեզմանատուն, որը մեծ մասամբ քանդել են: Տեղում պահպանված գերեզմանաքարերը մշակված են պանագան ձևերով, մեծ մասամբ թաղված գետնի մեջ, մի քանիսն էլ տեղից շարժած:

Գերեզմանոցում կան բազմաթիվ և բազմաձև խաչքարեր, որոնք բնորոշ են 13—17-րդ դարերին: Մի քանիսն ունեն գրավոր հիշատակագրություններ՝ հողմնահարված ու անըն-թեռնելի վիճակում:

Մի ուրիշ խոշոր, գեղաքանդակ խաչքար էլ գտնվում է գյուղի հյուսիս-արևմտյան կողմում, «Խաչաղբյուր»-ի ձորում, աղբյուրի գլխին: Նրա արձանագրությունից հայտնի է, որ 1288 թվին Պոռչյան Պապաքի և նրա որդի Ամիր Հասանի իշ-

խանություն ժամանակ Սարգիսը և իր որդի Պետրոսը շինում են այդ աղբյուրը և կանգնեցնում այդ խաչքարը:

Վերոհիշյալ մահարձանի արձանագրությունների համա-ձայն այդ նույն Մխիթար և Արևիկ եղբայրները գյուղում կա-ռուցում են նաև եկեղեցի ու ժամատուն, որովհետև մինչ այդ եկեղեցի կառուցված չի եղել: Սակայն նրանց կառուցած եկե-ղեցին չի պահպանվել: Գյուղի ներկայիս եկեղեցին հավանա-բար կառուցված լինի 18-րդ դարում, որը եռանավ բազիլիկ տիպի մեծ շենք է, շարված անմշակ քարերով՝ կրաշաղախով, բայց ճարտարապետական արժեք չունի. այժմ փլված է հա-րավային թևը:

Գողմենները գտնվում են Գոմուրից Ախտա տանող ուղի ճանապարհի վրա. դրանցից մեկի երկարությունը երեք մետ-րից ավելի է, պատերը շարված են անմշակ մեծ քարերով: Ծածկը եղել է սալաքարերից՝ աստիճանական ձևով իրար վրա դարսած. մուտքը արևմտյան կողմից է: Մյուս գողմեններից հազիվ նկատելի հեաքերն են պահպանվել:

### ԱԽՏԱ. ԳՅՈՒՂ

Ենթադրվում է, թե արդի Ախտան պատմական Աղթարույնը գյուղը պետք է լինի: Գյուղում եղել է եկեղեցի և գերեզմա-նոց, որոնք ամբողջապես քանդվել են գյուղի վերակառուց-ման ժամանակ: Պահպանվել է ուշ ժամանակի մի խաչքար և ձիթհանի հետքերը՝ մամլող քարով:

### ՋՈՒՂ ԳՅՈՒՂ

Որոշ բանասերներ ենթադրում են, թե Ջուլը պատմական Աջոզը գյուղը պիտի լինի, որը հիշատակվում է 13-րդ դարում և ցույց է տրված Տաթևի հողևոր թեմին հարկատու գյուղերի ցուցակում:

Հնագիտական հետազոտությունները չեն հայտնաբերել միջին դարերին վերաբերող որևէ մնացորդ, բացառությամբ գյուղի մեջ, մի մեծ ժայռի վրա քանդակած մի քանի խաչքա-



րերից: Գյուղում եղել է եկեղեցի, որը համաձայն բանասիրական գրականության վկայությունների՝ կառուցված է եղել 1703 թվին, իսկ եկեղեցու շուրջը՝ նույն ժամանակաշրջանին պատկանող գերեզմանոց:

Գյուղամիջով անցնող փոքրիկ վտակի վրա կառուցված է մի կամուրջ. վերջինս միաթոփչք, կամարակապ փոքր կամուրջ է, սլաքածե կամարով, շարված մաքուր տաշված ավազաքարից, կրաշաղախով:

Մարաթուզ գյուղատեղը գտնվում է Զուլից մոտ երկու կիլոմետր դեպի արևելք, սարահարթի վրա: Սա 13-րդ դարում մատենագրության մեջ հիշատակվող Մայրաղուք խոշոր գյուղն է: Նյութական կուլտուրայի մնացորդներ կան — դեռ 9—10-րդ դարերից: Գյուղատեղին բռնում է բավական ընդարձակ տարածություն, ուր պահպանվել են տների հետքերը՝ փոսերի և քարակույտերի ձևով:

Եկեղեցին, որն այժմ ավերակ վիճակում է, միանավ բազիլիկ ձևով է, թաղակապ ծածկով, ըստ երևույթին կառուցված է 10-րդ դարում: Երկրորդ անգամ, հավանաբար 13—14-րդ դարերում, հին եկեղեցին ընդարձակելու նպատակով, արևմտյան կողմից ավելացրել են պատեր, նախօրոք քանդելով հին եկեղեցու արևմտյան պատը:

Գերեզմանոցը տարածվում է գյուղատեղի հյուսիսային եզրին, բլուրի ընդարձակ հարթության վրա: Գերեզմանաքարերը տարբեր հանքաքարերից են և զանազան ձևերով մշակված: Բնորոշ են բնական անմշակ գերեզմանաքարերը, որոնք բազմակող կոթողի ձևի են, շատ երկար և ծայրին անցք փորված, որը վկայում է, թե նրանց գերեզմանոց են բերել քաշելով: Առանձին ձևով մշակված տապանաքարերն ունեն կենցաղային հետաքրքիր զարդաքանդակներ: Գերեզմանոցում կան բազմաթիվ խաչքարեր՝ տարբեր ձևերով մշակված, ոմանք ունեն գրավոր հիշատակություններ՝ եղծված վիճակում: Գերեզմանաքարերի մեծ մասը և խաչքարերի պատվանդանները թաղված են գետնի մեջ, ոմանք ծածկված հողով, մի մասը տեղահան արված: Գերեզմանոցը ընդհանրապես ավերաբերում է 9—17-րդ դարերին:

Թերի գյուղը 13-րդ դարում հիշատակվող պատմական Գերբն գյուղն է: Գյուղում եղած հին եկեղեցին վերակառուցվել է 17-րդ դարում, որը 19-րդ դարում ամբողջովին քանդվել է: Եկեղեցու շուրջը եղել է գերեզմանոց, որի մի շարք գերեզմանաքարերն ու խաչքարերը թափված են այս ու այն կողմում, մի քանիսն ունեն կենցաղային և այլ զարդաքանդակներ, որոնք բնորոշ են 17—18-րդ դարերին: Առանձնապես հետաքրքիր են խոյանման տապանաքարերը, դրանցից երկուսը գրված են աղբյուրի մոտ, մեծ խաչքարի երկու կողքերին և հարմարեցված են այնպես, որ շուրջ հոսում է նրանց բերանից:

Հին գյուղի գերեզմանոցը գտնվում է ներկա գյուղի հյուսիսային կողմում, խճուղուց վերև, սարալանջին: Գերեզմանաքարերը գլխավորապես բնական մեծ սալեր են, կան մի քանի հատ սովորական տափակ ձևով մշակված մեծ քարեր՝ թաղված գետնի մեջ կամ ծածկված հողով, մի քանիսն էլ տեղահան արված: Գերեզմանոցում կան 13—14-րդ դարերի մի քանի խաչքարեր:

Մի ուրիշ մեծ և պայտածե խաչքար գտնվում է Թերիի արևմտյան եզրին, գետակի աջ ափին գտնվող մի տան պարտեզում:

Գյումուշխանե գյուղատեղը գտնվում է Թերիից մոտ 4 կիլոմետր դեպի հյուսիս-արևելք. որոշ բանասերներ ենթադրում են, որ դա հին Փողահանք գյուղը պետք է լինի: Գյուղատեղում պահպանվել են եկեղեցու հետքերը՝ փոսի ձևով և մի քանի հասարակ գերեզմանաքարեր:

Դարբն (Թարփ) գյուղատեղը գտնվում է Թերիից մոտ 3 կիլոմետր դեպի հարավ-արևմուտք, ձորի ձախ կողմում: Գյուղում եղել է եկեղեցի և գերեզմանոց՝ խաչքարերով, որոնք չեն պահպանվել: Պահպանվել են միայն մի քանի գերեզմաններ: Հյուսիսային կողմում, քարափի վրա պահպանվել են վաղ միջնադարի մի փոքրիկ ամրոցի պարիսպների հետքեր:

Չայկենդ գյուղատեղը գտնվում է Թերիից մոտ 8 կիլո-







Երբորդ եկեղեցին գտնվում է գյուղի կենտրոնական մասում, աղբյուրից քիչ վերև: Բավական մեծ շենք է, եռանավ բազիլիկ ձևով: Ներսում ունեցել է 4 մույթեր, ծածկը եղել է թաղակապ: Արևելյան կողմից ունի կիսակլոր արսիդ, որի երկու կողքերին կան խորաններ: Շարված է կիսատաշ որձաքարով, կրաշաղախով, պատերի մեջ օգտագործված են հին գերեզմանաքարեր և քանդակազարդ խաչքարեր: Ավերակ վիճակումն է՝ պահպանվել են պատերի ստորին մասերը, իսկ ներսը լցված է հողով: Այս եկեղեցին հավանաբար վերաբերում է 17—18-րդ դարերին: Շուրջը եղել է գերեզմանոց, որից պահպանվել են մի քանի գերեզմանաքարեր ու խաչքարեր՝ ընկած եկեղեցու փլատակների վայրում: Մի ուրիշ գերեզմանոց էլ գտնվում է Կեչուտ գյուղի արևելյան կողմում, երկու ձորակներով եզերվող սարահարթի վրա: Բարձրադիր ձևով մշակված գերեզմանաքարերի կողքերի վրա քանդակված են կենցաղային նկարներ ու զարդաքանդակներ:

Գերեզմանոցում կա մի մեծ խաչքար, որի պարզ խաչը ունի ուռուցիկ, հաստ գոտկանման գծեր: Խաչքարերի մշակման այդ ձևը, կարելի է ասել, որ եզակի է այդ կարգի պատկանող հուշարձանների մեջ: Այդպիսի մի խաչքար էլ գտնվում է գյուղի հարավ-արևմտյան կողմում, Գնդեվազ տանող ճանապարհի եզրին. նկատվում է, որ իր հիմնական տեղում չէ, ուստի հավանական է թվում, որ տարված լինի 14—17-րդ դարերի այս գերեզմանոցից:

Գյուղի հարավ-արևելյան եզրին, ձորի քարափի գլխին կանգնեցված են երեք խաչքարեր. դրանցից երկուսը վարդագույն ավազաքարից են, իսկ մեկը՝ կապտագույն բազալտից: Վերջինս կանոնավոր մշակված է և վրան, բացի կենտրոնում քանդակված մեծ խաչից, փորված են բազմաթիվ մանր խաչեր: Մյուս երկու խաչքարերը թույլ ձևով են մշակված, մեկի վրա կան վայրի այծերի բարձրաքանդակներ՝ երկար եղջյուրներով: Խաչքարերն իրենց մշակման ձևերով բնորոշ են 13—14-րդ դարերին:

Ձիբհանը գտնվում է գյուղի հարավ-արևմտյան եզրին, գետի ձախ ափին, ճանապարհի ձախ կողմում: Պահպանվել են

բարձր պատերը, շարված անտաշ լեռնաքարերով, ցեխով և ձիթապտուղը տրորող երկու կլոր քարերը, մեկը շատ մեծ՝ երեք մետր տրամագծով:

Կեչուտ գյուղի մոտ, Արփա գետի վրա եղած կամուրջը վերականգնելու միջոցին օգտագործել են 10—15-րդ դարերի գեղաքանդակ գերեզմանաքարեր ու խաչքարեր:

Ձիբակ գյուղատեղը գտնվում է Կեչուտից մոտ 4 կիլոմետր դեպի հյուսիս-արևելք, ենթադրվում է, թե սա պատմական խոտորձի գյուղն է: Գյուղում եղել է եկեղեցի և գերեզմանոց, որոնք ամբողջովին քանդված են. պահպանվել են մի քանի գերեզմաններ ու խաչքարեր:

Պրաֆ (Քիլաֆ) գյուղատեղը գտնվում է Կեչուտից մոտ 3 կիլոմետր դեպի հյուսիս-արևելք: 13-րդ դարում հարկատու էր Տաթևի հոգևոր թեմին և այդ հարկի չափով նա համարվում էր Սյունիքի խոշոր գյուղերից մեկը: Գյուղատեղում պահպանվել են հին եկեղեցու մնացորդները, մի քանի գերեզմաններ ու խաչքարեր՝ 13—14-րդ դարերին բնորոշող զարդաքանդակներով:

### ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՎ

13-րդ դարի պատմիչ Ստ. Օրբելյանի վկայությամբ, Գնդեվազ գյուղը հիմնել է Սոփյա Սյունյաց տիկինը, իբր Գնդեվանքը կառուցելուց անմիջապես հետո, կոչել վանքի անունով և նվիրել այդ վանքին: Բայց որովհետև վանքերը սովորաբար կոչվել են այն գյուղի անունով, որի մեջ նրանք գտնվում են, ուստի հավանական է, որ գյուղը գոյություն է ունեցել մինչև վանքի կառուցումը և վանքը կառուցելուց հետո վերանվանվել է Գնդեվանք ու ավելի մեծացվել: Գնդեվանքը եղել է պատմական Սյունիքի նշանավոր և խոշոր գյուղերից մեկը:

Գնդեվազի մոտ է գտնվում հռչակավոր Գնդեվանքը, որի մասին նրա հիմնադիրը՝ Սյունյաց տիկին Սոփյան, ասել է. «Վայց ձորը մի մատանի էր առանց ակի, ես շինեցի ակն (Գնդեվանքը) և դրի մատանու վրա»:

Բազմած լինելով խոր ձորի մեջ, սարալանջին, փարթամորեն աճած խաղողի և պտղատու ծառերի այգիներում, կար-



կաշահոս Արիա գետի ափին, շրջապատված անդնդախոր ձորի ամեհի քարափներով, հուշարձանի շրջապատը մի հիասքանչ տպավորություն է թողնում դիտողի վրա: Ուստի, որքան էլ իր ճարտարապետական կառուցվածքով Գնդեվանքը զիջում է Վայոց ձորի մի շարք այլ հուշարձանների, բայց իր դիրքով մեծ տպավորություն է թողնում դիտողի վրա:

Գնդեվանքի հուշարձանների խումբը բաղկացած է մեկ եկեղեցուց, գավթից, բնակելի շենքերից, պարսպապատ է, պարսպից ներս կան գերեզմաններ: Եկեղեցին, պատմական աղբյուրների և հուշարձանի վրա եղած արձանագրությունների համաձայն, կառուցել է Սուփյա Սյունյաց տիկինը 936 թվին: Վանքն իր շենքերով ուշագրավ է ոչ այնքան իր ճարտարապետական ընդհանուր կառուցվածքով, որի մասին մեծ գովասանքով խոսում է նրա կառուցողը այլ հատակագծային լուծմամբ, որը համարյա եղակի է հայ ճարտարապետության մեջ (Նկ. 45):

Գնդեվանքի եկեղեցին գմբեթակիր կառուցվածք է, արտաքուստ քառանկյունի, արևմտյան կողմից դուրս շեշտված թեփով, ներսից խաչաձև հատակագծով՝ կիսակլոր խաչթևերով: Արևելյան խաչթևում կառուցված է բեմ, որի երկու կողմերում կան խորաններ: Գմբեթի թմբուկը ցածրադիր է, ներսից կլոր, արտաքուստ 16 նիստով, բուլթ վեղարով: Թմբուկի հիմքը միանում է առաքաստների միջոցով, որոնց վրա կան մարդկանց ու կենդանիների բարձրաքանդակներ: Հարավային և արևմտյան կողմերից ունի մուտքեր, վերջինս բացվում է գավթի մեջ: Արտաքուստ, պատերի մեջ կան երկուական եռանկյունաձև խորշեր՝ կամարաձև գագաթներում մարդկանց դիմանկար բարձրաքանդակներով: Ներսից սվաղած է կրաշաղախով, որից աննշան հետքեր են պահպանվել: Սվաղի վրա երևում են որմնանկարների հետքեր: Հյուսիսային խորանի մուտքի ճակատի որմնանկարը պատկերում է Աստվածածինը: Շենքը շարված է բազալտի մաքուր տաշված քարերով: Կատարված են վերանորոգումներ, որոնցից մեկը Գրիգորի կողմից, 1309 թվին, մյուսը՝ վանքի առաջնորդ Պետրոս վարդապետի կողմից, 1691 թվին: Որմնանկարների հեղինակն է

Եղիշե երեցը, որն աշխատել է հենց կառուցման ժամանակ: Հուշարձանը ունի ոչ մեծ փլվածքներ:

Գավթիքը գտնվում է եկեղեցուն կից՝ արևմտյան կողմում. կառուցել է վանքի առաջնորդ Քրիստափոր վարդապետը 999 թվին: Գավթի հատակագիծն ուղիղ քառանկյունի է, ծածկը թաղակապ. ներսում, հյուսիսային կողմից ունի առանձին նավ, որը հիմնական մասից անջատվում է մեկ մուլթով և երկու կամարակապ բացվածքներով: Այս թևի արևելյան ծայրում կա մի փոքր խորան, որի դուռը բացվում է դեպի հարավ, գավթի մեջ: Գավթի մուտքն արևմտյան կողմից է: Հարավային պատին կից, ներսից կան երկու ուղղանկյուն որմնասյուներ, որոնք միանալով որմնակամարներով, պատի վրա առաջացնում են երեք հատ մեծ խորշեր: Վերանորոգված է եկեղեցու հետ միաժամանակ 1309 և 1691 թթ., շարված է մաքուր տաշված քարերով՝ կրաշաղախով: Քանդված են հիմնական մասի ծածկը և հարավային պատի վերին մասերը: Գնդեվանքի գավթիքը ամենահինն է պահպանված բոլոր գավթիքներից:

Վանքի միաբանության բնակելի շենքերը դասավորված են հարավային և արևմտյան կողմերում, պարսպին կից: Տարբեր մեծություն են, ոմանք երկհարկանի, բոլորն էլ թաղակապ ծածկով: Շարված են զանազան կիսատաշ և մասամբ անտաշ կամ մաքուր տաշված քարերով՝ կրաշաղախով: Պատերի մեջ դրված են քանդակազարդ խաչքարեր՝ բնորոշ 16—17-րդ դարերին: Հարավ-արևմտյան անկյունում եղած շենքը քառակուսի հատակագծով է, որի անկյուններից ձգվող որմնասյուները միանում են կամարներով: Իր կառուցման ձևով միանգամայն նման է Սանահնի վանքի զրատանը, ուստի հավանական է, որ սա էլ Գնդեվանքի զրատունը եղած լինի: Որոշ շենքեր սալահատակված են: Հարավային կողմի շենքերը ամբողջական վիճակում են, մյուսները՝ կիսավեր:

Բարձր պարիսպը ձգվում է վանքի շուրջը, քառանկյունի ձևով և միայն հարավային կողմից ունի բրզաձև աշտարակներ: Գլխավոր մուտքը հյուսիսային կողմից է՝ պատի արևմտյան ծայրից: Մուտքը առնված է սրահի տակ, որի վրա



գտնվում է մի փոքրիկ սենյակ, երևի պահակատուն: Ստույգ հայտնի չէ, թե երբ են հիմնադրվել վանքի պարիսպն ու միաբանության բնակելի շենքերը, բայց որոշ մասերի կառուցողական առանձնահատկությունները բնորոշ են 13—14-րդ դարերին: Եկեղեցու արևմտյան մուտքի ճակատակալ քարի արձանադրությունից երևում է, որ դրանք ևս վերանորոգվել են 1691 թվին: Հավանական է դառնում, որ պարիսպն ու միաբանության շենքերը հիմնված լինեն 13—14-րդ դարերում և վերակառուցված ու ընդարձակված 17-րդ դարում: Մի շարք լավ մշակված տապանաքարեր, խաչքարեր և բեկորներ թափված են տեղում և եկեղեցու պատերի տակ, մեծ մասամբ տապանադրություններով ու հետաքրքիր կենցաղային զարդաքանդակներով, որոնք վերաբերում են 13—17-րդ դարերին:

Գյուղամիջի եկեղեցին, համաձայն արևմտյան դռան ճակատակալ քարի վրա եղած արձանագրության, կոչվում է Աստվածածին և կառուցել է Գնդեվանքի առաջնորդ Պետրոս վարդապետը 1686 թվին: Եռանավ բազիլիկ ձևով շինված մեծ շենք է, չորս մույթերով: Ծածկը թաղակապ է, արևելյան կողմից ունի կիսակլոր քարե՝ բարձր բեմով ու խորաններով: Հարավային և արևմտյան կողմերից ունի մուտքեր: Կամարները, մույթերը և դռների եզրերը շարված են մաքուր տաշված բազալտից, մնացած մասերը՝ անտաշ որձաքարերով՝ կրաշաղախով:

Գյուղի մեջ հինգ փողոցների հատման վայրում գտնվում է հին գերեզմանոցը, որի միայն կենտրոնական մասն է պահպանված: Սովորական տապանաքարերից բացի մնացել են նաև մի քանի խաչքարեր, մեկը 1722 թվականին:

Արփա գետի բարձր ափերը հարուստ են քարայրերով, դրանց մի մասը առջևից ունեն ամրոցապատեր և վեր են անցնում ամրացված բնակարանների ու պաշտպանական վայրերի: Որոշ քարայրերում կան գետնի մեջ փորված հորեր՝ կարասների ձևով:

Գյուղից մեկ կիլոմետր դեպի հարավ-արևելք, Թերփ տունող ճանապարհի եզրին, սարահարթի վրա նկատելի են մի շարք կրոմլեխներ, ոմանք շատ մեծ, մի քանիսը քանդված:

### ՍՈՅՍԱՆ ԳՅՈՒԳ

Սոյլանը հիմնական բնակավայր չէ. նրա հողերը հանձնրված են Աղադեկ գյուղի կոլտնտեսությանը:

Սոյլանի արևելյան կողմում, խճուղու եզրերին, պահպանվել են մի հին գյուղի ավերակների հետքեր: Նկատելի են փոքր եկեղեցու պատերի մնացորդներ՝ շարված կիսատաշ ավազաքարով՝ կրաշաղախով և մի քանի գերեզմաններ ու խաչքարեր 13—14-րդ դարերի բնորոշ զարդաքանդակներով: Եկեղեցուց քիչ դեպի հարավ, խճուղու եզրին, գտնվում է քառակող, բարձր մի կոթող. վերջինս սև տուֆից է, վերևի ծայրը ջարդված ու վայր ընկած: Կոթողը հին է, հավանաբար 7—8-րդ դարերի, որը երևի ծառայել է որպես սահմանաքար կամ ճանապարհանիշ: Հետագայում վրան խաչ են փորել 1222 թ. արձանագրությամբ:

Սոյլանից մոտ մեկ կիլոմետր դեպի արևմուտք, Արփա գետի վրա պահպանվել են մի հին կամուրջի մնացորդներ: Արփա գետի ձորն այդ վայրում խիստ նեղանում է, քարափներն ավելի են մոտենում միմյանց: Չախ կողմի քարափն անմիջապես գետի եզրին է, իսկ աջ կողմինը գետից անջատվում է նեղ լանջով. այդ լանջի վրա շարված է մեծ ու երկար հիմնապատ, որի վրա բարձրանում են կամուրջի երեք սղղանկյուն սյուները. վերջիններս շարված են կիսատաշ որձաքարերով՝ կրաշաղախով: Կամուրջը եղել է փայտից, կառուցված հավանաբար, 17-րդ դարում, և վերակառուցվել 19-րդ դարի վերջերին, թեև այժմ էլ քայքայված վիճակում է:

### ԿԱՐՄՐԱՇԵՆ (Քյոթանլու) ԳՅՈՒԳ

Հին գյուղատեղին գտնվում է գյուղից մեկ և կես կիլոմետր դեպի հարավ, բռնում է բավական ընդարձակ տարածություն, իր մեջ ընդգրկելով նաև չորս ոչ մեծ բլուրներ: Ենթադրվում է, որ դա հին Գուտենի գյուղը պետք է լինի, որ հետագայում Քյոթանլու ձևն է ընդունել: Գուտենին իր ժամանակին եղել է Սյունիքի հին և նշանավոր գյուղերից մեկը.



որը հաստատվում է նաև գյուղատեղի մեծութեամբ և նյութական կուլտուրայի բազմաթիվ մնացորդներով: Ավերված տների հատակադածային մշակումը կայուն սիստեմ չունի:

**Նկեղեցին** գտնվում է հարավային կողմի բլուրի գագաթին. բավականին մեծ շենք է եղել, եռանավ բազիլիկ ձևով, հավանաբար վերակառուցված 17—18-րդ դարերում: Արևելյան կողմից նկատելի են կիսակլոր արքայի հետքերը: Պատերի մնացորդները շարված են անմշակ լեռնաքարերով՝ կրաշաղախով. մուտքն արևմտյան կողմից է:

Գյուղատեղում պահպանվել են նաև շորս գերեզմանոցներ. դրանցից մեկը գտնվում է եկեղեցու շուրջը, բլուրի վրա: Գերեզմանաքարերը բազալտից են, նեղ ձևով մշակված, կողերի վրա քանդակված են կենցաղային և այլ ձևի զարդաքանդակներ: Մի քանիսն ունեն տապանագրություններ: Գերեզմանաքարերի մշակման ձևերը բնորոշ են 17—18-րդ դարերին:

**Նրկորդ գերեզմանոցը** գտնվում է գյուղատեղի հյուսիսային եզրին, իր ծավալով ամենամեծն է և իր ժամանակով ամենահինն ու ամենաերկարատևը՝ մյուս գերեզմանոցների համեմատությամբ: Բռնում է բավականին ընդարձակ տարածություն. գերեզմանաքարերը զլխավորապես բազալտից են ու ավազաքարից և տարբեր ձևերով մշակված: Գերեզմանոցում կան բազմաթիվ և տարբեր մեծությամբ խաչքարեր՝ զանազան ձևերով քանդակազարդված, որոնցից մի քանիսն ունեն տապանագրություններ, ոմանք 13-րդ դարին պատկանող տարեթվերով: Գերեզմանոցը ընդհանրապես վերաբերում է 10—17-րդ դարերին:

**Նրորդ գերեզմանոցը** գտնվում է գյուղատեղի հարավարևմտյան եզրին և պատկանում է 15—16-րդ դարերին: Համեմատաբար փոքր է, փոքր են նաև բնական սալերից պատրաստված գերեզմանաքարերը: Կան նաև մի շարք բնական սալերից պրիմիտիվ խաչքարեր:

**Չորորդ գերեզմանոցը** գտնվում է գյուղի հարավարևելյան եզրին, նախորդ գերեզմանոցի դիմաց: Գերեզմանաքարերը շատ մեծ են և սովորական քառակող—հարթ ձևով մշակված. համարյա բոլորն էլ խոր թաղված են գետնի մեջ:

Գերեզմանոցում կա վայր ընկած մի մեծ խաչքար, որն ամբողջով է եղել մեծ պատվանդանով: Խաչքարը շքեղ քանդակազարդված է, ունի տապանագրություն 1289 թվականով՝ հողմնահարված վիճակում:

Բացի վերոհիշյալ գերեզմանոցներից, գյուղատեղի առանձին վայրերում կան փոքր խմբերով և առանձին գերեզմաններ ու խաչքարեր, որոնք վերաբերում են 10—14-րդ դարերին և հատուկ են Հայաստանի ամենահին ավաններին: Գուտենի գյուղը թեև պատմական աղբյուրներում հիշատակվում է 10-րդ դարից, բայց գոյություն է ունեցել ավելի վաղ ժամանակներից:

Գյուղատեղում առանձնակի կանգնած գերեզմաններից հատկապես արժեքավոր ու հետաքրքիր է գյուղատեղի հյուսիսարևելյան մասում գտնվող բլուրի վրա եղած խաչքարը: Մրա պատվանդանը մի մեծ ժայռաքեկոր է, խաչքարն էլ նրան համապատասխան՝ մեծ ու բարձր. խաչքարի ճակատի եզրերը պատած են երկրաչափական գեղեցիկ զարդաքանդակներով՝ քառակուսիների մեջ առնված: Արձանագրության համաձայն, խաչքարը կանգնեցրել է Խոյդանը՝ իր եղբոր հիշատակին, 13-րդ դարում:

**Մանարձանը** գտնվում է Կարմրաշենից մեկ կիլոմետր հարավ, վարելահողերի մեջ. հատակագիծը քառանկյունի է (4 մ երկարությամբ և 1,70 մ լայնությամբ), մոտ վեց մետր բարձրությամբ: Տանիքը երկթեք է, մեծ սալաքարերով պատած, տանիքի տակ դրված է կարասաձև մեծ կավե աման: Արևմտյան կողմից խորշավոր է՝ խոր և կամարակապ գագաթով. խորշի մեջ դրված են երկու մեծ խաչքարեր, որոնցից հյուսիսային կողմինը ընկել անհայտացել է: Տեղում պահպանված խաչքարը վարդագույն քարից է, շքեղ զարդաքանդակված՝ վրան Պողոս Պետրոս առաքյալների դիմակաբարձրաքանդակները՝ համապատասխան մակագրություններով: Ճակատի մասում, ուռուցիկ տառերով քանդակած արձանագրությունը շարդված է, մնում են տարեթվի հարյուրավորը և տասնավորը Չն (1290) ձևով, որի միավորը նույնպես շարդված է. դրանից իմացվում է, որ մահարձանը կառուցված պետք է լինի 1291—1300 թթ.: Շարված է մուգ-կապտագույն



բազալտի սրբատաշ քարերով: քանդված է հյուսիսային կողմը  
և ընկած է խորշի կամարաքարը: Հարավային կողքի վրա գե-  
ղեցիկ քանդակված է արևի ժամացույց: Մահարձանի շուրջը  
տարածվում է փոքրիկ գերեզմանոց՝ խոշոր գերեզմանաքա-  
րերով, որոնք մշակված են սովորական քառակող—հարթ  
ձևով. մի քանիսն ունեն տապանագրություններ:

Մի ուրիշ խաչքար էլ գտնվում է Կարմրաշենի արևելյան  
կողմում, ավերակ ջրաղացի կողքին, ջրատար առվի վրա՝  
անմիջապես ջրնթափին կից: Ճակատամասում եղած կարճ  
տապանագրության համաձայն խաչքարը կանգնեցվել է  
990 թվին, Վասակի որդի Սմբատի թագավորության ժամա-  
նակ: Խաչքարը շատ մեծ է, բարձր և համեմատաբար նեղ,  
բոլորովին առանձնահատուկ ձևով մշակված:

Այդ խաչքարի մոտ, ջրաղացի առվի աջ կողմում, ցածրիկ  
քարափին կից նկատելի են փոքրիկ մատուռի հետքեր:

### ՀԵՐՉԵՐ ԳՅՈՒՂ

Հերհերը հին Երեւն է: Որոշ քանասերներ ենթադրում են,  
որ Հերհերը հնում քաղաքատիպ ավան է եղել: Գյուղի սահ-  
մաններում պահպանված նյութական կուլտուրայի բազմաթիվ  
հուշարձանները մասամբ հաստատում են այդ ենթադրություն-  
ներ: Հերհեր գյուղի սահմաններում առանձնապես հետաքրքիր  
ու արժեքավոր է ս. Սիոն կոչված մենաստանը (նկ. 46):

Սիոն մենաստանը գտնվում է գյուղից մոտ մեկ կիլո-  
մետր դեպի հյուսիս-արևելք, երկու ձորերով եզերվող փոք-  
րիկ բլուրի հարթ գագաթին: Այս բարձունքը բոլոր կողմերից  
պաշտպանված է ձորերի բարձր քարափներով, իսկ խոցելի-  
թույլ տեղերն ամրացված են պարիսպներով, որ այդ վայրը  
դարձնում են անառիկ բնակատեղի: Մենաստանը բաղկացած  
է երկու եկեղեցիներից և մեկ մատուռից: Կան նաև մի շարք  
գերեզմանաքարեր ու խաչքարեր. նկատվում են առանձին  
շենքերի հետքեր: Թե երբ է հիմնադրվել մենաստանը, ստույգ  
հայտնի չէ, բայց հիշատակվում է 8-րդ դարից սկսած:

Հյուսիսային կողմի եկեղեցին կոչվում է ս. Սիոն և հան-  
դիսանում է մենաստանի ամենահին կառուցվածքը: Նրա  
ճարտարապետական ձևերը խաչաձև և բազիլիկատիպ ձևերի  
միացում է, որը ենթադրել է տալիս, թե եկեղեցին կարող է  
կառուցված լինել 8—9-րդ դարերում: Հատակագիծն արտա-  
քուստ քառանկյունի է, ներսից՝ արևելյան և արևմտյան ծայրե-  
րը ունեն կիսակլոր աբսիդներ: Արևելյան կողմի աբսիդի մեջ  
շինված է ցածրիկ բեմ: Ծածկը թաղակապ է, երկթեք տանի-  
քով. առաստաղը գոտկող միակ թաղակիր կամարի կրունկնե-  
րը հենվում են կալոնակների վրա: Արևմտյան և հարավային  
կողմերից ունի մուտքեր. հարավայինը հավանական է բաց են  
արել երկրորդ եկեղեցին կառուցելու միջոցին: Մեկական կա-  
մարակապ, փոքր լուսամուտներ բացվում են արևելյան և  
արևմտյան ճակատներից: Տանիքը պատած է մաքուր հղկած  
ոսլաքարերով. նկատելի են վերանորոգման հետքեր: Ծենքը  
շարված է գլխավորապես կիսատաշ ավազաքարի տարբեր  
մեծության քարերով՝ կրաշաղախով: Դրսից քանդված են  
միայն հյուսիս-արևմտյան և հարավ-արևելյան անկյունները:

Մենաստանի երկրորդ եկեղեցին հարավից կից է նա-  
խորդին և կոչվում է Աստվածածին: Ներսից, հարավային  
պատի ընդարձակ արձանագրության և արևմտյան ճակատին  
եղած թվականի համաձայն կառուցել է Մագիստրոսի թոռ,  
Վասակի որդի պարոն Վահրամը՝ ընտանիքով հանդերձ,  
1282—1283 թթ.: Քառանկյունի հատակագծով մի փոքրիկ  
կառուցվածք է, ծածկը թաղակապ՝ երկթեք տանիքով: Արե-  
վելյան կողմից ունի զույգ, կիսակլոր աբսիդ՝ բարձր բեմով:

Երկու մուտքերից մեկը բացվում է արևմտյան, իսկ մյուսը՝  
հյուսիսային կողմից և տանում է դեպի հին եկեղեցին: Հա-  
բուստ է վիմական արձանագրություններով՝ նվիրատվական  
բովանդակությամբ, որոնց վրա կան 1282, 1283, 1259, 1308  
1317, 1326, 1345 թվականներ: Կանգուն է, արևմտյան ճակա-  
տին քանդակված է Օրբելյանների տոհմանիշը, վրան 1282  
թվականը:

Մատուռը գտնվում է եկեղեցիների հյուսիսային կող-  
մում, կից է Սիոն եկեղեցուն: Ծածկը թաղակապ է, արևելյան



կողմից կիսակլոր փոքրիկ արքիդով: Մուտքը հարավային կողմից է՝ Սիոն եկեղեցու միջից:

Մենաստանին կից տարածվում է փոքրիկ գերեզմանոց, որի գերեզմանաքարերը գլխավորապես ավազաքարից են, զանազան ձևի մշակումով: Գերեզմանոցում կան բազմաթիվ խաչքարեր, բոլորն էլ պատվանդաններով և գեղեցիկ ձևով քանդակազարդված. դրանց վրա կան՝ 1283, 1291, 1310, 1413, 1435, 1649 թվականների արձանագրություններ:

Հերհերի գյուղամիջի ս. Գևորգ եկեղեցին մեծ շենք է, հիմնրված հին եկեղեցու տեղում: Սա հավանաբար վերակառուցվել է 18—19-րդ դարերում: Պատերի մեջ օգտագործված են հին շենքի բազմաթիվ բեկորներ, հին գերեզմանաքարեր և խաչքարեր՝ կենցաղային և այլ ձևի հետաքրքիր զարդաքանդակներով, արձանագրության մնացորդներով, որոնք և որոշ արժեք են տալիս եկեղեցուն:

Եկեղեցին վերակառուցված է եռանավ բազիլիկ ձևով. ներսում կան 4 մույթեր, ծածկը թաղակապ է, արևելյան կողմում ունի կիսակլոր մեծ արքիդ՝ բարձր բեմով, որի երկու կողմերում կան խորաններ. մուտքը արևմտյան կողմից է: Շարված է տարբեր մեծություն անմշակ որձաքարերով՝ կրաշաղախով: Եկեղեցու շուրջը տարածվում է ընդարձակ գերեզմանատուն, որը մասամբ քանդված է գյուղի վերակառուցման ու ընդարձակման ընթացքում: Տեղում պահպանված գերեզմանաքարերը գլխավորապես բնական մեծ սալեր են: Գերեզմանոցում, եկեղեցու հարավային կողմում կան երկու մեծ խաչքարեր. երկուսն էլ դրված են պատվանդանի վրա, վարդազույն քարից են և գեղեցիկ քանդակազարդված: Հյուսիսային խաչքարը կանգնեցված է 1290 թվին:

Մի ուրիշ խաչքար էլ գտնվում է գյուղի մեջ, երկու ձորակների միացման վայրում: Սովորական ձևով գեղաքանդակ մեծ խաչքար է, պատվանդանի վրա, կանգնեցրել է Գորգը՝ պատերազմում սպանված իր հայր Վահրամի հիշատակին, 1282 թվականին:

Գրիգոր լուսավորիչ մատուռը գտնվում է Հերհերի հարավային կողմում, այդինների մեջ, լեռնային հեղեղատի աջ

ափին, բարձրություն վրա: Արձանագրությունից երևում է, որ կառուցել է ոմն Գրիգոր, 1296 թվին: Մատուռի շուրջը տարածվում է փոքրիկ գերեզմանոց: Մի խաչքար գտնվում է գյուղից մեկ կիլոմետր դեպի հարավ, ճանապարհի ձախ կողմում: Երկու նման խաչքարեր էլ գտնվում են սրանից մեկ կիլոմետր դեպի հարավ, դարձյալ ճանապարհի ձախ կողմում, իրար կողքի: Դրանք նույնպես սովորական ձևով մշակված և պատվանդան ունեցող քանդակազարդ խաչքարեր են, հավանաբար 13—14-րդ դարերին պատկանող:

Գյուղատեղին տարածվում է Հերհերից մոտավորապես երեք կիլոմետր դեպի հյուսիս, ձորի մեջ, գետակի աջ ափին: Վաղուց վեր է ածված մշակովի հողերի և խոտհարքի. պահպանվել են առանձին շենքերի հետքերը:

Գյուղատեղում եղել է եկեղեցի, որի արևելյան արքիդի մի մասն է պահպանվել՝ շարված կիսատաշ բազալտ քարերով՝ կրաշաղախով: Եկեղեցու այդ մնացորդի մոտ, պատվանդանի վրա կանգնած են երկու մեծ խաչքարեր՝ գեղեցիկ քանդակներով զարդարված:

Գերեզմանոցը ընկած է գյուղատեղից հարավ, գետակի ձախ կողմում, լեռնաշղթայի սեռի վրա, Հերհեր տանող ճանապարհի եզրին: Գերեզմանոցի հարավային կողմում, քարակույտերի վրա ընկած է 1282 թ. մի մեծ և շքեղ մշակված խաչքար:

Հերհերի սահմաններում կան նաև երկու այլ գերեզմանոցներ, որոնցից մեկը գտնվում է գյուղից մոտ կես կիլոմետր դեպի հարավ-արևելք, Կապույտ բերդը տանող ճանապարհի եզրին, սարալանջին, ուր այժմ էլ շարունակվում են թաղումները: Գերեզմանաքարերից ոմանք զարդարված են կենցաղային հետաքրքիր քանդակներով: Տափակ կողերով մշակված մի գերեզմանաքարի երկու ծայրերին քանդակված է Պոռ-յանների տոհմանիշը, իսկ կողերը պատած են շատ գեղեցիկ ու հետաքրքիր կենցաղային զարդաքանդակներով: Գերեզմանոցում որպես տապանաքար օգտագործված են 13—15-րդ դարերի բազմաթիվ խաչքարեր, որոնք բերված են այլ տեղերից: Երկուսը գերեզմանոցը գտնվում է գյուղից մոտ մեկ



կիլոմետր դեպի հարավ-արևելք, Կապուլյտ բերդի հյուսիս-արևելյան կողմում, սարալանջին: Համարյա բոլոր գերեզմանաքարերը ծածկված են հողով, ուստի նրանց մշակմանն ձևերը պարզ չեն. նկատելի են բնական սալերից թույլ կերպով մշակված բազմաթիվ խաչքարեր:

Կապուլյտ բերդը գտնվում է գյուղից մոտ մեկ կիլոմետր դեպի հարավ-արևելք, սարի գագաթին: Լեռան փոքր գագաթը բոլոր կողմերից եզերվում է բարձր քարափներով, որոնց խոցելի-թույլ տեղերն ամրացված են պարիսպներով և վերածված մի անառիկ վայրի: Նկատվում է, որ նա Սյունյաց աշխարհի հնագույն ամրոցներից մեկն է եղել, բայց թե ինչպես է կոչվել հնում, ստույգ հայտնի չէ: Ժողովուրդը նրան Կապուլյտ բերդ է անվանում՝ երևի բլուրը պատող բնական կապտագույն որձաքարի պատճառով: Լեռան գագաթը եզերող քարափներում կան այրեր, որոնք ժայռերի փլման հետևանքով ծածկվել փակվել են: Ամրոցի շրջապատում, լեռան ամբողջ լանջերին, գետնի երեսին թափված են կավե ամանների բեկորներ՝ կարմիր գույնի ներկով, որ բնորոշ են վաղ միջնադարին:

Կապուլյտ բերդի հյուսիս-արևմտյան կողմում, սարալանջին հենված մեծ ժայռի արևմտյան երեսը հարթեցրել և 1149 թվին փոխադրել են մի ընդարձակ արձանագրություն: Ոմն Գրիգոր կրոնավոր պատմում է, որ եկել բնակություն է հաստատել այստեղ եկեղեցու աթոռակալ Գագիկ երեցի տանը և դարձել նրա հոգևոր պաշտոնը ժառանգողը:

Ս. Գևորգ եկեղեցին գտնվում է Հերհերից մոտ երկու կիլոմետր դեպի հարավ: Ըստ արձանագրության կառուցել են Շաշ միայնակյացը և իր եղբայր Մաթուխը, 1297 թվին: Եկեղեցին շատ փոքր է, մատուռի ձևով. հիմնված է բլուրի ժայռոտ բարձր գագաթի վրա, որի հետևանքով եկեղեցին բարձրանում են ամբողջական քարից շինված շորս աստիճան ունեցող սանդուղքով: Հատակագիծը քառանկյունի է, ծածկը թաղակապ, արևելյան կողմից ունի կիսակլոր, փոքրիկ աբսիդ. մուտքն արևմտյան կողմից է՝ շրջանակով ու ճակատակալ բարով: Արևմտյան կողմում ունի բաց սրահ՝ արևմտյան

կողմից առանց պատի. ծածկված է երեք մեծ սալաքարերով, նման մի սալաքար էլ դրված է արևմտյան ճակատին: Ամբողջ շենքը կառուցված է սրբատաշ ավազաքարով: Եկեղեցին սալահատակված է, տանիքը ևս ծածկված է սալաքարերով: Սրահի առջևում, ձորակղզին, մասամբ սրահի մեջ կան հինգ գերեզմաններ՝ մեծ գերեզմանաքարերով, որոնք մշակված են սովորական հարթ ձևով: Գերեզմանաքարերից մեկը 1383 թվի է:

Գյուլաանեղը գտնվում է Հերհերից մոտ երեք կիլոմետր դեպի հարավ, գետակի աջ ափին, սարալանջին: Պահպանվել է նաև հին գերեզմանոցը, ուր կան մի քանի փոքր խաչքարեր՝ պարզ քանդակներով, որոնք բնորոշ են 13—15-րդ դարերին: Մի ուրիշ խաչքար էլ գտնվում է գյուղատեղի հյուսիսային կողմում, Հերհեր տանող ճանապարհից ներքև:

### ԱՌԻՆՁ ԳՅՈՒՂԱՏԵՂ

Ճում էլ կոչվել է Առինջ, որը հիշատակվում է Հերհերի Միոն մենաստանի վրա եղած մի արձանագրության մեջ, 13-րդ դարում: Գյուղատեղի արևմտյան եզրին, լեռնաշղթայի ստորոտում պահպանվել են հին եկեղեցու պատերի հետքեր:





ՀԱՄԱՌՈՏ ՅԱՆԿ ԱՂԱՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ա. Աղբյուրներ.

1. Եղիշեի պատմութիւն Վարդանանց ըստ Անձեւկացեացն օրինակի. Թիֆլիս, 1913 թ.:
2. Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի Հայոց. Ս. Պետերբուրգ, 1879 թ.:
3. Պատմութիւն Նահանգին Սիսական արարեալ Ստեփանոսի Օրբելեան Արքեպիսկոպոսի Սիւնեաց. Թիֆլիս, 1913 թ.:
4. Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցոյ. Վաղարշապատ, 1884 թ.:

բ. Գրականություն.


1. 2. Ղեւոնդ Մ. Ալիշան — Սիսական. — Տեղագրութիւն Սիւնեաց Աշխարհի. Վենետիկ, 1893 թ.:
2. Ստորագրութիւն Հին Հայաստանեայց Տեառն Հ. Ղովաս վարդապետի Ինճիճեան. Վենետիկ, 1822 թ.:
3. Զալալեան Սարգիս եպիսկոպոս — Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն ր. Տիֆլիս, 1858 թ.:
4. Մ. Արքեպ. Սմբատեան. — Նկարագիր ս. Կարապետի վանից. Տիֆլիս, 1906 թ.:
5. Մ. Փափազեան. — Հնութիւնք վանորեկց, գիրք 3. Վաղարշապատ, 1890 թ.:
6. Կ. Կոստանեանց. — Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913 թ.:
7. Պրոֆ. Հ. Մանանդյան. — Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները. Երևան, 1936 թ.:
8. Ազգագրական հանդես, գիրք Գ., Թիֆլիս, 1898 թ.:
9. » » » 12 » 1915 թ.:
10. » » » 26 » 1917 թ.:
11. » Փորձ » 1877/78 թթ. №№ 1, 2, 3 և 4
12. » » 1879 թ. №№ 1, 9
13. » » 1880—1881 թթ.:

14. Шопен — Исторические памятники состояния Армянской области присоединения к Российской империи С.-Петербург, 1852 г.
15. Материалы по археологии Кавказа, вып. XIII. Москва, 1916 г.
16. Записки Тифлиского общества любителей археологии, вып. I. Тифлис.
17. В. М. Арутюнян и С. А. Сафарян — Памятники армянского зодчества. Москва, 1952 г.
18. С. Х. Мнацакян — Архитектура армянских притворов. Ереван, 1952 г.




ԻԼՅՈՒՍՏՐԱՑԻԱՆԵՐ





3. Ամաղու նորավանք. — Կարապետի եղիկեցու արևելյան նավատը.






4. Ամաղու նորավանք.— Գավթի արևմտյան մուտքը և լուսամուտը.



9. Ամաղու նորավանք.— Բուրբեղաշեն Եկեղեցու գմբեթի սյունների բեկորները.





10. Ամսրու նորավանք. — Բուրբիպզենն էկեղեցու մասնը.




13. Ամսրու նորավանք. — Խաչքար.






14. Ամաղու նորավան. — Խաչքար.



15. Խաչքի. — Քարտիկի վանքը հարավ-արևելքից.






16. Ագարակածոր. — Կաճուրջ.




19. Վերնաշեն. — Թանաթի վանքի և Նշան Եկեղեցու մուտքը.





20. Վերնաշեն. — Սպիտակավոր վանքի ընդհանուր տեսաձևն հարավ-արևելքից.




21. Վերնաշեն. — Սպիտակավոր վանքի Աստվածածին եկեղեցու մուտքը.






22. Վերնաշեն.— Սպիտակավոր վանքի զանգակատունը.




23. Շատին.— Շատիվանքի ընդհանուր հատակագիծը.






24. Շաախն. — Շաախլանի ընդհանուր տեսարան հարավ-արևմուտքից.



25. Եղեգիս. — Ցախաց քար վանքի արևմտյան խմբի հատակագիծը.






26. Նղեգիս.— Յախաց քար վանքի ս. Կարապետ եկեղեցու արևելյան նակատը.



29. Ալայագ.— Ստեփանոս եկեղեցու արևելյան նակատը.





30. Ալայազ. — Ս. փանոս եկեղեցին արևմուտքի




31. Ալայազ. — Ս. Նշան եկեղեցին հյուսիս-արևմուտքից.





32. Ալալազ. — Ս. Նշան եկեղեցին հարավ-արևելքից.




33. Ալալազ. — Խաչքար-մահարձան.






34. Ալայազ.— Մահարձան:




37. Ղզղյուղ.— Արսեհի վանքի ընդհանուր տեսքը հարավ-արևելքից.






38. Գլղցնոյ. — Առաւելի վանքի ընդհանուր տեսիլ հարավ-արեւմուտից.



39. Լեւնանցի: — Սուրբ Ամբաստան ընդհանուր տեսարան.





40. Առնանցի.— Սուրբնա քարավանատան հատակագիծը.



43. Գոմուր.— Մահարձանը հյուսիս-արևմուտքից.





44. Գումուր. — Մահարձանը հյուսիս-արևելից.



45. Գեղեվազ. — Գեղեվաճեփի Ստեփանոս Եկեղեցու հարավային ճակատը.





46. Ներքեր.— Սիոնի վանքը արևմուտքից.

### ԲՈՎԱՆԳԱՌԻԹՅՈՒՆ

Պատմական համառոտ ակնարկ . . . . .	3
Հուշարձանների նկարագրությունը . . . . .	18
Արենի (Արփա) գյուղ . . . . .	20
Ամաղու գյուղ . . . . .	21
Ամաղու Նորավանք . . . . .	29
Խաչիկ գյուղ . . . . .	32
Գնիշիկ գյուղ . . . . .	34
Գանձակ (Ենգիջա) գյուղ . . . . .	36
Բուրբարերդ (Ղուրդ-ղուլաղ) գյուղ . . . . .	37
Ազարակաձոր (Այար) գյուղ . . . . .	38
Մալիշկա գյուղ . . . . .	39
Վերնաշեն (Բաշքենդ) գյուղ . . . . .	45
Գլաձոր (Օրթաբենդ) գյուղ . . . . .	45
Միկոյան (Քեշիշքենդ) գյուղ . . . . .	46
Շատին գյուղ . . . . .	50
Սղեգիս (Երդափին) գյուղ . . . . .	56
Հորբատեղ գյուղ . . . . .	57
Այալազ գյուղ . . . . .	64
Ղալուշուղ գյուղ — Կնեվանք . . . . .	65
Կալասար գյուղ . . . . .	66
Ղալգյուղ (Այասախ) գյուղ — Արատեսի վանք . . . . .	69
Ղարաղայա գյուղ . . . . .	69
Ղոթուրվան գյուղ . . . . .	70
Գյուլիթուղ գյուղ . . . . .	70
Ղարախուր գյուղ . . . . .	71
Հորս գյուղ . . . . .	72
Թառաթուփ գյուղ . . . . .	72
Լեռնանցք (Աղբենդ) գյուղ . . . . .	72
Սուվեմա (Մելիմի) քարավանատուն . . . . .	72
Քարագլուխ գյուղ . . . . .	75



Աղալինաձոր (Այնազուր) գյուղ . . . . .	77
Ռինդ գյուղ . . . . .	79
Մարտիրոս գյուղ . . . . .	81
Աղիգբեկով (Փաշալու) գյուղ . . . . .	86
Ազադեկ գյուղ . . . . .	87
Փոռ գյուղ . . . . .	88
Գյարբուտ գյուղ . . . . .	88
Գոմուր գյուղ . . . . .	89
Ախտա գյուղ . . . . .	91
Ջուլ գյուղ . . . . .	91
Թերփի գյուղ . . . . .	93
Ջերմուկ կուրորտային ավան . . . . .	94
Կեչուտ (Ղուշչի) գյուղ . . . . .	95
Գնդեվազ գյուղ . . . . .	97
Սոյլան գյուղ . . . . .	101
Կարմրաշեն (Քյոթանլու) գյուղ . . . . .	101
Հերհեր գյուղ . . . . .	104
Առինջ գյուղատեղ . . . . .	109
Համառոտ ցանկ աղբյուրների և գրականության . . . . .	110
Իլյուստրացիաներ . . . . .	113

Խմբագիր՝ Մ. Հատարյան  
 Տեխնիկական խմբագիր՝ Խ. Սամվելյան  
 Կոնտորի սրբագրիչ՝ Վ. Ազատյան

ՎՖ 08628: Պատվեր 2017:  
Տիրած 2000:  
 Հանձնված է արտադրության 28/VIII 1954 թ.:  
 Ստորագրված է տպագրության 2/IV 1955 թ.:  
 Քուլթ՝ 84×108<sup>1/32</sup>: Տպագր.՝ 7,25 մամուլ, հրատ.՝ 7,5 մամուլ:  
 Գինը՝ 6 ու 75 կ.:  
 ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրության Գլխահրատի Պոլիգրաֆկոմբինատ,  
 Տեղյանի 91, Երևան, 1954:



ՀՀ Ազգային գրադարան



NL0683621



Գ Ի Ն Ը Ե Ռ. 75 Կ.

2013

2005